

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԶՈՐԱԿ ՌԱՖԻԿԻ

**ԱՆՁԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ
ՊԱՏԱՆԵԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ**

**ԺԹ.00.01. - «ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ
ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ»
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ
ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ ՀԱՅՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ**

ԵՐԵՎԱՆ

2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

**ԳԼՈՒԽ 1. ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ՈՐՊԵՍ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹԻ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 11**

1.1. Ինքնուրույնություն, ինքնորոշում, անկախություն. հասկացությունների
ճշգրտում 11

1.2. Ինքնուրույնության և դրա տարիքային զարգացման
հետազոտությունները 16

1.3. Ինքնուրույնության պահանջմունքի էությունը, ձևավորումը և
զարգացումը..... 30

**ԳԼՈՒԽ 2. ՊԱՏԱՆԵԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ
ՀԱՍՆԵԼՈՒ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՅՍ ՏԱՐԻՔՈՒՄ 35**

2.1. Զարգացման ճգնաժամերի վերաբերյալ պատկերացումները
հոգեբանության մեջ..... 35

2.2. Պատանեկությունը որպես տարիքային փուլ..... 45

2.3. Պատանեկան ճգնաժամի հետազոտությունները 56

2.4. Ինքնուրույնության պահանջմունքի առանձնահատկությունները
պատանեկան տարիքում և դրա ֆրուստրացիան 68

**ԳԼՈՒԽ 3. ՊԱՏԱՆԵԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ, ՊԱՏԱՆԻՆԵՐԻ
ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԵՎ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ
ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔԻ ՖՐՈՒՍՏՐԱՑԻԱՆ. ԷՄՊԻՐԻԿ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ 75**

3.1. Էմպիրիկ հետազոտության ծրագիրը և մեթոդական համակարգը .	75
3.2. Պատանեկան տարիքում ինքնուրույնության և դրան հասնելու դժվարությունների էմպիրիկական հետազոտության ընթացքը.....	767
3.3. Պատանեկան ճգնաժամի ընթացքի առանձնահատկությունների էմպիրիկական հետազոտություն.....	98
3.4. Ինքնուրույնության պահանջմունքի ֆրուստրացիան պատանեկան տարիքում և այս տարիքի ճգնաժամի ընթացքը.....	107
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	113
ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ	115
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	117
ՀԱՎԵԼՎԱԾ	129

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի հրատապությունը – Ինքնուրույնությունը համարվում է հասարակության մեջ անձի արդյունավետ գործառույնը, նրա բարեկեցությունն ապահովող կարևորագույն գործոններից մեկը(Է. Դեքի, Ռ. Ռայան և ուրիշներ), որը նաև դաստիարակության, զարգացման հիմնական նպատակներից է հանդիսանում: Միևնույն ժամանակ, ինքնուրույնությունն անձի կյանքում կարևոր նշանակություն ունեցող պահանջմունք է, որի ֆրուստրացիան լուրջ հետևանքներ է ունենում անձի հոգեկան առողջության, զարգացման գործընթացի, սոցիալական հարմարման վրա: Ինքնուրույնությունը հատուկ նշանակություն է ձեռք բերում հատկապես պատանեկան տարիքում: Այս տարիքը կյանքի ամենավճռական փուլերից մեկն է՝ կախյալությունից ինքնուրույնության անցման վերջին շրջանը, որի ընթացքում պատանին հոգեբանորեն և սոցիալական առումներով փորձում է անկախանալ (կենսաբանական անկախացումը տեղի է ունենում ծննդից հետո), ընտրել իր կյանքի ուղին: Տարիքային այս փուլը կենցաղային գիտակցության մեջ հայտնի է որպես հայրերի և զավակների բախման, հասուն կյանք մտնելու շրջան: Արևմտյան հոգեբաններն այս ճգնաժամը կամ տարիքային անցումը բնութագրում են որպես «բունը լքելու» շրջան(Գ. Շիհի, Դ. Լևինսոն և ուրիշներ): Հոգեբուժության մեջ այս տարիքը հայտնի է որպես հոգեկան հիվանդությունների, ինքնասպանությունների կտրուկ աճի շրջան: Վիճակը սրված է հատկապես բանակում, որտեղ մեծ թիվ են կազմում պատանեկան տարիքի զինվորները և պատանեկան ճգնաժամին միանում են մի շարք այլ սթրեսոգեն գործոններ: Նշված հանգամանքները խիստ հրատապ են դարձնում հետազոտությունը ոչ միայն զուտ գիտական, այլև կիրառական տեսանկյուններից՝ հոգեբանական խորհրդատվության, հոգեթերապիայի և հոգեբուժության ոլորտներում:

Ինքնուրույնության հիմնախնդիրը, ինչպես նաև պատանեկան տարիքը և ճգնաժամը չնայած իրենց կարևորությանը չափազանց աղոտ են հետազոտված թե՛ տեսական, և թե՛ էմպիրիկական առումներով: Դեռևս հստակորեն տարբերակված չեն այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են անկախությունը, ինքնուրույնությունը, ինքնավարությունը: Խիստ աղոտ է հետազոտված ինքնուրույնության օնտոգենետիկ զարգացումը, ինքնուրույնության պահանջմունքի էությունը, դերն անձի կյանքում, ֆրուստրացիան և դրա հետևանքները:

Խիստ աղոտ է հետազոտված նաև պատանեկան ճգնաժամը: Խորհրդային շրջանում այս ճգնաժամն առանձնացվել էր և տարբերակվել դեռահասության ճգնաժամից դեռևս Լ.Ս.Վիգոտսկու կողմից, սակայն քիչ թե շատ հիմնավոր հետազոտության չէր ենթարկվել: Արևմուտքում հստակորեն չեն տարբերակվում դեռահասության ու պատանեկան շրջանները և ճգնաժամերը, ինչի հետևանքով էլ անհասկանալի է, թե, ասենք, Է. Էրիքսոնի կամ Գ. Շիհիի կողմից նկարագրվող ճգնաժամերը դեռահասության, թե՛ պատանեկան տարիքներին են վերաբերում: Արդյունքում մինչև օրս անհասկանալի է մնում, թե որո՞նք են պատանեկան ճգնաժամի պատճառները, հոգեբանական մեխանիզմները, հանգուցալուծման առանձնահատկությունները, այն հանգամանքները, որոնք մեղմում կամ սրում են ճգնաժամը:

Այսօր դեռևս մշակված չեն զարգացման ճգնաժամերի ընդհանրապես և մասնավորապես պատանեկան ճգնաժամի պարագայում մանկավարժական և հոգեբանական աշխատանքների և հոգեթերապիայի ստրատեգիան և տակտիկան:

Հետազոտության օբյեկտը - անձի ինքնուրույնության և պատանեկան ճգնաժամի կապն է:

Հետազոտության առարկան - Պատանեկան տարիքում ակտուալացած ինքնուրույնության պահանջմունքի և դրա բավարարման առանձնահատ-

կությունների դերը պատանեկան ճգնաժամի առաջացման և ընթացքի գործում:

Հետազոտության նպատակը – պարզել պատանեկան ճգնաժամը պայմանավորող զարգացման օրինաչափությունները, մասնավորապես այս տարիքում ակտուալացող ինքնուրույնության պահանջմունքի և դրա ֆրուստրացիայի դերը ճգնաժամի առաջացման գործում:

Հետազոտության խնդիրները – հետազոտության ընթացքում մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները.

1. Վերլուծության ենթարկել պատանեկան տարիքի վերաբերյալ ժամանակակից պատկերացումները, ուրվագծել այս տարիքի առանձնահատկությունները, սահմանները, տարբերությունները դեռահասության տարիքից:
2. Վերլուծել պատանեկան ճգնաժամի հետազոտությունները:
3. Ճշգրտել ինքնուրույնության որպես հոգեկան իրողության առանձնահատկությունները:
4. Հետազոտության ենթարկել պատանեկան տարիքում ինքնուրույնության առանձնահատկությունները:
5. Էմպիրիկական հետազոտության ենթարկել ինքնուրույնության պահանջմունքի բավարարման առանձնահատկությունների դերը պատանեկան ճգնաժամի առաջացման գործում:
6. Հետազոտության արդյունքների հիման վրա մշակել պատանեկան տարիքում հոգեբանամանկավարժական աշխատանքների հանձնարարականներ:

Հետազոտության վարկածը - պատանեկան ճգնաժամի առաջացման գործում կարևոր դեր են խաղում ինքնուրույնության հասնելու, անկախանալու օբյեկտիվ և սուբյեկտիվ դժվարությունները, ինքնուրույնության պահանջմունքի ֆրուստրացիան: Ճգնաժամը մեղմ է ընթանում այն դեպքերում, երբ ինքնուրույն գոյության անցնելու օբյեկտիվ և սուբյեկտիվ

խոչընդոտները տարբեր հանգամանքների բերումով քիչ են կամ հեշտությամբ հաղթահարվում են և հակառակը՝ ճգնաժամը սրվում է, երբ պատանին ի վիճակի չի լինում հասնել հարաբերական անկախության և ինքնուրույնության:

Հետազոտության մեթոդոլոգիական և տեսական հիմքերը - Մեր հետազոտության հիմքում ընկած են դետերմինիզմի, զարգացման և համակարգայնության սկզբունքները: Մենք այն կարծիքին ենք, որ հոգեբանական ցանկացած իրողության, այդ թվում նաև ճգնաժամերի հիմքում ընկած է պոլիդետերմինիզմը, այսինքն պայմանավորվածությունը բազմաթիվ հանգամանքներով: Պատանեկան ճգնաժամն էլ մենք պայմանավորում ենք մի շարք գործոններով, որոնցից մեկը ինքնուրույնության հասնելու դժվարություններն են: Հիմնվելով զարգացման սկզբունքի վրա մենք գտնում ենք, որ օնտոգենեզի կայուն շրջաններն ընդհատվում են անկայուն, անցումային, ճգնաժամային շրջաններով, որոնք տարբեր սրությամբ կարող են ընթանալ:

Համակարգայնության սկզբունքից ելնելով, մենք անցումային շրջանները դիտումն ենք որպես ներքին և արտաքին հանգամանքների, պայմանների, գործոնների ազդեցությամբ տեղի ունեցող համակարգային գործընթաց:

Մեր հետազոտության տեսական հիմքերն են հանդիսանում Հ. Ֆրանկֆուրտի, Հ. Լինչմանի, Ջ. Բորդազեսի, Գ. Պրիգինի և այլոց ինքնուրույնության հիմնախնդրի առընչությամբ առաջ քաշած տեսական դրույթները, ինչպես նաև Լ.Ս. Վիգոտսկու, Է. Էրիքսոնի, Գ. Շիհիի, Դ. Լևինսոնի, Ե. Սոլդատովայի, Ս. Խուդոյանի ճգնաժամերի տեսությունները:

Հետազոտության մեթոդները. կիրառվել են զրույցի, հարցման(մշակվել են հարցարաններ պատանիների համար) մեթոդները, ինքնուրույնության որոշման, և Ջ. Ռոթթերի վերահսկման տեղակայման թեստերը:

Հետազոտության արդյունքների հավաստիությունն ապահովվել է մեթոդոլոգիական և տեսական բավարար հիմքերի ստեղծմամբ, հետազոտության առարկային համապատասխան մեթոդական համակարգի

ընտրությամբ, կիրառված էմպիրիկական մեթոդների բազմազանությամբ, մեծ քանակությամբ հետազոտվողների ընդգրկմամբ, հետազոտության արդյունքների մաթեմատիկական- վիճակագրական վերլուծությամբ(կիրառվել է Պիրսոնի կորեյացիոն վերլուծության մեթոդը):

Էմպիրիկական հետազոտություններն իրականացվել են 2010- 2013 թթ. Գյումրիի Մ. Նալբանդյանի անվ. Պետական մանկավարժական ինստիտուտի և Գյումրիի «Պրոգրես» համալսարանի բակալավրիատի և մագիստրատուրայի հումանիտար և բնագիտական ֆակուլտետների 224 ուսանողների (17-22 տարեկան 121 աղջիկ և 103 տղա):

Հետազոտության գիտական նորույթը և տեսական նշանակությունը- հետազոտությամբ նախ և առաջ բացահայտվել է պատանեկան ճգնաժամի առաջացման կարևորագույն պատճառներից մեկը՝ ինքնուրույնության հասնելու դժվարությունները, այս պահանջմունքի ֆրուստրացիան: Հիմնավորվել է, որ պատանեկան ճգնաժամի ընթացքի սրությունը մեծապես պայմանավորված է ինքնուրույնության պահանջմունքի ֆրուստրացվածության աստիճանով: Ուրվագծվել են ինքնուրույնության զարգացման օնտոգենետիկ առանձնահատկությունները և պատանեկան տարիքում ինքնուրույնության բնութագիրը: Ցույց է տրվել, որ գոյություն ունեն ինքնուրույնության տարբեր ոլորտներ (կենսաբանական, հոգեբանական, սոցիալական, տնտեսական ինքնուրույնություն): Մանրամասն նկարագրվել է պատանեկան ճգնաժամի ախտանշանների համալիրը, տարբեր ախտանշանների դրսևորման հաճախականությունը:

Հետազոտության կիրառական նշանակությունը – հետազոտության արդյունքները կարող են կիրառվել պատանիների հետ իրականացվող հոգեբանական աշխատանքների՝ հոգեթերապիայի, հոգեբանական խորհրդատվության, պատանիների դաստիարակության ոլորտներում: Մեր կողմից մշակված հարցարանները կարող են կիրառվել պատանեկան ճգնաժամի, պատանեկան տարիքում ինքնուրույնության պահանջմունքի

ֆրուստրացվածության աստիճանի ախտորոշման մեջ: Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել «Ինքնուրույնություն», «Պատանեկան տարիք», «Պատանեկան ճգնաժամ» թեմաներով դասընթացների և դասընթացների բաժինների մեջ:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները

1. Ինքնուրույնության պահանջմունքն անձի հիմնարար պահանջմունքներից է, այն ունի իր հակադիր՝ կախյալության պահանջմունքը:

2. Յուրաքանչյուր տարիքային փուլում ինքնուրույնությունն ունի իր առանձնահատկությունները, դրսևորման մակարդակները, այսինքն անձի զարգացման հետ ինքնուրույնության ավելի ու ավելի բարձր դրսևորումներ ու մակարդակներ են ի հայտ գալիս:

3. Ինքնուրույնության դրսևորման ամենավերջին մակարդակն ինքնավարությունն է, որի պահանջմունքն առաջատար է դառնում պատանեկան տարիքում և միտված է ապահովելու պատանու անցումը հասունության:

4. Ինքնուրույնության պահանջմունքի ֆրուստրացիան պատանեկան ճգնաժամի առաջացումն ու ընթացքը պայմանավորող հիմնական գործոններից մեկն է:

Ատենախոսության փորձաքննությունը- հետազոտության արդյունքները ներկայացվել և քննարկվել են Խ. Աբովյանի անվ. Պետական մանկավարժական համալսարանի Հոգեբանության տեսության և պատմության, Գյումրիի Մ. Նալբանդյանի անվ. Պետական մանկավարժական ինստիտուտի և Գյումրիի

«Պրոգրես» համալսարանի հոգեբանության ամբիոնների նիստերում, Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ հիմնադրման 90-ամյակին նվիրված և «Դպրոցական հոգեբանական ծառայության հիմնախնդիրները» կոնֆերանսումներում:

Ատենախոսության կառուցվածքը - Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, գրականության ցանկից(132 անուն) և հավելվածից: Աշխատանքում ներկայացված են ինը հիստորամ, մեկ աղյուսակ:

ԳԼՈՒԽ 1. ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ՈՐՊԵՍ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.1. Ինքնուրույնություն, ինքնորոշում, անկախություն. հասկացությունների ճշգրտում

Հոգեբանական գրականության մեջ անձի ինքնուրույնության հետ կապված երևույթները հաճախ բնութագրվում են ոչ միայն «ինքնուրույնություն», այլև «ինքնորոշում», «անկախություն», «ինքնավարություն» հասկացություններով: Լեզվաբանական բառարաններում ինքնուրույն հասկացությունը բնութագրվում է հետևյալ իմաստներով.

«1. Որևէ մեկից կամ որևէ բանից կախման մեջ չգտնվող, անկախ...

2. Իր սեփական արժեքը, դիրքը, տեղն ունեցող, մյուսների շարքից զատվող, առանձին, առանձնահատուկ:...

3. Անկախ՝ ինքն առանց ուրիշների օգնության գործելու, մտածելու, վարվելու ընդունակ: ...

4. Կողմնակի ազդեցություններից՝ ճնշումից՝ կաշկանդումից ազատ, ինքնատիպ:...» [1, էջ 50]:

«Ինքնորոշվել» հասկացության մեր հիմնախնդրի հետ առընչվող իմաստը հետևյալն է.«...Իր տեղը, դերը, դիրքը գտնել:» [1, էջ 500]: «Անկախ» հասկացությունը բնութագրվում է որպես ուրիշից կախում չունեցող, ինքնուրույն [1, էջ 60]:

Դ. Դմիտրևի ռուսերեն բացատրական բառարանում տրվում է ինքնուրույնության հետևյալ սահմանումը. «...Ինքնուրույն են համարում այն մարդուն, որը որոշակի գործունեություն իրականացնելու համար ունի բավարար հասունություն, նախաձեռնողություն և անկախություն...» [30, էջ 1165]:

Ռուսերեն բառարաններում ինքնորոշման մեկնաբանությունը հետևյալն է. «Ինքնորոշումը մարդու կողմից սեփական յուրատիպության, հնարավորությունների, ընդունակությունների հաստատումն է, ինքն իրեն գնահատելու նորմերի, չափանիշների, իր համար նշաձողի, արժեքների ընտրությունը՝ ելնելով հասարակության և սեփական անձի պահանջներից» [78, էջ 511]:

Ինքնորոշումը, ըստ «Լետոպիսի ռու» հանրագիտարանի, «...ինքն իրեն, հասարակության մեջ իր տեղը, կյանքում իր կոչումը հասկանալու ակտիվ գործընթաց է: Ինքնորոշումը անձի զարգացման բարդ, բազմամակարդակ գործընթաց է» [68]: Ըստ որում, տարբերակվում է «Անձնային ինքնորոշում հասկացությունը». «Անձնային ինքնորոշումը սեփական անձի տեղի որոշումն է ըստ հասարակության մեջ մշակված (և տվյալ մարդու կողմից ընդունված) անձի կայացման չափանիշների և այդ չափանիշներին համապատասխան անձի հետագա գործնական ինքնաիրացումը» [68]:

Անձի ինքնավարությունը «Վիկիպեդիա» հանրագիտարանում բնութագրվում է որպես. «Ինքնուրույն գոյություն, որը որոշվում է սեփական բանականությամբ և խղճով(Կանտ). անձի որպես բարոյական սուբյեկտի ընդունակությունն սեփական օրենքների հիման վրա ինքնորոշվելու» [9]:

Մեկ այլ տեղում ինքնավարությունը սահմանվում է որպես. «Մասնագիտական և անձնային ինքնորոշման, ինքն իրեն որպես ընտրության և կենսական ակտիվության սուբյեկտի դրսևորման ընդունակություն: Դիտարկվում է սոցիալական հաջողության միակ նախապայմանը. այն կարող է հակադրվել գիտելիքների, կարողությունների, հմտությունների ռեյատիվությանը»[8]:

Հոգեբանական ոչ բոլոր բառարաններում են «ինքնուրույնություն», «ինքնորոշում», «ինքնավարություն» և «անկախություն» հասկացությունները ներկայացված, ինչը վկայում է, որ այս հասկացությունները հիմնական հոգեբանական հասկացությունների շարքին չեն դասվում: Այսպես, Վ. Պ.

Զինչենկոյի և Բ.Գ. Մեշչերյակովի «Մեծ հոգեբանական բառարանում» «ինքնորոշում» հասկացությունը դիտվում է որպես «ինքնանույնականություն» հասկացության հոմանիշ և մեկնաբանվում այդ հասկացության բնութագրերով: Այնուամենայնիվ մի շարք բառարաններում այս հասկացությունները ներկայացված են: Այսպես. ինքնուրույնությունը Ս. Գոլովիչի Պրակտիկ հոգեբանի բառարանում սահմանվում է որպես «...Անձի ընդհանրացված հատկություն, որը դրսևորվում է նախաձեռնողության, քննադատականության, ադեկվատ ինքնագնահատականով և սեփական գործունեության և վարքի անձնային պատասխանատվության ձևով» [24]:

«Անկախությունը» հոգեբանական բացատրական բառարանում բնութագրվում է որպես. «...Սեփական կարծիքի վրա հիմնվելու, այլ մարդկանց հետ մրցելու, մրցակցելու միտում, ծայրահեղ դրսևորման դեպքում՝ թշնամանք» [57]: Ինքնորոշումը սահմանվում է որպես «Պրոբլեմային իրավիճակներում սեփական դիրքի հաստատման գիտակցված ակտ» [69, էջ 75]:

Մեկ այլ բառարանում ինքնորոշումը բնութագրվում է որպես «...Մարդու կողմից «Ով եմ ես» հարցի պատասխանի որոնում և բացահայտում: Ինքնորոշումը կարող է լինել ներխմբային՝ մարդկանց շրջանում սեփական դերի գիտակցելը և ձեռք բերելը, մասնագիտական՝ մասնագիտությունների համակարգում սեփական տեղի որոնում և բացահայտում, սեռային՝ սեփական անձը որպես այս կամ այն սեռի ներկայացուցիչ գիտակցելը, ազգային՝ սեփական անձի նույնացումը իր ժողովրդի հետ.. Ընդհանուր առմամբ ինքնորոշումը կարելի է սահմանել որպես աշխարհում սեփական տեղը որոնում և բացահայտում: Այդ որոնումը տառապալից է և հաճախ անհաջող...» [78, էջ 524]:

Նույն բառարանում ինքնավարությունը սահմանվում է որպես. «... Անձի, սեփական համոզմունքների հիման վրա ինքնորոշվելու ընդունակություն» [78, էջ 10]:

Գիտական գրականության մեջ «ինքնորոշում», «անկախություն», «ինքնավարություն» («ինքնուրույնություն» հասկացության մեկնաբանությունները ներկայացրել ենք ստորև) հասկացությունների մեծ բազմազանության կարելի է հանդիպել:

Ի. Կոնը անկախությունը դիտում է որպես անձնային հատկություն՝ հետևյալ բնութագրերով.

ա/ առանց ուրիշների օգնության որոշումներ կայացնելն ու իրականացնելը,

բ/ պատասխանատվությունը,

գ/ համոզվածություն, որի իրականացվող վարքի ձևը հնարավոր է, բարոյական առումով ընդունելի [112, էջ 58]:

Ի. Բոուլբին գտնում է, որ երեխայի զարգացման նպատակը անկախ դառնալն է: Հեղինակը գտնում է, որ երեխայի մեջ փոքր հասակում առկա է կախվածության զգացողություն, որը տարիների հետ նվազում է արթնացնելով անկախության զգացումը: «Երբ երեխան սկսում է քայլել և խոսել, - գրում է հեղինակը,- ...նշանակում է նա խիստ կախվածությունից հասնում է հարաբերական անկախության...» [97, էջ 590]:

Հոգեբանության մեջ տարբերակվում է անձի հուզական կախյալությունը և անկախությունը: Հուզական անկախությունը բնութագրվում է՝ «Կապվածության, խրախուսանքի արժանանալու, մխիթարվելու շարունակական և ճնշող պահանջմունքներից ազատ լինելով» [99, էջ 58]:

Հոգեբանական գրականության մեջ հիմնականում վերը ներկայացված ձևով է բնութագրվում ինքնորոշումը: Այսպես, Կ. Աբուլխանովա-Սլավսկայան ինքնորոշումը սահմանում է որպես հասարակության մեջ սեփական տեղի գիտակցում [4]:

Ինքնորոշումը մեկնաբանվում է որպես սեփական կյանքի իմաստի ցանկությունների բացահայտում, սեփական կյանքն ինքնուրույն կառուցելու կարողություն [71 էջ. 65]:

Լ.Ի. Բոժովիչը ինքնորոշման մեջ կարևորում է մասնագիտական կողմնորոշման պահը: Հեղինակն ինքնորոշումը դիտարկում է որպես պահանջմունք, որն արթնանում է վաղ պատանեկան տարիքում և դրդում ձևավորելու աշխարհայացք և սեփական ես-ի մասին պատկերացումների համակարգ [15]:

Ինքնավարության հիմնախնդիրը առաջին անգամ բարձրացվել է փիլիսոփայության մեջ: Ի. Կանտը ինքնավար է համարում այն մարդուն, ով ի վիճակի է գործել առանց կողմնակի ազդեցությունների:

Դ. Լիթլը ինքնավարությունը բնութագրում է որպես ընդունակություն, որը քննադատական ներհայեցողության, որոշումներ կայացնելու և իշնքնուրույն գործելու հնարավորություն է տալիս մարդուն [116]:

Մի շարք գիտնականներ ինքնուրույնությունը (Կ. Յունգ, Դ. Լեոնտև և ուրիշներ) դիտարկում են որպես անձի զարգացման բարձրագույն մակարդակ, որի պարագայում նա ինքն է իր գոյության օրենքները կառուցում, ազատ ընտրություն է կատարում անկախ իր վրա ազդող ներքին և արտաքին ներգործությունների (Է. Դեսի և Ռ. Ռայան): Ըստ որում, մի շարք հեղինակներ (Է. Դեսի և Ռ. Ռայան) ինքնուրույնությունը դիտում են որպես բնածին հատկություն, որը սերտորեն կապված է և պայմանավորված է ինչպես կամքով, այնպես էլ անձի հուզական և մոտիվացիոն ոլորտներով [28]:

Ըստ Օ. Ա. Սերգեևայի անձի ինքնուրույնությունը դիտվում է որպես «...Անձի գոյության ձև, որի ինտեգրալային էությունը դրսևորվում է անձի հետևյալ բնութագրերում. ինքնուրույն նպատակադրում, վարքի գիտակցվածություն, զարգացած ներհայեցողություն, մտածողության և գործունեության ճկունություն և ստեղծագործականություն: Այն (ինքնուրույնությունը- Ջ.Խ.) չի հանգեցվում ոչ անկախությանը, ոչ էմանսիպացիային, այլ հանդիսանում է անընդհատ փոփոխվող աշխարհում անձի հարմարման մեխանիզմ, որով որոշվում է հաջողությունը անձնային և մասնագիտական զարգացման գործընթացում» [72, էջ 8]:

Ինչպես տեսնում ենք ինքնուրույնությանը մոտ իմաստ ունեցող հասկացությունների վերը ներկայացված սահմանումներից, դրանց մեծ մասում նշված հասկացությունների տարբերակիչ բնութագրերը չեն ներկայացվում, ինչի հետևանքով հաճախ դժվար է լինում հստակորեն տարբերակել, թե կոնկրետ ինչով են տարբերվում այդ հասկացությունները: Ներկայացված սահմանումներում «ինքնուրույնությունից» հստակ տարբերակված կարելի է համարել միայն «ինքնորոշում» հասկացությունը(չնայած այս հասկացության որոշ սահմանումներում ինքնորոշումը բնութագրվում է որպես սեփական կյանքն ինքնուրույն կառուցելու կարողություն), իսկ մյուսները՝ «ինքնավարությունը», «անկախությունը» իմաստներով գրեթե նույնն են: Միևնույն ժամանակ դրանց մեջ նուրբ, սակայն հստակ տարբերություններ, տարբերակիչ բնութագրեր կարելի է առանձնացնել: Այսպես, «Անկախություն» հասկացության մեջ ուրիշի ներգործություններից ազատ լինելու հանգամանքն է շեշտված:

Բնականաբար, անկախությունն ու ինքնուրույնությունը սերտորեն կապված և փոխապայմանավորված են՝ չի կարող մարդը լինել անկախ առանց ինքնուրույն լինելու, կամ էլ ինքնուրույն՝ առանց անկախ լինելու, իսկ «ինքնավարություն» հասկացության մեջ հիմնական իմաստային ծանրաբեռնվածությունը ինքնակառավարման երևույթի վրա է:

1.2. Ինքնուրույնության և դրա տարիքային զարգացման

հետազոտությունները

Ինքնուրույնությունը որպես հոգեբանական երևույթ հոգեբանության մեջ բավական թույլ է հետազոտված: Միևնույն ժամանակ, ինչպես նշում է Ի. Կոնը, Անժի զարգացման և անձնային աճի գործընթացում մեծ դեր է խաղում

ինքնուրույնության գործոնը, այդ է պատճառը, որ ինչպես նշում է Ի Կոնը, առանց ինքնուրույնության չի կարող զարգանալ մարդը [45]: Ըստ մեկ այլ հեղինակի՝ «...ինքնուրույնությունը կամ ավելի ճիշտ ինքնուրույն գործողություններ իրականացնելու միտումը մարդկային էության մի մասն է և մենք բոլորս, մարդ տեսակի ներկայացուցիչներս, նախատրամադրված ենք որոշակի իրավիճակներում փորձարկելու և կիրառելու այս հզոր ունակությունը» [100, էջ 248]:

Հիմնախնդիրը կարևորվում է ինչպես հոգեբանության այնպես էլ փիլիսոփայության մեջ: Այս առիթով Դ. Նեդդերմեյդերը նշում է, որ «ինքնուրույնությունը և ինքնավստահությունը ճանապարհ են ստեղծում մարդու զարգացման համար» [122]:

Ե. Գ. Բարանովի խոսքերով «ինքնուրույնությունը բնավորության գիծ է, որը թույլ է տալիս անձին կառուցել իր վարքը՝ անկախ խմբի ճնշումից ...» [14, էջ 289]: Ընդհանուր առմամբ «ինքնուրույնություն» հասկացությունը հաճախ համեմատվում է «անկախություն», «ազատություն» հասկացությունների հետ: Ի. Կոնը նույնիսկ սահմանում է անկախ լինելը որպես անձի ներքին անկախության վիճակ [45]:

Որոշ հեղինակներ նշում են, որ ինքնուրույնությունը դրսևորվում է այնտեղ, որտեղ մարդն սկսում է գիտակցել իր անկախ լինելը՝ պատասխանատու զգալով իր արարքների համար (Ա. Աբուլխանովա-Սլավսկայա): Այսպես, ըստ Ա. Աբուլխանովա-Սլավսկայայի, տարբեր տարիքի երեխաների հետ կատարած ուսումնասիրությունները կապված վերջիններիս մոտ պատասխանատվության զգացողության ձևավորման հետ ցույց տվեցին, որ նման զգացողության դրսևորումը մեծապես կախված է ինքնուրույնության, ինքնակառավարման և ինքնավստահության մակարդակներից [5]: Նշենք, որ անձն իր զարգացման ընթացքում կարող է հասնել ինքնուրույնության զարգացման տարբեր մակարդակների, որոնք, ինչպես նշում է Օ. Զիմոնինան,

կախված են անձի կամային, հուզական և ինտելեկտուալ հատկանիշներից [36]:

Լ.Ժարովան առանձնացնում է ինքնուրույնության երեք հիմնական մակարդակներ, որոնից յուրաքանչյուրը դրսևորվում է տարբեր տարիքային փուլերում[ըստ՝ 36]: Այսպես, ցածրագույն մակարդակը, որը հեղինակի կողմից բնորոշվում է որպես ընդօրինակման և նույնականացման մակարդակ ավելի բնութագրական է վաղ մանկության շրջանում գտնվող երեխաների համար: Միջին մակարդակը հեղինակը անվանում է ակտիվ որոնողական փուլ, իսկ բարձրագույն մակարդակը՝ ինտենսիվ –ստեղծագործական փուլ, որոնք համապատասխանաբար բնորոշվում են անձի նման գործունեության ծավալմամբ [ըստ՝ 36]: Կապված ինքնուրույնության և ինքնավստահության մակարդակների բարձրացման խնդրի հետ՝ Դ. Նեդդերմեյերը արտահայտում է այն տեսակետը, որ այդ գործընթացը հնարավոր է արագացնել նոր փորձի ինքնուրույն ճանապարհով ձեռք բերման միջոցով [122]:

Ս. Լ. Ռուբինշտեյնի կողմից ինքնուրույնությունը մեկնաբանվում է որպես կարողությունների և հմտությունների յուրահատուկ միագումար [ըստ՝ 10]: Այլ գիտնականներ, օրինակ՝ Բ. Գ. Անանևը, Կ. Ա. Աբուլխանովա -Սլավսկայան և այլք, գտնում են, որ ինքնուրույնությունն օնտոգենետիկ ձևավորվող անձի սուբյեկտիվ փորձն է, որի ակտիվացումը հնարավոր է միայն անձի կողմից սեփական հնարավորությունների գիտակցման և գնահատման շնորհիվ [ըստ՝ 48]:

Ն. Կալուգինայի խոսքերով, ինքնուրույնությունն անձի ինքնահաստատման պահանջմունքի բավարման միջոցներից մեկն է, որը դրդում է վերջինիս, ինչպես նշում է հեղինակը, ավելի լավը լինել քան իրեն շրջապատողներն են. հակառակ պարագայում նա պարզապես կարող է լինել այնպիսին, ինչպիսին ուրիշներն են՝ իր ներսում ձևավորելով ինքնաճնշման զգացողությունը [39]: Ինքնուրույնությունը կարելի է դասել նաև անձի կամային հատկանիշների դասին, որոնք ինչպես նշում է Ֆ. Գոնորոլինը

դրդում են անձին ակտիվ գործունեության: Հեղինակը նշում է, որ ինքնուրույնությունն անձի որոշումներ ընդունելու և ուրիշների կամքին չենթարկվելու կարողությունն է [23]: Կ. Ա. Աբուլխանովա-Սլավսկայան առանձնացնում է անձի ինքնուրույն և ոչ ինքնուրույն տիպերը: Առաջինը՝ «...մոտիվացիա ունի գործունեության կոնտուրի, խնդիրների և կարգի ինքնուրույն կազմակերպմանը, նա իր վրա պատասխանատվություն է վերցնում գործունեության իրականացման ժամկետների, որակի, կոմպետենտության համար» [5, էջ 40]:

Ինչպես արդեն նշեցինք, ինքնուրույնության ձևավորման և դրսևորման գործընթացում մեծ դեր են խաղում անձնային այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են խիզախությունը, ինքնավստահությունը, ինքնակառավարումը, ինքնակարգավորումը և այլն:

Գ.Ս. Պրիգինը հատկապես ուշադրություն է դարձնում անձի ինքնակառավարման ունակության վրա, որի միջոցով միայն կարելի է հասնել «արդյունավետ ինքնուրույնության», որը կնպաստի անձի ինքնազարգացման գործընթացին [63]: Հեղինակն ինքնուրույնությունը բնութագրում է որպես գործունեության սուբյեկտային կարգավորում, որը հիմնվում է անձնային այնպիսի կարևոր բնութագրի վրա ինչպիսին է ինքնավարությունը [63, էջ 6]: Ըստ հեղինակի. ««...Գործունեության սուբյեկտային կարգավորման ի հայտ գալը տեղի է ունենում անձի օնտոգենեզի վաղ շրջաններում և պայմանավորված է կամայնության, ինքնագիտակցության ձևավորմամբ և սկզբունքորեն նոր ակտիվության՝ ինքնուրույն վարքի դրսևորմամբ» [63, էջ 86]

Ֆ. Գոնոբոլինը տարբերակում է ինքնուրույնությունը և նեգատիվիզմը: Ըստ նրա հատկապես նախադպրոցական հասակում, երեխայի մոտ պարզապես ձևավորվում է նեգատիվիզմ, որն ինքնուրույնություն համարել չենք կարող [23]:

Արևմուտքում անձի ինքնությունության հիմնախնդիրը կարևորվում է ինչպես հոգեբանության այնպես էլ փիլիսոփայության մեջ: Փիլիսոփայության մեջ լայն տարածում ունի դեռևս Մ. Հայդեգերից եկող էքզիստենցիալ դիրքորոշումը, ըստ որի, մարդը, որը չի ենթարկվում ամբոխի ճնշմանը, չի խառնվում ամբոխին՝ աուտենտիկ է և հենց դրանով էլ ինքնություն: Այլ կերպ ասած ինքնությունության հիմքում ընկած է աուտենտիկությունը [107]: Ջ. Ս. Միլից է գալիս ինքնությունության ինդիվիդուալիստական կոնցեպցիան, ըստ որի ինքնություն է այն մարդն ով ղեկավարվում է սեփական ցանկություններով և մղումներով [119]:

Է. Լևինասը ինքնությունությունը կապում է մարդու էգոիզմի՝ ուրիշի հետ հաշվի չնստելու հետ: Հեղինակը արժևորում է հետերոնոմիան ի հակադրություն ինքնությունությանը [113]: Հ. Ֆրանկֆուրտը ինքնությունությունը դիտում է որպես հիերարխիկ մի կառույց՝ տարբեր մակարդակներով: Օրինակ՝ մարդն ինքնություն է, եթե նա ղեկավարվում է իր առաջին կարգի ցանկություններով, այսինքն ուզում է և անում է: Նա էլ ավելի ինքնություն է, եթե ուզում է անել այն ինչ ուզում է [105]:

Մի շարք հեղինակների կողմից ինքնությունությունը, ինչպես նաև կապվածությունը մարդկանց հետ դիտարկվում են որպես մարդու հիմնային պահանջմունքներ [111]: Այդ պահանջմունքները կարևոր դեր ունեն անձի կենսունակության և բարեկեցության հարցում [121]:

Ըստ Ա. Մասլոուի ինքնությունությունը ինքնաակտուալացած մարդկանց կարևոր բնութագրերից է [117]: Արևմուտքում լայն տարածում ունի այն տեսակետը, որ ինքնությունությունը, որպես անձնային բնութագիր կարելի է բացատրել Ջ. Ռոտերի վերահսկման լոկուսի տեսության միջոցով [127]: Ինտերնալ վերահսկման լոկուս ունեցող անձանց բնորոշ է ինքնությունությունը, իսկ արտաքին լոկուս ունեցող անձանց՝ կախյալությունը:

Արևմուտքում բազմակողմանի հետազոտությունների են ենթարկվում ինքնությունության միջմշակութային առանձնահատկությունները, ցույց է

տրվում, որ ինքնուրույնությունը տարբեր հասարակություններում տարբեր դրսևորումներ ունի [109, 128, 129 և ուրիշներ]:

Զարգացման հոգեբանության մեջ կան մի շարք հետազոտություններ նվիրված ինքնուրույնության տարիքային զարգացման խնդրին: Ակնհայտ է, որ հոգեբանական այս ֆենոմենը տարբեր տարիքային փուլերում տարբեր կերպ է դրսևորվում և մեծապես կախված է դաստիարակությունից:

Զիմ Թեյլորը նշում է, որ երեխայի զարգացման ընթացքում ինքնուրույնության սահմանները աստիճանաբար ընդլայնվում են: Ինքնուրույնության զարգացման հիմնական նպատակը կայանում է նրանում, որպեսզի երեխան, մեծանալով, հետագայում կարողանա ինքնուրույն հոգ տանել ինքն իր մասին: Այդ նպատակի իրագործման համար հեղինակը մասնավորապես նշում է՝ «...անհրաժեշտ է, որպեսզի ծնողը ազատություն տա երեխային՝ ծանոթանալու կյանքի բոլոր կողմերի հետ» [132]: Ինքնուրույնության, ինքնուրույն լինելու միտում երեխայի մեջ նկատվում է դեռևս զարգացման վաղ փուլերից:

Ն. Մաժիրինայի կարծիքով 1-3 տարիքային շրջանում ինքնուրույնությունը կարելի է համարել զարգացման հիմնական խնդիրներից մեկը, որի դրսևորումն իր մեջ ներառում է սեփական կարիքները հոգալու կարողությունից մինչև սեփական արարքների համար պատասխանատվություն կրելու ընդունակությունը [50]: Մոտավորապես նույն կարծիքին է նաև ռուս գիտնական Ս. Տեպլյուկը, ով գտնում է, որ ինքնուրույնության ձևավորման համար սենզիտիվ են հատկապես 1-2 տարեկանի շրջանը, երբ երեխան սկսում է ինքնուրույն տեղաշարժվել: Ըստ հեղինակի, այս շրջանում ինքնուրույնության որպես անձի հատկության ձևավորմանը մեծապես նպաստում կամ խոչընդոտում են ծնողները: Թեպետ պատասխանատվություն կրելու հանգամանքը ավելի իրատեսական է դիտարկել զարգացման ավելի ուշ փուլերում, քանի որ ինչպես նշում է Գ.Սարտանը «մեզնից շատերն են ցանկանում ինքնուրույն որոշումներ

ընդունել, բայց շատ քչերն են գիտակցում, որ պատասխանատու են դրա համար [70]:

Է. Էրիքսոնը, իր տարիքային պարբերացման մեջ առանձնացնում է ինքնավարության (ինքնուրույնության) կամ ամոթի և կասկածների ճգնաժամը (1-3 տարեկանում) [91]: Ինչպես հայտնի է Է. Էրիքսոնը ճգնաժամ հասկացությունն օգտագործում է «զգայուն շրջան» հասկացությանը շատ մոտ իմաստով, հետևաբար ըստ Էրիքսոնի 1-3 տարեկանն է ինքնուրույնության ձևավորման զգայուն շրջանը:

Մասնագետներից շատերն այն կարծիքին է, որ ինքնուրույնության ձևավորման համար զգայուն շրջան է 3 տարեկան հասակը [43 և ուրիշներ]:

Վ. Ն. Զրիբնայան ընդգծում է, որ 3 տարեկանում երեխայի մոտ ինքնուրույնության ձևավորման առաջին նախապայմանը ծնողի դրական վերաբերմունքը և հատկապես խրախուսման միջոցներն են, հակառակ պարագայում յուրաքննաչյուր խոչընդոտ պարզապես սրում է երեք տարեկանի ճգնաժամի ընթացքը [37]:

Վ. Մուխինան, անդրադառնալով 3-4 տարեկան երեխաների մոտ ինքնուրույնության դրդապատճառներին, ընդգծում է, որ դրանք մեծապես կախված են երեխայի՝ մեծ լինելու կամ թերևս այդպիսին երևալու ցանկությամբ: Եվ, ըստ հեղինակի, խնդիրը այստեղ պարզապես այն է, որ երեխան հաճախ փորձում է ինքնուրույն երևալ իր ցանկությունները մեծերի ցանկություններին հակադրելու միջոցով [55]:

Ըստ Ի. Մ. Վորոտիլկինայի ինքնուրույնության առաջին դրսևորումները վերաբերում են 2-3 տարեկան հասակին: Նախադարոցական տարիքի երեխաների հետ անց կացված հետազոտությունները թույլ են տվել հեղինակին եզրակցնել, որ այս շրջանում, կախված դաստիարակությունից և ուսուցումից, երեխան կարող է շոշափելի արդյունքների հասնել ինքնուրույնության ձեռք բերման գործընթացում, հատկապես այնպիսի գործունեության շրջանակներում ինչպիսիք են խաղը և հաղորդակցումը [22]:

Եվ եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ ինքնուրույնության դրսևորումը տարբեր տարիքային փուլերում տարբեր դրդապատճառներով է պայմանավորված, ապա մանկության շրջանում, ինչպես նշում է հեղինակը, ինքնուրույնությունը հիմնականում հանդես է գալիս որպես մասնավոր նպատակների իրագործման միջոց [22]: Հարկ է նշել, որ այս փուլում մեծ նշանակություն ունեն ծնող –երեխա փոխհարաբերությունները, որտեղ ծնողը խնդիր ունի աստիճանաբար ընդլայնելու երեխայի ինքնուրույն գործունեության շրջանակները՝ վերջինիս մոտ զարգացնելով ինքնակառավարման ունակությունը և «ես ինքս բանաձևը»:

Ըստ Լ. Գ. Ջապարովայի, մանկության շրջանում կամայնության և ինքնուրույնության ընդունակությունների զարգացումը նպաստում է նրան, որ արդեն հասունության շրջանում անձը ինքնակառավարման ոլորտում հասնում է բարձր արդյունքների [32]:

Ե. Բարանովի կարծիքով երեխան պարզապես ուրախություն է ապրում ինքնուրույն գործունեությունից և շատ կարևոր է նման վարքի խրախուսումը [14]:

Ե. Տուրևսկայան, անդրադառանալով ինքնուրույնության խրախուսման գաղափարին, նշում է դրա կարևորությունը հատկապես այս տարիքում, երբ վտանգ կա երեխայի մոտ անինքնավստահության ձևավորման կամ երբեմն նույնիսկ հուզական լարվածության առաջացման [81]: Նման երևույթների կարելի է հաճախ հանդիպել, երբ օրինակ երեխան փորձում է ինքնուրույն դուռը բացել, սակայն չի կարողանում. արդյունքում, ինքնուրույն գործելու անկարողությունը ստիպում են նրան ձեռքերով և ոտքերով հարվածել դռանը և այլն: Այս պարագայում արդեն շատ կարևոր է ծնողի ճիշտ մոտեցումը՝ ինքնուրույն վարքի չսահմանափակման և միևնույն ժամանակ օգնության ցուցաբերման առումով: Այնուամենայնիվ ինքնուրույնության խրախուսումն այս հասակում ունի իր սահմանափակումները. հատկապես այնպիսի իրավիճակներում, երբ երեխայի մոտ նկատվում է հրամայելու, ջարդելու,

փչացնելու միտումներ, որոնք ինչպես նշում է Կալուգինյան ուղղված են սեփական ուժերը [47]:

Մանկության շրջանում երեխայի ինքնուրույնությունը, ըստ Ե. Բարանովի, հիմնականում նույնականացման և ընդօրինակման արդյունք է: Երբ երեխան այդ կերպ փորձում է նույնականանալ ոչ միայն ծնողների, այլ նաև իր համար նշանակալի մարդկանց հետ [14]:

Ինքնուրույնության դրսևորման հաջորդ կարևորագույն փուլը ընդունված է համարել կրտսեր դպրոցական տարիքը՝ 6-7 տարեկանը: Սա մի շրջան է, երբ երեխան պարտավորված է կատարել իր առջև դրված նոր պարտականությունները, կողմնորոշվել նոր իրավիճակում և այլն: Եվ որ ամենակարևորն է այս շրջանում երեխան սովորում է ինքնուրույն մտածել [22]:

Գ.Ա. Յուկերմանը և Ա. Ն. Վենգերը մտածողության ինքնուրույն բնույթը պայմանավորում են երեխայի առջև այս հասակում ի հայտ եկող նոր խնդիրներներով, որոնց լուծումների որոնումը հանգեցնում է ինքնուրույնության մակարդակի բարձրացմանը [84]:

Ինքնուրույն մտածողության զարգացումը կարևորելով՝ Ա. Ռեանը նշում է, որ երեխայի մոտ ինքնուրույնության այս ձևի զարգացումը կնպաստի նրա ընդհանուր ինտելեկտուալ զարգացածության մակարդակի բարձրացմանը [65]: Այնուամենայնիվ, ինչպես նշում է Ի. Մ. Վորոտիլկինյան, այս շրջանում ինքնուրույնության առանձնահատկությունների դրսևորումը մեծապես կախված է այն բանից, թե ինչպիսին է եղել երեխան նախորդ տարիքային փուլերում, որքանով է ծնողը սահմանափակել վերջինիս ազատ վարքի դրսևորումները: «Եթե համեմատենք 6-7 տարեկանների ինքնուրույնությունը, գրում է Ի. Մ. Վորոտիլկինյան,- ապա ակնհայտ է, որ նրանց մոտ այն դրսևորվում է այլ կերպ ,քան նրա բնույթն ու ուղղվածությունը երեք տարեկանների մոտ, 6-7 տարեկանների մոտ նախածեռնողությունն ու ինքնուրույնությունն ավելի նրբորեն ու բազմակողմանիորեն են դրսևորվում: Նրանց ինքնուրույնությունը բացահայտվում է կոլեկտիվ խաղերի բարդ

սյուժեների ստեղծման և իրականացման մեջ, խմբին հանձնարարված բարդ և պատասխանատու գործերն ինքնուրույն կատարելու մեջ:

Աճած ինքնուրույնությունը դրսևորվում է նաև ուրիշ երեխաների վարքը և աշխատանքը գնահատելու մեջ» [22, էջ 18]:

Բ. Բուրեն և Լ. Օստրովսկայան գտնում են, որ մանկական տարիքում ինքնուրույնությունը դրսևորվում է երեք մակարդակով.

ա/ երեխան իր առօրյա, ստանդարտ գործունեության մեջ գործում է առանց մեծերի հրահանգների, ասենք, խաղալուց հետո հավաքում է խաղալիքները,

բ/ երեխան առանց հրահանգների է գործում իր համար ոչ սովորական, սակայն սովորականին մոտ պայմաններում,

գ/ երեխան ցանկացած իրավիճակում ի վիճակի է գործել առանց հրահանգների:

Կրտսեր դպրոցական տարիքում առավել քան կարևոր է երեխայի ինքնուրույնության դրսևորումը ուսումնական գործունեության ընթացքում:

Ըստ Օ. Վոլոգոդսկայայի ուսումնական գործընթացում ինքնուրույնության դրսևորումը հնարավոր է միայն երեխայի մոտ ինքնակառավարման հմտության զարգացման պարագայում, քանի որ նախկին գործունեության ձևերը, որոնցում երեխան ինքնուրույնություն էր ցուցաբերում, այժմ փոխարինվում են նորերով, ինչը և խոսում է այն մասին, որ այժմ երեխան հատկապես ուշադրության կենտրոնացման խնդիր ունի: Ինչպես նշում է հեղինակը, ինքնուրույնության դրսևորման սահմանափակումներն այս տարիքում ևս, այնպես ինչպես տարիքային նախորդ փուլում, կարիք ունեն վերահսկման: Այդ պատճառով ծնողը որոշակի առումով խնդիր ունի հավասարեցնելու երեխայի մոտ կախվածության և ինքնուրույնության մակարդակները:

Օ. Օստրովերիսը և Ա. Մոկրոուսովան, անդրադառնալով կրտսեր դպրոցական հասակում ինքնուրույնության դրսևորմանը, նշում են, որ պետք է

հատուկ ուշադրություն դարձնել երեխայի ուսումնական նպատակների ինքնուրույն ձևավորման և այդ նպատակների իրագործման միջոցների ինքնուրույն բացահայտման ունակության վրա: Բացի այդ, հեղինակները նշում են, որ եթե նախադպրոցական հասակում կարևորվում էր ծնողի գնահատականը ուղղված երեխայի ինքնուրույն վարքի այս կամ այն դրսևորմանը, ապա այս դեպքում կարևորվում է ուսուցչի խրախուսումը թե՛ խոսքի, թե՛ գնահատականի տեսքով [60]: Վ.Վ. Դավիդովը այս առիթով նշում է, որ ընդհանրապես ուսումնական գործունեության մեջ այս շրջանում երեխայի ինքնուրույնությունը հնարավոր է ձևավորել միայն ուսուցչի աջակցությամբ և տևական ժամանակահատվածում [27]: Դեռահասության և պատանեկության շրջանում էական փոփոխություններ են նկատվում ինքնուրույնության դրսևորման հիմքում ընկած դրդապատճառների և դրսևորման բնույթի մեջ:

Որոշ հեղինակներ առանձնացնում են հատկապես 16-22 տարիքային շրջանը որպես ինքնուրույնության ձգտման շրջան [25]: Ընդհանրապես ընդունված է համարել, որ պատանեկությունը «ինքնուրույն կյանք» անձի մուտք գործելու առաջին փուլն է: Այս տեսակետը կարելի է հանդիպել նաև Նեմովի մոտ, հեղինակը մասնավորապես նշում է, որ վաղ պատանեկության շրջանը հենց այն շրջանն է, երբ անձը կատարում է երկու կարևորագույն որոշում ինչպիսին լինել (բարոյաանձնային կողմնորոշում) և ով լինել (մասնագիտական կողմնորոշում) [58]:

Մ. Վորոտիլկինայի խոսքերով պատանեկության շրջանում անձի ինքնուրույն վարքը հաճախ պայմանավորված է սեփական անկախության, ինքնուրույնության իրավունքի շեշտման ձգտմամբ [22]: Ըստ հեղինակի, ինքնահաստատման ձգտումն է պատճառը, որ տարիքային այս փուլում, նույնիսկ այն պարագայում, երբ անձին տրվում է ինքնուրույն լինելու հնարավորությունը նա հաճախ միևնույն է դժգոհ է լինում [22]: Մ. Վորոտիլկինան նշում է, որ ինքնուրույնության դրսևորումը ավելի շատ կարելի

է ընդունել որպես սեփական հնարավորությունների ստուգման ձև: Թե՛ դեռահասը և թե՛ պատանին ցանկանում են մեծ երևալ և այդ է պատճառը, որ հաճախ ձգտում են ինքնուրույն լուծել այն բոլոր խնդիրները, որոնք սովորաբար լուծում են մեծերը [22]:

Ինչպես նշում է Ի. Շապովալենկոն, պատանեկությունը տարիքային այն փուլն է, երբ ինքնուրույնությունը արդեն իսկ դրված է ամուր հիմքերի վրա, թեպետ որոշակի մակարդակում առկա է ծնողներից կախվածությունը [87]:

Դեռահասության և պատանեկության շրջաններում ինքնուրույնության ձգտման և նաև ինքնուրույն վարքի ցուցաբերման արդյունքում անխուսափելի են դառնում ընտանեկան վեճերը: Շատ կարևոր է, որպեսզի ծնողը հասկանա, որ ինքնուրույնությունը և ինքնահաստատումը բացասական հատկանիշներ չեն և հատկապես այս տարիքում դրանք անհրաժեշտ են դեռահասի զարգացման համար [46]:

Ե. Տուրևսկայայի պնդմամբ պատանեկության շրջանում ինքնուրույնության դրսևորման սահմանափակումները, կամ անձի ինքնուրույն վարքի ցուցաբերման անկարողությունը կարող են հանգեցնել նրան, որ պատանու մոտ կասկած առաջանա կյանքի տարբեր նպատակների իրագործելի լինելու հարցում [81]: Ի. Պեժակովիչը նշում է, որ դեռահասների և պատանիների մոտ ինքնուրույնության ձևավորման լավագույն ճանապարհը նրանց ինքնուրույն որոշումներ ընդունելու հնարավորություն տալն է, որի արդյունքը կլինի այն, որ վերջիններս կսովորեն իրենց սեփական սխալների վրա՝ ձեռք բերելով նոր փորձ: Հեղինակի խոսքերով՝ բոլոր դեռահասները կարիք ունեն սեփական անհատականության դրսևորման և անհրաժեշտ է, որպեսզի ծնողը հստակ գիտակցի դա և ընդառաջի վերջինիս ինքնուրույն լինելու մեծ ձգտմանը՝ նրան տալով ինքնուրույնությունը ամրապնդող տարբեր հանձնարարություններ [123]:

Ինչպես ցույց են տվել Ի. Յանիրի կողմից անցկացված հետազոտությունների արդյունքները իրենց ծնողների և ընտանիքի մյուս

անդամների հետ լավ հարաբերություններ ունեցող պատանհինների մեծամասնությանը բնորոշ է ինքնուրույնության ավելի բարձր մակարդակի համեմատ նրանց, ովքեր որոշակի հեռավորություն են պահպանում իրենց ծնողներից [102]:

Ինչպես արդեն նշեցինք, դեռահասության և պատանեկության շրջանում անխուսափելի են դառնում կոնֆլիկտները թե՛ իրեն շրջապատողների, թե՛ ընտանիքի անդամների հետ:

Լ. Ի. Բոժովիչի կարծիքով նմանօրինակ կոնֆլիկտների և հաճախ նաև ներանձնային կոնֆլիկտների ի հայտ գալը կարելի է պայմանավորել «ինքնահաստատման և ինքնուրույն լինելու անձի ձգտումների չարդարացմամբ» [15, էջ 87]:

Ա. Ռեանի կողմից հատկապես շեշտվում է այն հանգամանքը, որ ինքնուրույնության դրսևորման և ինքնավստահության խնդիր ունեցող պատանհինների և դեռահասների մոտ հաճախակի բնույթ է կրում վերբալ ագրեսիան [65]: Ե. Տուրևսկայայի պնդմամբ պատանեկության շրջանում է հենց առաջանում« ես պատասխանատու եմ գաղափարի գիտակցումը» [81]:

Վ. Լեբեդշուկի հետազոտությունները, որոնք առավելապես ուղղված էին պատանեկության շրջանում անձի ինքնուրույնության ձևավորման ուսումնասիրությանը, ցույց տվեցին, որ վերջիններիս կենսագործունեության ընթացքում ինքնուրույնության մակարդակը բավական ցածր է, իսկ մասնագիտական առումով ինքնուրույնության գիտակցումը միայն 20-21 տարեկանում է լինում, ինչը և, ըստ հեղինակի, ազդում է հետագայում ուսանողների մասնագիտական պատրաստվածության վրա: Ահա այդ է պատճառը, որ հեղինակը նշում է, թե որքան կարևոր է հատկապես այս շրջանում պրակտիկայի առկայությունը, որը հնարավորություն կտա բարձրացնել ինքնուրույնության մակարդակը:

Ընդունված է համարել, որ այն պատանհինների մոտ, որոնք ունեն ցածր ինքնագնահատական, ինքնուրույնության մակարդակը ևս ցածր է, ինչը և հանգեցնում է սոցիալական ակտիվության մակարդակի իջեցմանը, իսկ

նրանք, ովքեր ինքնուրույն են, ավելի հեշտ են մտնում սոցիալական կոնտակտի մեջ: Ի. Ի. Նոսկոն նշում է, որ թեպետ այս հասակում պատանիները փորձում են ամեն կերպ ընդգծել իրենց ինքնուրույնությունը այս կամ այն որոշումների ինքնուրույնաբար ընդունման միջոցով, սակայն այնուամենայնիվ այդ որոշումները մեծամասամբ իրավիճակի ազդեցության տակ են կայացվում: Եվ այդ ամենի հիմքում ընկած է այն, որ թեպետ անձը ձգտում է ինքնուրույնության, այնուամենայնիվ վերջինիս ինքնակառավարման ընդունակությունները այդքան էլ զարգացած չեն [59]:

Արևմուտքում բազմաթիվ հետազոտություններ կան նվիրված տարեցների ինքնուրույնության խնդրին: Ինչպես հայտնի է, ուշ տարիքում ֆիզիկական ուժերի անկման, առողջության վատթարացման, թոշակի անցնելու հետ կապված տարեց մարդկանց ինքնուրույնությունն անկում է ապրում: Հետազոտությունները ցույց են տալիս, որ այսպես կոչված «լավ ծերացումը», տարեցների բարեկեցությունը, կյանքի որակը ուղղակիորեն կապված է նրանց ինքնուրույնության մակարդակի հետ [95]:

1.3. Ինքնուրույնության պահանջմունքի էությունը, ձևավորումը և զարգացումը

Ժամանակակից հոգեբանության մեջ ինքնուրույնության պահանջմունքը հարաբերականորեն թույլ է հետազոտված, նույնիսկ պահանջմունքների համակարգը նկարագրող մի շարք տեսություններում, օրինակ՝ Ա. Մասլոուի մոտ, այս պահանջմունքն ընդհանրապես ներկայացված չէ: Ըստ որում, հասկացությունների մակարդակում էլ դեռևս որոշ խառնաշփոթ կա. օգտագործվում են և՛ ինքնուրույնության և՛ անկախության և՛ ինքնավարության

պահանջմունքներ արտահայտությունները: Բնականաբար, սրանք երեք տարբեր պահանջմունքներ չեն, այլ միևնույն պահանջմունքը, որի համար երեք հասկացություն է օգտագործվում: Օրինակ, անգլերենում «ինքնուրույնություն» երկույթի համար օգտագործվում է և independence (անկախություն) և autonomy (ինքնավարություն) հասկացությունները և, համապատասխանաբար, անկախության և ինքնավարության պահանջմունքներ արտահայտությունը: Այսպես, Ջ. Ռոթերը և Ե. Հոչրեյխը առանձնացնում են անկախության և կախյալության պահանջմունքները դրանց համար օգտագործելով independence (անկախություն) և dependency (կախյալություն) հասկացությունները: Հեղինակները անկախության պահանջմունքը բնութագրում են որպես անկախ, ազատ, ինքնուրույն, առանց ուրիշի օգնության որոշումներ կայացնելու, նպատակներին հասնելու ձգտում: Դրան հակառակ՝ կախյալության պահանջմունքը ցանկություն է, որ մարդուն հոգ տանեն, ուղղորդեն, պաշտպանեն [127]: Ըստ էության, սրանք հակադիր պահանջմունքներ են, որոնք, ըստ մեզ, հիմք են հանդիսանում ինքնուրույնության և կախյալության անձնային հոգեբանական բնութագրերի համար և տարիքային դրսևորումներ ունեն, ուղղակիորեն կապված են անձի ուժի և թուլության հետ: Ասենք, մանկության շրջանում կամ ծեր հասակում, երբ անձը թույլ է, նրա մեջ կակտուալանա կախյալության պահանջմունքը:

Պահանջմունքների հիմնախնդիրը հետազոտող խոշոր հոգեբան Հենրի Մյուրեյն առանձնացնում է առաջնային և երկրորդային կամ հոգեբանական պահանջմունքներ (թվով 27-ը): Հոգեբանական պահանջմունքները նա բաժանում է 5 խմբի, որոնցից 3-րդի, այսպես կոչված ուժի պահանջմունքների մեջ առանձնացնում է ինքնավարության (ինքնուրույնության, անկախության պահանջմունքը) պահանջմունքը, որն իրենից ներկայացնում է ցանկություն լինելու չկաշկանդված, ուրիշներին դիմադրելու, գործելու անկախ և ազատ, ըստ սեփական հայեցողության [120]: Մեկ այլ նշանավոր գիտնական՝ Կարեն Հորնին նույնպես անդրադառնում է ինքնուրույնության (Self-Sufficiency),

անկախության պահանջմունքներին, համարելով դրանք ներոտիկ պահանջմունքներ: Ըստ հեղինակի, ներոտիկ պահանջմունքները տազնապը հաղթահարելու չգիտակցվող պաշտպանություններ են, որոնք կաշուն մղումներ են հանդիսանում: Ներոտիկ պահանջմունքները 10-ն են: Կոնկրետ ինքնուրույնության(Self-Sufficiency),

անկախության պահանջմունքները, որոնք բնութագրվում են ցանկացած ներգործությունից ազատ լինելու, մենակության ձգտմամբ, մարդկանցից խուսափելով, մարդկանց մեջ կաշկանդվածություն, վախ զգալով [ըստ՝ 96]:

Ինքնուրույնության պահանջմունքը որպես անձին կաշկանդող պահանջմունք է դիտում նաև Գ. Դվոսկինը [29]:

Է. Դեքին և Մ. Վանտենքիստը ինքնուրույնության տեսության շրջանակներում առանձնացնում են ինքնավարության պահանջմունքը, որը սեփական կյանքի տերը լինելու ունիվերսալ պահանջմունք է, սակայն այն, ըստ հեղինակների չի ենթադրում անկախություն ուրիշներից [104]: Այս տեսության մեջ, բացի ինքնավարությունից առանձնացնում են ևս երկու հիմնային պահանջմունքներ՝ կոմպետենտությունը (competence) և կապվածությունը (relatedness): Այս երեք պահանջմունքների բավարարումը Է. Դեքին և Ռ. Ռայանը համարում են անձի զարգացման կարևոր պայման, նպաստում են անձի ինտեգրացիային [103]:

Մեկ այլ հեղինակ՝ Թ. Բրեզինան, գրում է. «Որոշ դեռահասներ դրսևորում են ինքնավարության հզոր պահանջմունք, ինքն իր տերը լինելու, սեփական կանոններով ղեկավարվելու ցանկություն: Մեր նախորդ հետազոտությունը ցույց տվեց, որ ինքնավարության պահանջմունքի ուժեղ դրսևորումները զուգորդվում են ագրեսիվության և պրոբլեմային վարքի հետ» [95, էջ 111]:

Ռուս գիտնական Ա. Ն. Զանկովսկին առանձնացնում է հասուն տարիքին բնորոշ, աշխատանքային ակտիվության համար անհրաժեշտ անկախության և ինքնուրույնության պահանջմունքները, որոնք արտացոլում են մարդու

ցանկությունը դուրս գալու ուրիշի վերահսկողությունից, ինքն իրեն կառավարելու, ինքնուրույն գործելու [35]:

Առաջին գլխի ամփոփում և եզրակացություններ

Մենք փորձեցինք համառոտ ներկայացնել ինքնուրույնության պահանջմունքի վերաբերյալ հետազոտությունները: Ամփոփելով դրանք, կարելի է անել հետևյալ եզրակացությունները.

1. Ինքնուրույնությանը մոտ իմաստ ունեցող հասկացությունների մեծ մասում («Ինքնավարություն», «Անկախություն» և այլն) տարբերակիչ բնութագրերը չեն ներկայացվում, ինչի հետևանքով հաճախ դժվար է լինում հստակորեն տարբերակել, թե կոնկրետ ինչով են տարբերվում այդ հասկացությունները:

2. Ինքնուրույնության պահանջմունքն անձի հիմնարար պահանջմունքներից է, այն ունի իր հակադիր՝ կախյալության պահանջմունքը:

3. Ինքնուրույնությունը չնայած վաղ տարիքից է դրսևորվում, ըստ հետազոտողների որպես պահանջմունք հանդես է գալիս ավելի ուշ՝ դեռահասության տարիքում:

4. Ըստ մեզ, ինքնուրույնության ամենաառաջին դրսևորումների կարելի է հանդիպել արդեն նորածնության ժամանակ, երբ երեխան բացասական հուզական ապրումներ է դրսևորում զանազան ֆիզիկական կաշկանդումների(ասենք բարուրման) հանդեպ: Սա կարելի է դիտել որպես ինքնուրույնության պահանջմունքի ամենաառաջին և պարզունակ մակարդակը՝ ֆիզիկական ազատության պահանջմունքը: Այս տրամաբանությունից ելնելով կարելի է ենթադրել, որ գոյություն ունեն ինքնուրույնության մակարդակներ, որոնք տարիքային առանձնահատկություններ ունեն, այսինքն անձի զարգացման հետ ինքնուրույնության ավելի ու ավելի բարձր դրսևորումներ ու մակարդակներ են

ի հայտ գալիս և պահանջմունքն էլ համապատասխանաբար փոխվում է, այսինքն ի հայտ է գալիս պահանջ տարբեր մակարդակների ինքնուրույնության համար՝ ասենք, եթե անձը զրկված է ազատությունից, նրա մեջ ակտուալանում է ազատ լինելու, ասենք բանտից ազատագրվելու պահանջմունքը, իսկ եթե նա ֆիզիկապես ազատ է, ապա ի հայտ է գալիս պահանջ, ասենք ինքնուրույն տեղաշարժվելու: Ինքնուրույնության զարգացման հաջորդ փուլն ինքնուրույն գործողություններ անելու, մասնավորապես ինքնուրույն տեղաշարժվելու, ինքնուրույն գդալը բռնելու, սնվելու, հագնվելու փուլն է և համապատասխան պահանջմունքը, որը սկսում է ի հայտ գալ մեկ տարեկան հասակից և իր գագաթին է հասնում երեք տարեկանի շրջանում, երբ երեխան արդեն պահանջում է ինքնուրույնությունը՝ իր հայտնի «Ես ինքս» արտահայտությամբ: Մյուս մակարդակում ի հայտ են գալիս իր և ուրիշների կամքերի տարբերակումը, հակադրումը ուրիշի կամքին, որը դրսևորվում է երեք տարեկանի ճգնաժամի ախտանշաններից մեկի՝ նեգատիվիզմի ձևով և ձգտումն ինքնակառավարման, որի դեպքում երեխան ուզում է ղեկավարվել իր ցանկություններով, ինչի արդյունքում հաճախ կոնֆլիկտներ են առաջանում մեծերի և երեխաների միջև: Ինքնուրույնության ամենավերջին մակարդակն ինքնավարությունն է, որի լավագույն սահմանումներից մեկը տվել է Ի. Կանտը, բնութագրելով այն որպես՝ ինքնուրույն գոյություն, որը որոշվում է սեփական բանականությամբ և խղճով: Թերևս հոգեբանական առումով բանականությանն ու խղճին կարելի է ավելացնել ևս երկու դրդող ուժեր՝ կամքը և ցանկությունները: Այլ կերպ ասած ինքնավարությունը կարելի է դիտել որպես ինքնուրույնության ամենաբարձր և ամբողջական մակարդակ, որին միտված է զարգացման գործընթացը ողջ մանկության շրջանում և որից սկսում է հասունությունը: Ինքնուրույնության պահանջմունքն ինքնավարության ձևով կամ հենց ինքնավարության պահանջմունքը սկսում է ի հայտ գալ ուշ դեռահասության և վաղ պատանեկության շրջանից՝ 16-17 տարեկանից, իր գագաթնակետին է

հասնում 20 տարեկանի շրջանում՝ ապահովելով պատանու անցումը հասունության:

5. Ինքնուրույնությունը և ինքնուրույնության պահանջմունքը դրսևորվում են տարբեր մակարդակներով, որոնք արտացոլում են նաև ինքնուրույնության որպես պահանջմունքի և որպես անձի գոյության ձևի՝ ծննդյան պահին ֆիզիկական ազատագրումից մինչև ինքնուրույն գոյություն՝ սեփական բանականությամբ, խղճով (Կանտ), կամքով և ցանկությամբ բնութագրերը:

6. Ինքնուրույնության պահանջմունքը մեկ դրսևորվում է որպես ազատագրվելու, ֆիզիկական կաշկանդումից ազատվելու ցանկություն, մեկ՝ որպես ինքնուրույն գործողություններ կատարելու ցանկություն կամ սեփական կամքով ղեկավարվելու ձգտում, իսկ ամենազարգացած մակարդակում որպես սեփական կյանքը տնօրինելու պահանջ:

ԳԼՈՒԽ 2. ՊԱՏԱՆԵԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՆԵԼՈՒ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՅՍ ՏԱՐԻՔՈՒՄ

2.1. Զարգացման ճգնաժամերի վերաբերյալ պատկերացումները հոգեբանության մեջ

Զարգացման ճգնաժամերը Լ.Ս. Վիգոտսկին այսպես է նկարագրում. «Այդ շրջաններում,— գրում է նա,— հարաբերականորեն կարճ ժամանակահատվածում (մի քանի ամիս, մեկ տարի, ամենաշատը երկու տարի) երեխայի անձնավորության մեջ կտրուկ, արմատական տեղաշարժեր, փոփոխություններ, բեկումներ են տեղի ունենում» [45, էջ 249]: Ըստ հեղինակի ճգնաժամերը ոչ թե արտաքին, այլ ներքին գործոններով են պայմանավորված. «Ներքին զարգացումը,— գրում է նա,— միշտ իրականանում է այնպես, որ միջավայրը և անձնային պահերը միասնաբար են հանդես գալիս, այսինքն՝ զարգացման մեջ յուրաքանչյուր նոր քայլ անմիջականորեն որոշվում է նախորդ քայլերով, այն ամենով, ինչ արդեն ստեղծվել և ձևավորվել է զարգացման նախորդ փուլում» [21, էջ 385]:

Ճգնաժամը Վիգոտսկի չի դիտում որպես ինչ-որ ողբերգություն, նրա համար ճգնաժամն անհրաժեշտ, օրինաչափ մի բան է: Ճիշտ է ճգնաժամը բացասական բնութագրեր ունի, սակայն՝ «Այնուամենայնիվ,— գրում է նա,— մեծագույն սխալ կլինի կարծել, թե դրանով սպառվում է ճգնաժամային տարիքների նշանակությունը: Զարգացումը երբեք չի դադարեցնում իր ստեղծագործ աշխատանքը և ճգնաժամային շրջաններում էլ մենք տեսնում ենք զարգացման կառուցողական գործընթացներ:

Ավելին՝ այդ տարիքներում այդքան վառ դրսևորվող անկումային գործընթացները ենթարկվում են անձնավորության զարգացման դրական, կառուցողական գործընթացներին, դրանցից անմիջական կախման մեջ են գտնվում և դրանց հետ միասին անբաժանելի ամբողջություն են կազմում: Նշված շրջան-

ներում դեստրուկտիվ աշխատանքն իրականանում է այնքանով, որքանով դա անհրաժեշտ է անձնավորության հատկությունների և գծերի զարգացման համար: Փաստական հետազոտությունները ցույց են տալիս, որ բեկումնային շրջաններում զարգացման նեգատիվ բովանդակությունն անձնավորության դրական փոփոխությունների հակառակ, ստվերային կողմն է, և այդ դրական փոփոխություններն են կազմում ցանկացած ճգնաժամային տարիքի գլխավոր իմաստը» [21, էջ 253]: Ավելին, նրա կարծիքով՝ «...Եթե ճգնաժամն ինչ-ինչ պատճառներով թույլ է արտահայտվում, ապա դա հանգեցնում է հաջորդող տարիքում երեխայի անձնավորության աֆեկտիվ և կամային ոլորտների զարգացման հապաղելուն» [21, էջ 253]:

Ըստ Վիգոտսկու ճգնաժամային շրջաններում ձևավորվում են այսպես կոչված ճգնաժամային նորագոյացությունները. «Ինչպես ցույց է տալիս կոնկրետ հետազոտությունը,— գրում է նա,— ճգնաժամային տարիքներում զարգացման ամենաէական բովանդակությունը վերին աստիճանի յուրահատուկ նորագոյացությունների ձևավորումն է: Կայուն տարիքների նորագոյացություններից դրանց հիմնական տարբերությունն այն է, որ դրանք անցումային բնույթ են կրում: Դա նշանակում է, որ հետագայում դրանք չեն պահպանվում այն ձևով, ինչպես առաջացել են ճգնաժամային շրջանում և որպես անհրաժեշտ բաղադրիչ հետագայում չեն մտնում անձնավորության միասնական կառուցվածքի մեջ: Դրանք մահանում են, կարծես կլանվելով հաջորդ, կայուն շրջանի նորագոյացությունների կողմից, ընդգրկվում են վերջիններիս կազմում որպես ենթակա կառույց, որն ինքնուրույն կյանք չունի ...Որպես այդպիսին, ճգնաժամերի նորագոյացությունները հաջորդ տարիքում մահանում են, սակայն նոր տարիքի ներսում շարունակում են լատենտ ձևով գոյություն ունենալ: Չունենալով ինքնուրույն կյանք՝ նրանք միայն մասնակցում են այն ստորգետնյա զարգացմանը, որը կայուն շրջաններում հանգեցնում է նորագոյացությունների թռիչքաձև զարգացմանը» [21, էջ 254]:

Վիզոտսկին ներկայացնում է իր տարիքային պարբերացումը, որը հիմնվում է զարգացման ճգնաժամերի վրա, դրանք, ըստ նրա հետևյալն են՝ ա) նորածնության ճգնաժամ, բ) 1 տարեկանի, գ) 3 տարեկանի, դ) 7 տարեկանի, ե) 13 տարեկանի գ) 17 տարեկանի ճգնաժամերը [21, էջ 256]:

Ճգնաժամերի հիմնախնդրին անդրադարձել են նաև Լ. Ս. Վիզոտսկու աշակերտները՝ Ա. Ն. Լեոնտևը, Դ. Բ. Էլկոնինը, Լ. Բոժովիչը ր ուրիշներ: Մեծանուն ռուս գիտնական Ա. Ն. Լեոնտևը որոշ չափով հակադրվում է Վիզոտսկու գաղափարներին, հատկապես ճգնաժամերի էնդոգեն ծագման գաղափարին. «...Ճգնաժամերի «դասական» ըմբռնումն այն է,— գրում է Ա. Ն. Լեոնտևը,— որ դրանք վերագրվում են երեխայի ներքին հատկությունների հասունացմանը և այն հակասություններին, որոնք այդ հողի վրա առաջանում են երեխայի ու շրջապատի միջև: Այդպիսի մոտեցման դեպքում ճգնաժամերն իհարկե անխուսափելի են, քանի որ ինչ պայմաններ էլ լինեն, անխուսափելի են այդ հակասությունները...Սակայն երեխայի հոգեկան զարգացման մասին ուսմունքում ոչինչ այնքան կեղծ չէ, որքան այդ գաղափարը: Իրականում ճգնաժամերը բնավ էլ հոգեկան զարգացման անխուսափելի ուղեկիցներ չեն: Անխուսափելի են ոչ թե ճգնաժամերը, այլ բեկումները, որակական առաջխաղացումները: Ճգնաժամը, ընդհակառակը, վկայություն է այն բանի, որ բեկումը, առաջխաղացումը տեղի չի ունեցել ժամանակին և ցանկալի ուղղությամբ: Ճգնաժամերը կարող են բնավ էլ չլինել, քանի որ երեխայի հոգեկան զարգացումը ոչ թե տարերային է, այլ դաստիարակությամբ ղեկավարվող գործընթաց է» [48, էջ 490]:

Նույն կարծիքն է արտահայտում նաև Դ. Բ. Էլկոնինը. «...Ճգնաժամը,- ըստ հեղինակի,- ի հայտ է գալիս միայն այն դեպքում, երբ մեծերը, չնկատելով ցանկություններն ինքնուրույն բավարարելու երեխայի միտումը, շարունակում են զսպել նրա ինքնուրույնությունը, պահպանում են համատեղ գործունեության և հարաբերությունների հին ձևը, սահմանափակում են երեխայի ակտիվությունը, նրա ազատությունը: Իսկ եթե մեծերը չեն հակառակվում երեխայի

ինքնուրույնության դրսևորմանը (իհարկե որոշակի սահմաններում), ապա դժվարություններ կամ ընդհանրապես չեն ծագում, կամ արագ հաղթահարվում են» [92, էջ 85]:

Ըստ Լ. Ի. Բոժովիչի՝ «...Ճգնաժամային շրջան ապրող երեխաների առանձնահատկությունները վկայում են նրանց ֆրուստրացվածության մասին: Ֆրուստրացիան, ինչպես հայտնի է, առաջանում է ի պատասխան մարդու համար էական ինչ-որ պահանջմունքների դեպրիվացիայի: Այդ իսկ պատճառով կարելի է եզրակացնել, որ երկու տարիքների սահմանագծում նման հակազդում են տալիս այն երեխաները, որոնց մեջ չեն բավարարվում կամ նույնիսկ ակտիվորեն ճնշվում են այն նոր պահանջմունքները, որոնք համապատասխան տարիքի նորագոյացությունների հետ հայտնվում են հոգեկան զարգացման յուրաքանչյուր փուլում» [18, էջ 195]:

Մեկ այլ ռուս գիտնական՝ Կ. Ն. Պոլիվանովան գտնում է, որ «Ճգնաժամային շրջանում զարգացման առանձնահատկությունն այն է, երեխան իր համար բացահայտում է նոր, իդեալական ձևը և իրականի նկատմամբ նրա վերաբերմունքը հանդես է գալիս որպես զարգացման իրավիճակ» [64, էջ 64]: Ճգնաժամի ախտանշանները պայմանավորված են նրանով, որ երեխան «...հին, իրական իրավիճակում գործում է նորի, իդեալականի տրամաբանությամբ» [64, էջ 65]:

Հեղինակն այն կարծիքին է, որ «...կամայնությունն է միշտ նոր, կայուն շրջանին անցնելու պայմանը. տարբերությունը միայն այն է, թե ո՞ր հոգեբանական բնութագիրն է կամայնության հատկություն ձեռք բերում՝ վարքում անմիջականության կորո՞ւստը (յոթ տարեկանի ճգնաժամը), թե՞ խաղային իրականությունից, իրավիճակի թելադրանքից ազատումը: Դեռահասության շրջանին անցնելու պայմանն ու բնութագիրը ինտելեկտուալ ներհայեցողություն է որպես միջնորդավորվածություն, մտավոր գործողությունների կամայնություն» [64, էջ 63]:

Ըստ Կ. Պոլիվանովայի ճգնաժամերը տեղի են ունենում երեք փուլով, սկզբում «...երեխան բացահայտում է, որ այն իրականությունը, որի մեջ ինքը ապրում է, լիարժեք չէ» (64, էջ 65): Հաջորդ փուլն, ըստ հեղինակի, բաղկացած է երեք ենթափուլերից, որոնցից առաջինում երեխայի ակտիվությունը ուղղված է՝ «... կյանքի իրական իրադրություններում իդեալական ձևի մասին իր առավել ընդհանուր, իդեալականացված պատկերացումներն իրականացնելուն» [64, էջ 65]: Հաջորդ ենթափուլը բնութագրվում է ներհոգեկան բախմամբ: Ըստ հեղինակի՝ «Նախաճգնաժամային փուլում երեխան վստահ է սեփական հնարավորություններին, նա պատրաստ է հեշտությամբ վերցնել նոր սոցիալական դեր: Իսկ ճգնաժամի վերջում նա շատ ավելի սթափ վերաբերմունք է ունենում իր նկատմամբ, նրա ժամանակային հեռանկարը շատ ավելի իրական է դառնում... Ինքնագնահատականի, որպես սեփական հնարավորությունների նկատմամբ վերաբերմունքի դրսևորման տարբերակումը հիմք է տալիս անցնելու հետճգնաժամային փուլին: Դա ճգնաժամի հաղթահարումն է» [64, էջ 65]: Հեղինակը ճգնաժամերի մեջ առանձնացնում է դրական և բացասական կողմեր. «Ճգնաժամում զարգացման դեստրուկտիվ կողմն ուղղված է աշխարհի հետ հին հարաբերությունների համակարգին: Ճգնաժամային շրջաններում երեխայի վարքի դրական իմաստը պայմանավորված է նոր հարաբերությունների համակարգի կառուցման փորձով» [64, էջ 64]:

Վ.Սլոբոդչիկովը և Իսաևն առանձնացնում են ճգնաժամերի երկու տեսակ՝ ծննդյան և զարգացման ճգնաժամեր: Ծննդյան ճգնաժամերի պարագայում մարդը մտնում է նոր հանրություն, իսկ զարգացման ճգնաժամերի կապակցությամբ հեղինակները հետևյալն են գրում. «Համակեցական հանրության զարգացման ճգնաժամը... դրսևորվում է որպես անհատական և համատեղ գործունեության և գիտակցության ձևերի խզում (ուզում են, բայց չեն կարողանում քո նման դառնալ)» [74, էջ 47]:

Մեկ այլ հեղինակ Ե. Լ. Սոլդատովան զարգացման ճգնաժամերը հետևյալ կերպ է բնութագրում. «Հասուն մարդու անձի զարգացման ճգնաժամերի նորմատիվությունը պայմանավորված է ինքնաակտուալիզացիայի դրդապատճառի և հասարակության սպասումներին հասմապատասխան զարգացման ու անձնային ամբողջականության և ինքնանույնականության միջև հակասությամբ» [75, էջ 5]: Մեկ այլ տեղում հեղինակը նշում է. «...Անձի զարգացման նորմատիվ ճգնաժամերի հիմնական հոգեբանական բովանդակությունը և նորագոյացությունն է հանդիսանում էգո-նույնականության ձևավորումը՝ զարգացման սոցիալական իրավիճակի խոր վերափոխումների արդյունքում փոխված ես-ի ինքն իր հետ նույնականությունը...» [75, էջ 9]: Ըստ որում, առանձնացվում են էգո-նույնականություն տարբեր տեսակներ. «Կանխորոշված էգո-նույնականությունը բնութագրվում է անցյալի և ապագայի վրա ֆիքսացիայով...Դիֆուզ էգո-նույնականությունը կապված է սեփական նպատակների, արժեքների փնտրտուքի ու կասկածների, անինքնավստահության ...հետ: Կայացած ինքնանույնականությունը բնութագրվում է վերագտած ամբողջականությամբ և ինքնավարությամբ, անցյալի, ապագայի և ներկայի ընդունմամբ, նպատակների գիտակցված ընտրությամբ և սեփական փոփոխությունների ընդունմամբ» [75, էջ 9]:

ԱՄՆ-ում զարգացման ճգնաժամերի ամենահայտնի հետազոտողը թերևս Էրիկ Էրիքսոնն է, ով առանձնացնում զարգացման ութ ճգնաժամ: Հեղինակը զարգացման ճգնաժամերը հետևյալ կերպ է բացատրում. «Ճգնաժամ բառը օգտագործվում է զարգացման մասին պատկերացումների կոնտեքստում այն բանի համար, որ ընդգծվի ոչ թե աղետի վտանգը, այլ փոփոխության պահը, աճած խոցելիության և ներուժի շրջանը և դրա հետևանքով հնարավոր լավ կամ վատ հարմարվողականության օնտոգենետիկական աղբյուրը» [91, էջ 105]: Ճգնաժամերն ունենում են դրական և կամ բացասական հանգուցալուծումներ: Դրական ելքի ժամանակ մարդու մեջ ի հայտ են գալիս.

«...ներքին միասնության ուժեղացած զգացողությամբ, առողջ դատելու զարգացած ընդունակությամբ, նշանակալի մարդկանց և սեփական ստանդարտներին համապատասխանող «լավ» գործողություններով» [91, էջ 100–101]: Ճգնաժամի բացասական ելքի դեպքում ի հայտ են գալիս բացասական հոգեբանական գոյացություններ, նույնիսկ հիվանդություններ կարող են առաջանալ:

Մեկ այլ ամերիկացի գիտնական Գ. Շիհին այն կարծիքին է, որ «...զարգացման յուրաքանչյուր հաջորդ փուլին անցնելիս, դեն են նետվում նախկին պաշտպանական կառույցները: Մարդը դառնում է խոցելի, բախտի քմահաճույքին հանձնված, բայց նաև ազատ, սաղմնային իրադրության մեջ, անհայտ ուղղություններով շարժվելու ընդունակ» [88, էջ 24]: Ըստ հեղինակի հենց այդ գործընթացով էլ պայմանավորված են ճգնաժամերը, որոնք ներհոգեկան ծագում ունեն և պայմանավորված չեն արտաքին ներգործություններով, դրանք «...ցույց են տալիս փոխվելու, զարգացման հաջորդ փուլի համար նոր հենակետեր գտնելու անհրաժեշտությունը» [88, էջ 25]:

Հ. Բիին զարգացման ճգնաժամերը հետևյալ կերպ է բնութագրում. «Ամեն անգամ, երբ մարդը տեղափոխվում է զարգացման մի մակարդակից կամ փուլից մյուսը, տեղի է ունենում յուրահատուկ մահ և վերածնունդ. մահ նախկին ես–ի, նախկին հավատամքի կամ նախկին հավասարակշռության: Նորմալի շրջանակներում դա նախ և առաջ ի հայտ է գալիս որպես մեկ այլ փուլի կամ տեսադաշտի նշմարում կամ կանխագուշակում, նախազգացում, որին հաջորդում է մի շրջան (որը կարող է կարճ կամ երկար տևել), որի ընթացքում մարդը պայքարում է՝ գործ ունենալով իր ներքին երկու ես–երի հետ: Երբեմն գործընթացը ձախողվում է և մարդը վերադառնում է նախկին հավասարակշռությանը: Երբեմն մարդը շարժվում է դեպի նոր հավասարակշռություն՝ նույնացնելով իրեն այդ նոր հավասարակշռության հետ» [93, էջ 305]:

Հայրենական հոգեբանության մեջ զարգացման ճգնաժամերի խնդիրը քննել է Ս. Խուդոյանը: Նախ, ըստ հեղինակի՝ «...«Տարիքային ճգնաժամ»

հասկացությունը կարող է դիտվել որպես ընդհանուր՝ տարիքային նորմատիվ երևույթներով պայմանավորված մի շարք ճգնաժամերի համար: Այդ ճգնաժամերից այսօր վստահորեն կարելի է առանձնացնել երկուսը, որոնք չնայած չեն տարբերակվել, սակայն հետազոտվել են: Դրանք են տարիքային անցումներով և ինքնագիտակցության վերակառուցումներով պայմանավորված ճգնաժամերը» [83, էջ 120]: Տարիքային անցումներն, ըստ հեղինակի ունեն հետևյալ բնութագրերը. «...անցումային շրջանը կարելի է դիտել որպես նախորդ տարիքային փուլի վերջի և հաջորդ տարիքային փուլի սկզբի միջև ընկած ժամանակաշրջան, յուրահատուկ լատենտ շրջան, որի ընթացքում փոխվում են օրգանիզմի և հոգեկան համակարգի զարգացման ծրագրերը: Որպես լատենտ շրջաններ՝ անցումային տարիքներում դեռևս նոր տարիքային փուլի դրսևորումները բացակայում են, վերակառուցումները տեղի են ունենում խորքային մակարդակում, ասենք՝ տեղաշարժեր են սկսվում էնդոկրին համակարգում կամ, ասենք, անգիտակցական ոլորտում: Այդ վերակառուցումները հաճախ ընկալվում են որպես անորոշ ցանկություններ (ուզում եմ, չգիտեմ, թե ինչ), անորոշ տխրություն, փոխվելու, հասունանալու, մեծանալու յուրահատուկ զգացողություն, անորոշ տազնապներ, աստենիկ զգացողություններ: Այս անորոշությունն ի հայտ է գալիս նաև սոցիալական ոլորտում. մարդը հայտնվում է անորոշ սոցիալական դիրքում՝ ոչ երեխա է, ո՛չ դեռահաս, ո՛չ դեռահաս է, ո՛չ երիտասարդ, ո՛չ երիտասարդ է, ո՛չ տարիքով մարդ: Պետք է ասել, իհարկե, որ անցումային տարիքների բնորոշ, տարբերակիչ ախտանշանները դեռևս հետազոտված չեն (ընդհանրապես անցումները՝ որպես տարիքային ճգնաժամերի առանձին կատեգորիա, առանձնացված չէին): Անցումը կարելի է բնութագրել նաև որպես տարիքային մի հիմնախնդրի լուծման գործընթացի ավարտման, ամփոփման և հաջորդ տարիքային հիմնախնդրին անցնելու նախապատրաստական շրջան, երբ տեղի է ունենում նախորդ տարիքի ընթացքում կուտակված քանակական փոփոխությունների վերաճում որակականի, ինչն էլ, ըստ մեզ, պայման և, ինչ-որ տեղ, նաև ազդանշան է հանդիսանում հաջորդ

տարիքային փուլին անցնելու համար, այսինքն՝ մարդը պատրաստ է լինում անցնելու հաջորդ տարիքային հիմնախնդրի լուծմանը» [83, էջ 124]:

Ճգնաժամերի մյուս խումբը հեղինակը կապում է ինքնագիտակցության վերակառուցումների հետ և տալիս հետևյալ բնութագիրը. «Այս ճգնաժամերը նախ և առաջ բնութագրվում են նրանով, որ մարդը, գիտակցելով իրեն որպես որոշակի ակտիվության սուբյեկտ (ասենք՝ որպես սեռային ակտիվության սուբյեկտ), փորձում է պարզել, թե ինչպիսին պիտի լինի տվյալ ակտիվության սուբյեկտը, գնահատել, թե ինչպիսին է ինքը որպես այդպիսին: Սրա շնորհիվ մարդը խիստ զգայուն է դառնում սեփական ես–ի՝ որպես տվյալ ակտիվության սուբյեկտի նկատմամբ. ուրիշների կարծիքը, սեփական հաջողություններն ու անհաջողությունները հզոր հակազդում են առաջ բերում, կասկածներ, մտորումներ են ի հայտ գալիս սեփական ես–ի առնչությամբ: Այս շրջաններում կտրուկ աճում է ներհայեցողությունը. մարդն անընդհատ վերլուծում է իրեն, իր արարքները, ինչը հյուծիչ ազդեցություն է ունենում, խախտում է մարդու ակտիվության սպոնտանությունը: Շատերի մեջ սեփական ես–ի առնչությամբ անորոշ տագնապներ են առաջանում, որոնք հաճախ հիպոխոնդրիկ բնույթ են ստանում: Իր անձի նկատմամբ այս անորոշությունը և զգայունությունն էլ այս շրջանների ամենաէական սթրեսագեն գործոններն են հանդիսանում և պայմանավորում ճգնաժամի հիմնական ախտանշանները: Պետք է ասել, որ անորոշությունը, որպես հոգեբանական իրողություն, ինքնին բացասական հոգեվիճակների, տագնապի աղբյուր է (Պ. Վ. Սիմոնով), սակայն երբ այդ անորոշությունը վերաբերում է սեփական ես–ի էությանը, գնահատականին, ապա բացասական հոգեվիճակները կարող են վերաճել իսկական ողբերգության: Այս անորոշության հետևանքով մարդը դառնում է ծայրահեղ անինքնավստահ, ինչը խաթարումներ կարող է առաջացնել թե՛ սուբյեկտի գործունեության մեջ (ասենք՝ մարդը հրաժարվում է որևէ խնդիր լուծելուց, այն դեպքում, երբ ինքը միանգամայն ի վիճակի էր անել դա, կամ ծայրահեղ անինքնավստահ է դառնում սեփական առողջության կապակցությամբ և, կտրվելով կյանքից, անընդ-

հատ բժիշկների է դիմում), թե՛ միջանձնային հարաբերությունների ոլորտում» [83, էջ 140]:

Նման ծավալուն մեջբերումների նպատակը հեղինակի մտքերի առավել հստակ ներկայացումն է, և այն հանգամանքը, որ հենց այս տեսության վրա է կառուցված մեր հետազոտությունը: Մասնավորապես մենք նույնպես ընդունում ենք ճգնաժամերի այս երկու տեսակների գաղափարը և գտնում, որ անհնար է, որ առանձնացված տարբեր ճգնաժամերն ունենան միևնույն պատճառները: Այնուամենայնիվ մենք այն կարծիքին ենք, որ անցումայնությամբ պայմանավորված ճգնաժամերի, մասնավորապես պատանեկան ճգնաժամի վերաբերյալ հեղինակի պատկերացումները հետագա ճշգրտումների կարիք ունեն: Մասնավորապես հեղինակը անտեսում է Լ. Վիգոտսկու այն տեսակետը, որ անցումային տարիքներն ունեն իրենց յուրահատուկ նորագոյացությունները, որոնք կարևոր դեր են խաղում անձի զարգացման գործընթացում: Ըստ մեզ, անցումային ճգնաժամային տարիքներում ձևավորվում են որոշակի նորագոյացություններ, որոնց ձևավորման գործընթացը որոշակի դեր է խաղում ճգնաժամի առաջացման գործընթացում: Մասնավորապես պատանեկան տարիքի անցման շրջանում, նման անցումային նորագոյացություն կարող է դիտվել ինքնուրույնությունը, որի ձևավորումը և դրսևորումները կարևոր ազդեցություն են ունենում պատանեկան ճգնաժամի և առաջացման և ընթացքի առանձնահատկությունների վրա:

2.2. Պատանեկությունը որպես տարիքային փուլ

Հնում, տարբեր հասարակություններում ընդունված էր, որ տարիքային մի փուլից անցումը մյուսին պետք է տեղի ունենար հատուկ ծիսակարգերի

կազմակերպման միջոցով: Եվ դա ըստ էության, ուներ բավական հիմնավոր պատճառներ, քանի որ, ընդունված էր , որ այդ պահից անձը կարծես կրկին վերածնվում էր՝ ձեռք բերելով սոցիալական նոր դիրք [83]:

Պատանեկության շրջանը, որը բնորոշվում է կյանքում կարևորագույն խնդիրներից մեկի լուծմամբ, այն է՝ մասնագիտության ընտրությամբ և համապատասխանաբար սոցիալական նոր դերերի ստանձմամբ, իրոք որոշակի առումով կարող ենք համարել մի շրջան, երբ մարդը վերածնունդ է ապրում:

Պետք է ասել, որ պատանեկության, որպես տարիքային շրջանի մասին բավական տարաբնույթ տեսակետներ կան: Այսպես, արևմտյան հոգեբաններից շատերի կողմից պատանեկությունը, որպես առանձին տարիքային փուլ պարզապես չի ընդունվում և հաճախ դիտարկվում է դեռահասության շրջանակներում, իսկ հայրենական հոգեբանության մեջ հստակորեն տարանջատվում են պատանեկությունն ու դեռահասությունը և փորձեր են արվում տալ այս տարիքների որպես փուլերի տարբերությունները: Այսպես, Լ. Ի. Բոժովիչը դեռահասության և պատանեկության տարբերությունը տեսնում է ժամանակային դիրքորոշումների մեջ, նա նշում է. «Դեռահասը նայում է ապագային՝ ներկայից ելնելով, իսկ պատանին նայում է ներկային՝ ապագայից ելնելով» [15, էջ 92]:

Լ. Կոուլի և Ս. Հոլլի «Պատանեկություն և հոգեբանություն» գրքում հանդիպում ենք վերը նշված տեսակետի մի բացատրության, ըստ որի պատանեկության շրջանում անձի մոտ առաջին անգամ ի հայտ է գալիս ժամանակի գործոնի՝ ներկա- անցյալ- ապագայի փոխհարաբերության հստակ գիտակցումը [11]: Այնուամենայնիվ, թե՛ դեռահասը և թե՛ պատանին դեռևս հասուն մարդ կոչվել չեն կարող. տարբերությունը պարզապես այն է, որ դեռահասը դեռևս կապված է մանկության հետ, իսկ պատանին ձգտում է երիտասարդության, հասունության, և նա առավել քան մոտ է կանգնած

տարիքային այդ փուլերին: Թեպետ նրա մոտ դեռևս շատ հաճախ նկատելի են ոչ հասուն անձին բնորոշ հատկություններ [47]:

Ըստ Ի. Կոնի, պատանեկությունը «... մի շրջան է, որի ընթացքում մարդը կախյալ մանկությունից անցում է կատարում ինքնուրույն և պատասխանատու հասունությանը, ինչը ենթադրում է, մի կողմից ֆիզիկական, մասնավորապես սեռական հասունացման ավարտը, իսկ մյուս կողմից սոցիալական առումով հասունացում» [44, էջ 32]:

Լ. Քոլը և Ի. Հոլը գտնում են, որ պատանեկությունը մի շրջան է, որի ընթացքում լուծվում են մի շարք խնդիրներ, ինչի արդյունքում էլ պատանին վերածվում է հասուն անձնավորության: Այդ խնդիրներն են.

- ա/ ընդհանուր հուզական հասունությունը,
- բ/ հետերոսեքսուալ հետաքրքրության արթնացումը,
- գ/ ընդհանուր սոցիալական հասունությունը,
- դ/ անկախացումը ծնողներից,
- ե/ ինտելեկտուալ հասունությունը,
- զ/ մասնագիտության ընտրությունը,
- է/ ազատ ժամանակը տնօրինելու ընդունակության ձևավորումը,
- ը/ խղճի և պարտքի վրա հիմնվող գոյության սկզբունքների յուրացումը,
- թ/ ես-ի նույնականության ձևավորումը [101]:

Ըստ Բ. Լիվեհուդի, պատանեկան տարիքում հրատապ են դառնում այնպիսի հարցեր, ինչպիսիք են «Ո՞րն է իմ տեղն այս կյանքում», «Իրականում ի՞նչ է իրենից ներկայացնում այս աշխարհը», «Ի՞նչ եմ ես ինձանից ներկայացնում» [49]:

Դեռահասության շրջանում անձին բնորոշ է երևակայական աշխարհով ապրելը, իրեն երևակայական մարդկանց հետ համեմատելը, մինչդեռ պատանեկության շրջանում անձի մոտ սկսվում է ինքնաճանաչման մի նոր փուլ, ինչը պատճառ է հանդիսանում, որ անձն իր այդ իդեալական պատկերացումները սկսի փնտրել արդեն իր ներսում և դրանով իսկ

աստիճանաբար դուրս է գա մանկության շրջանից: Անձի զարգացման պատանեկության շրջանը տարբեր

հեղինակների կողմից ստացել են տարբեր բնորոշումներ:

Վ. Մորգունը պատանեկությունն անվանում է «Փնտրտուքների շրջան»՝ քանի որ անձն իր կամքից անկախ, հայտնվում է որոնումների մեջ, ինչը, ըստ էության, պայմանավորված է հասարակության կողմից անձին ներկայացվող պահանջներով, այնպիսի պահանջներով, ինչպիսիք են մասնագիտության ընտրությունը և այլն: Վ. Մորգունը անձի կյանքի բացահայտումներով լի այս շրջանի սահմաններն է համարում 18-23 տարեկանը [54]: Որոնումները բնականաբար պայմանավորված են ամենատարբեր իրավիճակներում ընտրություն կատարելու անհրաժեշտությամբ: Եվ եթե պատանեկության առաջին փուլում (16-19 տարեկան) առավել ակտիվացած վիճակում է գտնվում փորձերի և սխալների մեթոդը, որպես ընտրության հիմք, ապա 19 տարեկանից հետո արդեն իրավիճակը փոփոխվում է՝ անձի կյանքում գալիս է մի շրջան, երբ ընտրությունը լինում է կոնկրետ, երբ անձը գիտակցում է իր հնարավորությունները, առկա միջոցները և նպատակները և հետո միայն որոշում ընդունում [87]:

Վ. Ի. Սլոբոդչիկովը պատանեկությունը (ըստ հեղինակի այն ընդգրկում է 13- 18 տարեկանը), անվանում է «Յուրացման փուլ», որի ընթացքում անձը սկսում է սոցիալական նոր դերերի յուրացման մի նոր շրջան [74]:

Պատանեկության շրջանը, ինչպես արդեն նշեցինք, կարևորվում է նրանով, որ եթե մինչ այդ տարիքը անձը առավելապես կապված է անցյալի և ներկայի հետ, ապա այժմ նրա համար կարևորվում է ապագան, ապագայի վերաբերյալ իր մտադրությունների իրագործումը: Լ. Բոժովիչը դա պայմանավորում է պատանու առջև ծառայող խնդիրների լուծման անհրաժեշտությամբ [15]:

Տուրևսկայան պատանեկության կարևորագույն բնութագիրը ինքնակողմնորոշումն է համարում [81]: Պատանին պարտավորված է թե՛ սոցիալական, թե՛ անձնական հարցերում ընտրություն կատարել և ոչ միայն որովհետև նա է

այդպես ցանկանում, այլ նաև որովհետև հասարակության պահանջներն են այդպիսին: Նման ընտրություններ կատարելու համար որոշակի մակարդակի ինքնուրույնություն է պահանջվում. հարց է ծագում, արդյո՞ք կարելի է պատանուն ինքնուրույն համարել: Այս հարցին բավական դիպուկ պատասխան է տալիս Ի. Շապովալենկոն, ով նշում է, որ պատանեկության շրջանում «ինքնուրույնություն» ասվածն իրականում հարաբերական բնույթ ունի, քանի որ պատանին դեռևս տնտեսական առումով անկախ չէ, նրա կյանքում բավական ազդեցիկ դեր են խաղում ծնողները, «ինչն էլ ենթադրում է պատանու կողմից ենթարկվողականություն»:

Ինչպես նշվում է ժամանակակից ամերիկյան հոգեբանության մեջ անձի մոտ դեռևս բարձր մակարդակի վրա է գտնվում ծնողական սիրո և քնքնշանքի պահանջը: Եվ այնուամենայնիվ Ի. Շապովալենկոն նշում է, որ պատանեկության վաղ (հեղինակը 15-18 տարեկան հասակը համարում է վաղ պատանեկություն) և ուշ (18-23) շրջանները կարելի է բնորոշել որպես «ինքնուրույնության ձեռք բերման շրջաններ» [87, էջ 55]: Այսպես, ձեռք բերելով հարաբերական ինքնուրույնություն, պատանին աստիճանաբար գնում է դեպի դեռևս մանկության շրջանում ձևավորված իր նվիրական երազանքների իրագործմանը: Քանի որ, ինչպես նշում է Ի. Կուլագինան. «այժմ դա արդեն որոշ չափով հնարավոր է դարձել և բացի այդ անձի մոտ ձևավորել է սոցիալական պատասխանատվության զգացողություն» [47]:

Ամերիկյան հոգեբանության մեջ «պատանեկություն» հասկացությունը շրջանառության մեջ մտավ 1904 թվականին, երբ լույս տեսավ Ս. Հոլլի «Պատանեկություն» («Adolescence») խորագրով գիրքը, որը հիմք դրեց ամերիկյան հոգեբանության մեջ պատանեկության ուսումնասիրությանը: Պատանեկության տարիքային սահմանները հեղինակի աշխատության մեջ ուրվագծվում էին սկսած անձի սեռական հասունացման սկզբնական շրջանից՝ 12-13 տարեկանից, մինչև 22- 25 տարեկանները և բնորոշվում բուռն զարգացումներով, ինչը հեղինակը կապում էր առաջին հերթին

Ֆիզիոլոգիական փոփոխությունների հետ [106]: Ահա հենց այս շրջանից սկսած ամերիկյան հոգեբանության մեջ հստակ կերպով սահմանազատված չեն դեռահասության և պատանեկության շրջանները, ինչը հաճախ շփոթմունք է առաջացնում, քանի որ մեծամասամբ հեղինակները օգտագործում են դեռահասություն և պատանեկություն հասկացությունները որպես հոմանիշներ: Նմանօրինակ մոտեցման հանդիպում ենք նաև Ա. Գեզելի աշխատություններում, որտեղ հեղինակը 11-21 տարեկանն ընկած ժամանակահատվածը առանձնացնում է որպես պատանեկություն:

Ամերիկյան հոգեբանության ներկայացուցիչներից Կվիննը, իր տարիքային պարբերացման մեջ, պատանեկություն հասկացությունը որպես առանձին տարիքային փուլ ընդհանրապես չի դիտարկում, հեղինակն առանձնացնում է 12-18 տարեկանը՝ որպես վաղ դեռահասություն, որից հետո 18-40 տարեկանը, հեղինակի կողմից ընդունվում է որպես երիտասարդություն [91]:

Ամերիկյան հոգեբանական գրականության մեջ հատկապես մեծ տեղ է տրվում տարիքային շրջաբաժանման Էրիքսոնյան մոտեցմանը, որտեղ հեղինակը բնորոշում է պատանեկությունը (11-20 տարեկանը) որպես մի շրջան, երբ անձի մոտ ձևավորվում է սեփական անձի նույնականության զգացողությունը, որը, ըստ էության, անձի կողմից սեփական անձի վերաբերյալ ունեցած պատկերացումների ընդհանրացման գործընթացով է պայմանավորվում (կարելի է զուգահեռականներ անց կացնել Շպրանգերի «Սեփական անհատականության զգացման» հետ [89]):

Է. Էրիքսոնը մեծ տեղ էր տալիս անձի կյանքում պատանեկության շրջանին՝ գտնելով, որ իդենտիֆիկացիոն վարքի դրսևորման բարձրագույն աստիճանն ընդգրկում է հենց այս շրջանը: «Հոգեբանական մարաթոն»՝ ահա այսպես է անվանում Է. Էրիքսոնը պատանեկությունից մինչ հասունություն ընկած ժամանակահատվածը [91]:

Ամերիկյան հոգեբանության մեջ պատանեկությունը դեռահասությունից տարբերակվում է «պուբերտատ» հասկացությամբ, որպես պատանեկության (Adolescence) փուլի սկզբնական՝ սեռական հասունացման շրջանը: Հասկացությունն առաջին անգամ ներմուծվել է Շ. Բյուլերի կողմից, ով այդ կերպ փորձում էր ընդգծել անձի՝ դեռևս կիսահասուն լինելը: Պուբերտատության շրջանի սկիզբը հեղինակը անվանում է մանկություն, ավարտը՝ պատանեկություն: Ընդհանուր առմամբ, հիմնական շեշտն այստեղ դրվում է մարդու մարմնային և հոգեկան հասունության վրա, որի արդյունքն էլ հենց կլինի պուբերտատության շրջանի ավարտը (հեղինակը նշում է 21 տարեկանը): Այսինքն, սա այն շրջանն է, որը ընկած է «տղայի և տղամարդու», «աղջկա և կնոջ» միջև: Պուբերտատության ողջ շրջանը հեղինակը բաժանում է նեգատիվ և պոզիտիվ փուլերի, որոնք համապատասխանում են մանկության, դեռահասության և պատանեկության շրջանների հետ [20]:

Անգլիական հոգեբանության ներկայացուցիչներից կարող ենք առանձնացնել Դ. Բրոմլեյին, ով պատանեկությունը բաժանում է վաղ և ուշ շրջանների: Վաղ պատանեկությունը հեղինակը համարում է 11-15 տարեկանները (պայմանավորված է այն հանգամանքով, որ Անգլիայում դպրոցը սովորաբար ավարտում են տասնհինգ տարեկան հասակում) և 15-21 տարեկանները որպես արդեն պատանեկության ավելի ուշ փուլ: Բրոմլեյի կողմից հատկապես կարևորվում է երկրորդ փուլը, որը հեղինակի կողմից բնորոշվում է որպես հակասոցիալական վարքի դրսևորման պիկային շրջան [ըստ՝ 11]:

Գերմանական հոգեբանության ներկայացուցիչներից է. Կրեչմերը գտնում էր, որ անձի զարգացումը կարելի է բաժանել երկու մասի՝ շիզոիդ և ցիկլոիդ փուլերի, որտեղ առաջինին բնորոշ է հուզական առումով ավելի «հավաքվածությունը», իսկ երկրորդին՝ հուզական անկայունությունը, տրամադրության հաճախակի անկումները: Կրեչմերի մոտեցումը հետագայում

զարգացրեց իր աշակերտներից Կ.Կոնրադը, ով զարգացման ցիկլոիդ փուլ էր համարում դեռահասության շրջանը, և շիզոիդ փուլ՝ պատանեկությունը, որը համարում էր մի շրջան, երբ անձը խորապես զբաղվում է ինքնավերլուծությամբ [ըստ՝ 38]:

Ինքնավերլուծության արդյունքում էլ ահա սկսում է աշխարհաճանաչողության մի նոր փուլ, եթե մինչ այդ, դեռահասության շրջանում, չկային հարցեր կապված կյանքի իմաստի, կյանքում իր զբաղեցրած տեղի, նշանակության շուրջ, ապա այժմ այդ մտորումները անձի անբաժանելի մասն են կազմում [82]: Եվ որ ամենակարևորն է այս բոլոր հարցադրումները հենց այնպես չեն ծնվում, դրանք ձևավորվում են անձի ինտելեկտուալ զարգացման հետևանքով: Հատկապես առանձնացնենք տեսական և դիվերգենտ մտածողության ձևերի ակտիվացումը այս հասակում, ինչը նպաստում է, որ պատանին այժմ արդեն ձգտում է բացահայտել այն ամենը, ինչը մինչ այդ բացահայտված չէր իր կողմից, սա ինչ – որ տեղ նման է նաև նոր ծնված երեխայի՝ աշխարհի բացահայտման փնտրտուքներին [67]: Սակայն ի տարբերություն մանկության շրջանի աշխարհաճանաչողությանը այս փուլում միանում է նաև բարոյական գիտակցությունը, որը, համաձայն Լ. Բոժովիչի, այս տարիքում անձի գիտակցության բաղկացուցիչ մասն է կազմում [15]:

Պատանեկության շրջանում բարոյաարժեքային համակարգի ձևավորման մասին խոսում է նաև Հ. Ռեմշմիդտը՝ ընգծելով դրա դերը անձի վարքային հետագա դրսևորումների գործընթացում [67]:

Պատանեկության շրջանին բնորոշ են այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են հուզական անկայունությունը, տրամադրության հաճախակի տատանումները, որոնք առավել քան բնութագրական են պատանու համար: Նշենք, որ նմանօրինակ դրսևորումները, ինչպես կարծում է Ի. Կոնը, անձին փոխանցվում են դեռևս դեռահասության շրջանից և կապված են «մեծանալու ձգտման հետ կապված՝

անձի ներքին հոգեկան լարվածության հետ» [44]: Ֆիզիոլոգիական տեսակետից դա հաճախ բացատրվում է օրգանիզմի զգայունության բարձրացմամբ կամ ինչպես նշում է Հ. Ռեմշմիդտը հորմոնալ համակարգի փոփոխությամբ: Այսպես, հեղինակի տվյալների համաձայն՝ պատանեկության շրջանում (18-20 տարեկանում) աճի հորմոնները թուլացնում են իրենց ազդեցությունը մկանների վրա, իրենց տեղը զիջելով սեռական հորմոններին: Եվ հենց այս շրջանում է, որ պատանի աղջիկները և տղաները սկսում են անհանգստանալ իրենց արտաքին տեսքով [67]:

Նրանք հաճախ իրենց տգեղ են համարում, ձևավորվում է ամոթի զգացողություն սեփական մարմնից և այլն: Անխուսափելի են դառնում հասակակիցների հետ համեմատվելու ձգտումները, արդյունքում սեփական արտաքինի ոչ ադեկվատ գնահատումը և դրա արդյունքում ի հայտ եկող թերարժեքության բարդույթը: Ահա այդ է պատճառը, որ «նյարդային անորեքսիա» և «բուլիմիա» կոչվող հիվանդությունները, որոնք կապված են առաջինի դեպքում սնունդի ընդհանրապես չընդունման, երկրորդի դեպքում չափազանց հաճախակի ընդունման հետ, այս տարիքում հաճախ հանդիպող հիվանդությունների շարքին են դասվում: Այսպես, ակնհայտ է, որ պատանեկության շրջանում ևս անձի բարձր զգայունակության խնդիր կա: Ի. Կուլագինան, ուսումնասիրելով ամերիկյան հետազոտողների կողմից անցկացված հետազոտությունները, նշում է, որ պատերազմները, հեղափոխությունները, քաղաքական անկայուն վիճակները և այլն հատկապես ազդում են անձի զարգացման վրա պատանեկության շրջանում [47]:

Եվս մեկ առանձնահատկություն, որը բնորոշ է այս տարիքում գտնվող յուրաքանչյուր պատանու: Դա հակառակ սեռի ներկայացուցչի նկատմամբ սիրո զգացողության ի հայտ գալն է: Խնդիրը հիմնովին ուսումնասիրել է Շտերնը, իր «Լուրջ խաղ պատանեկության շրջանում» խորագիրը կրող գրքում, որտեղ խոսում է այն մասին, որ պատանին մշտապես խաղի մեջ է, հատկապես սիրային հարաբերությունների առումով: Հեղինակը նշում է, որ

պատանեկության շրջանում սիրո զգացողությունը ոչ մի կերպ ֆիքսված չէ էրոտիկ հարաբերությունների վրա, սակայն կարող է հետագայում հիմք հանդիսանալ ամուսնության համար [90]:

Շարանգերի կողմից առանձնացվում են պատանեկան սիրուն բնորոշ հոգևոր և սեքսուալ բնութագրերը: Հոգևոր կամ էսթետիկ սերը հեղինակի պնդմամբ մեկ այլ հոգու հետ միակցումն է, մինչդեռ երկրորդը բնորոշվում է բավարարվածության, վայելքի զգացողությամբ, ինչը և, ըստ հեղինակի, ընկած է այս հասակում ամոթի զգացողության ի հայտ գալու հիմքում [89]: Եվ ընդհանրապես զգացմունքների արտահայտման առումով պատանին էապես տարբերվում է դեռահասից : Ինչպես նշում է Ա. Ռեանը «Պատանին հստակ կերպով կարողանում է արտահայտել իր զգացմունքները և տրամադրությունը: Նա ունի սիրո մեծ պահանջ, որը պայմանավորված է ինքնաբացահայտման, ինտիմ մտերմության և այլ գործոններով» [65, էջ 69]:

Ըստ Ս. Խուդոյանի, պատանեկան տարիքը անցումային, այսինքն միջանկյալ շրջան է, որի ընթացքում անցում է կատարվում դեռահասությունից հասունությանը [83]: Այլ կերպ ասած՝ այն ինքնուրույն, առանձին տարիք չէ, միջանկյալ մի շրջան է, որի ընթացքում պատանին ամփոփվում է նախորդ տարիքային փուլի՝ դեռահասության տարիքային խնդիրների լուծման արդյունքները (Ռ. Հավիգուրստ) և նախապատրաստվում հաջորդ տարիքային փուլին: Այս շրջանի ամենակարևոր բնութագիրը, ըստ հեղինակի, ինքնուրույնության հասնելն է, որի էությունը հեղինակը համարում է սեփական անձին հոգ տանելը, կառավարելը, ինչը հնարավորություն է տալիս հետագայում, ասենք, ամուսնությունից հետո, հոգ տանել նաև ուրիշներին [108]: Այս փուլի կարևորագույն բնութագիրն է համարվում նոր ակտուալացող և դեռևս հստակ չգիտակցվող պահանջմունք՝ ծնողական պահանջմունքը, որը սկսում է հստակորեն գիտակցվել 25-30 տարեկանում: Ահա այդ է պատճառը, որ Գ. Կրայգի կողմից պատանեկության շրջանը, որը հեղինակը սահմանում է 15-25 տ. ընկած ժամանակահատվածը, հենց այդպես էլ անվանվում է՝

«նախապատրաստական փուլ»։ Սակայն նշենք, որ նախապատրաստում ասելով՝ հեղինակը խոսում է կոնկրետ ապագա մասնագիտությանը պատանու նախապատրաստման մասին [46]։

Էական տարբերություն է նկատվում նաև հասարակական, միջանձնային փոխհարաբերություններում։ Եվ դա առաջին հերթին պայմանավորվում է տարիքային այս փուլում անձի հետաքրքրությունների փոփոխությամբ։ Ամերիկյան հոգեբանության մեջ հատկապես ուշադրություն է դարձվում նրան, որ 10-18 տարեկանում անցում է կատարվում ընտանիքից ընկերներին, ինչը շատ հաճախ ճիշտ չի ընկալվում առաջին հերթին ծնողի կողմից, ով կարծում է, թե «կորցնում է իր երեխային, որին այդքան տարի մեծացրել է » [124, էջ 322]։ Մինչդեռ պատանու համար չափազանց կարևոր է դառնում ընկերական որևէ խմբին անդամակցելու գաղափարը, որը վերջինիս մոտ անկախության, ինքնուրույնության զգացողություն է առաջացնում [94]։

Պատանեկության շրջանում անձի առաջատար գործունեության շուրջ գաղափարներ արտահայտել են հոգեբանության տարբեր ներկայացուցիչներ, որոնք հիմնականում միտված են որպես առաջատար գործունեություն այս հասակում դիտել ուսումնամասնագիտական գործունեությունը (Ն. Լեոնտև, Դ. Էլկոնին և այլք)։ Մասնագիտության ընտրությունն իրականում բավական բարդ է, և շատ կարևոր է հաշվի առնել, թե կոնկրետ ինչն է պատճառ հանդիսացել տվյալ մասնագիտության ընտրության համար։

Ա. Ռեանը առանձնացնում է ժառանգական, տնտեսական, ապագա մասնագիտության գրավչության և այլ գործոններ [65]։ Ոչ պակաս կարևոր է նաև պատանեկության վերջին շրջանը, երբ սկսվում է ակտիվ ուսանողական կյանքը, որը , ըստ էության, արդեն կատարած ընտրության արդյունքն է։

Մ. Բուլանովա-Տոպորկովան առաջարկում է ուսանողներին բաժանել երեք մասի՝ նրանք, ովքեր սովորում են ապագայում լավ մասնագետ դառնալու համար, նրանք, ովքեր սովորում են հետագայում գումար վաստակելու համար և վերջապես նրանք , ովքեր դեռևս չեն կողմնորոշվել [19]։ Ահա այս մասին է

խոսում Ա Դոնցովը, երբ նշում է , որ պատանեկության հատկապես վերջին փուլում անձը հաճախ մտովի կառուցում է իր ապագան՝ անցնելով իր կյանքի անավարտ փուլերը, որը և հաճախ պայմանավորում է նրա՝ ապագայի հետ կապված ծրագրերը [31]: Նշենք նաև, որ պատանեկության վերջին շրջանը, որը հաճախ անվանում են նաև ուսանողական տարիք, աչքի է ընկնում նաև անձի վարքի հիմքում ընկած դրդապատճառների գիտակցվածության մակարդակով, որը և թույլ է տալիս անձին ադեկվատ գնահատական տալ սեփական արարքների հնարավոր ելքերին [53]:

2.3. Պատանեկան ճգնաժամի հետազոտությունները

Ինչպես արդեն նշեցինք, պատանեկության շրջանում ի հայտ եկող փոփոխություններից հատկապես կարելի է առանձնացնել անձի ժամանակի ընկալման և դրա օգտագործման առանձնահատկությունները: Հենց այս տարիքային փուլում էր, որ անձի կողմից միառժամանակ կարևորվում և փոխհամաձայնեցվում էին ժամանակային երեք ձևերը և հատկապես ապագան: Ապագայի կարևորումը հանգեցնում է նորանոր նպատակների ձևավորմանը, իսկ նպատակի առկայությունը, ինչպես նշում է Ի. Դուբրովինան, խոսում է առողջ մարդու մասին [62]: Ճգնաժամային այս փուլում նպատակի բացակայությունը, սակայն, կարող է հանգեցնել «էքզիստենցիալ վակուումի», երբ առկա են ներքին դատարկության, ծանձրույթի և այլ զգացողություններ [82]: Անդրադառնալով պատանեկան ճգնաժամին և դրա ընթացքում անձին ուղեկցող դժվարություններին՝ Մալկինա-Պիխը նշում է. «Պատանեկան շրջանում ժամանակային այս երեք

ձևերի միջև հարմոնիայի հասնելը հասարակ խնդիր չէ և հաճախ դժվարությունների առաջ է կանգնեցում անձին» [51, էջ 39]: Խնդիրները շատանում են հատկապես պատանեկության վերջին շրջանում՝ (հեղինակը նշում է 16-19 տարեկանում), երբ ապագան ընկալվում է որպես անորոշությամբ և դժվարություններով լի մի շրջան, որը եկել է փոխարինելու կյանքի լավագույն տարիներին [51]: Անորոշության այս զգացողությամբ էլ հենց շատ հեղինակներ բացատրում են պատանու ճգնաժամային փուլում հայտնվելը, երբ կան բազմաթիվ հարցեր, որոնք չունեն պատասխաններ: Դրանցից հատկապես կարող ենք առանձնացնել կյանքի իմաստի բացահայտման շուրջ մտորումները, որոնք, ինչպես նշում է Գ. Շիհին, այնքան են անհանգստացնում անձին, որ վերջինս ձգտում է ամեն կերպ գտնել դրանց պատասխանները և «դուրս պրծնել» անորոշությունից [44]: Նշենք, սակայն, որ նմանօրինակ հարցադրումները կապված կյանքի իմաստի, իր՝ այս կյանքում զբաղեցրած դիրքի և այլնի հետ, ինչպես ցույց են տվել Ա. Բականովայի հետազոտությունները, ոչ միշտ են անձին գցում անորոշության մեջ, այլ ավելի հաճախ դրանք նպաստում են անձի ներքին պոտենցիալի ակտիվացմանը՝ խթանելով այս փուլում առկա դժվարությունների հեշտ հաղթահարման անձի կարողությունը [13]: Պատանեկան տարիքի խնդիրներից ես - համակարգի շուրջ իր գաղափարներն է առաջ քաշում Հ. Ռեմշմիդտը. հեղինակը մասնավորապես խոսում է անձի իրական և իդեալական ես-երի պայքարի մասին, որոնք հաճախ ներքին կոնֆլիկտի առաջացման պատճառ են հադիսանում [67]: Բացի այդ, նման հարցադրումները հաճախ ուղղված են նրան, որ անձի մոտ երկբևեռ զգացողություն է առաջանում, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ վերջինս չի կարողանում հստակ կողմնորոշվել՝ մի կողմից նա արդեն երեխա չէ, մյուս կողմից դեռևս հասուն անձ էլ համարվել չի կարող [110]: Ահա թե ինչպես է նկարագրում այս վիճակը ժամանակակից ամերիկյան հոգեբանության ներկայացուցիչներից Ս. Սենը՝ «Պատանու համար արդեն իսկ կոտրվել են մանկության երջանիկ տարիները,

սակայն խնդիրը կայանում է նրանում, որ վերջինս դեռևս չի գտել իրեն կյանքում, ինչը և պայմանավորում է ճգնաժամի առկայությունը այս տարիքում» [131]:

Ամերիկացի գիտնականներ Ռ. Գոուլդը, Ջ. Վեյլանտը և Դ. Լևինսոնը պատանեկան ճգնաժամը վերագրում են 16–22 տարեկանին և բնութագրում որպես ոտքի կանգնելու, ծնողների խնամքից ազատվելու ձգտում [25, էջ 135]:

Դ. Լևինսոնի կողմից վաղ պատանեկությունը (ըստ հեղինակի 17-22 տարեկան հասակը) մեկնաբանվում է որպես անցումային մի շրջան, երբ պատանին փորձում է սեփական ուժերով կառուցել իր աշխարհը: Ահա այդ է պատճառը, որ վերջինս անընդհատ կարծես փնտրտուքների մեջ լինի թե՛ իր ընկերական շրջապատի ընտրության, թե՛ մասնագիտական կողմնորոշման և այլ հարցերում: Հեղինակի կարծիքով պատանու մոտ այնպիսի զգացողություն է առաջանում կարծես այս ընտրությունը կարող է կանխորոշել իր կյանքը, և ահա իրավիճակի դժվարության գիտակցումը հաճախ հանգեցնում է նրան, որ պատանին սթրես է ապրում: Ընտրության խնդրի նկատմամբ նման վերաբերմունքը Լևինսոնի խոսքերով կարելի է պայմանավորել այն հանգամանքով, որ դա առաջին մեծ ընտրության հնարավորությունն է պատանու կյանքում և վերջինս փորձ չունի նմանօրինակ խնդիրների լուծման: Այդ է պատճառը, որ Դ. Լևինսոնի կողմից անցումային այս փուլում հատկապես կարևորվում է ծնող-երեխա փոխհարաբերություններում փորձի փոխանակումը, որը, ըստ հեղինակի, կարող է օգնել երեխային ավելի հեշտ կողմնորոշվել ընտրության հարցում [114, 115]:

Ե. Գ . Կադիրովան նշում է, որ պատանեկության շրջանում ճակատագրական որոշումների կայացման անհրաժեշտությունը կարելի է համարել կյանքի ամենակարևոր պահերից մեկը: Միևնույն ժամանակ պետք է հիմք ընդունենք նաև այն, որ պատանեկությունը որոշ հեղինակների կողմից բնորոշվում է որպես «կուրության, անորոշության» շրջան (հեղինակը մեջ է

բերում Միլան Կունդերայի տեսակետը կապված պատանեկության տարիքի հետ) [42]:

Ներքին կոնֆլիկտը պատանեկության շրջանում հաճախ պայմանավորված է լինում անձի մոտ հակասական զգացողությունների ի հայտ գալու հանգամանքով, ներքին անհանգստությամբ, լարվածությամբ, որոնք ի տարբերություն դեռահասության շրջանի՝ այժմ արդեն ավելի գաղտնի բնույթ ունեն [114]:

Հանրի Վալոնը առաձնացնում է ճգնաժամային այս շրջանում ի հայտ եկող այնպիսի հակասական զգացողություններ, ինչպիսիք են սիրո և ատելության, ինքնավստահության և անինքնավստահության և այլ զգացողություններ [ըստ՝ 16]: Արդյունքում պատանեկության առաջին փուլում՝ 16-17 տարեկան հասակում անձի մոտ առաջանում են վախեր, որոնք, մասնավորապես, կապված են մեծանալու հանգամանքի հետ, վախեր սեփական կյանքի համար և այլն [49]: Նշենք, որ որոշ հեղինակներ հենց նմանօրինակ վախերով էլ պայմանավորում են ճգնաժամի առկայությունն այս փուլում: Մասնավորապես Ե. Կադիբովան խոսում է այն մասին, որ եթե մինչ պատանեկության շրջանը մահվան, ծերության հետ կապված մտորումները չեն անհանգստացնում անձին, ապա այժմ արդեն ի հայտ են գալիս նման գաղափարներ, որոնք հանգեցնում են, ինչպես նշում է հեղինակը՝ «էքզիստենցիալ ճգնաժամի», որը պայմանավորված է «անմահության» գաղափարի վերացմամբ և որը պայմանավորում է կյանքի իմաստի շուրջ ձևավորվող նման մտորումների առաջացումը [42]:

Վ. Սլաբոդչիկովի և Ի. Իսակի կողմից առանձնացվում է 17-21 տարեկանը որպես պատանեկության ճգնաժամային շրջան: Հեղինակներն այս հասակում ճգնաժամի առկայությունը պայմանավորում են նոր սոցիալական իրավիճակին հարմարվելու խնդիրներով, որի արդյունքը համարում են պատանու կողմից ուսումնական գործունեության անտեսումը և ժամանակի հիմնական մասը հասակակիցների հետ շփմանը տրամադրումը, որը և

հաճախ նպաստում է պատանհների ոչ ֆորմալ խմբերում ներգրավմանը: Հատկապես ավարտական դասարաններում սովորող աշակերտների մեծամասնության մոտ նկատելի է դառնում ուսման նկատմամբ անտարբեր վերաբերմունք, որը որոշ հեղինակներ պայմանավորում են դպրոցի՝ որպես արդեն ժամանակավոր երևույթի ընկալման հանգամանքով: Պատանին, որը տանը, ծնողների հետ փոխհարաբերություններում փորձում էր ամեն կերպ ինքնուրույն լինել, ընկերական շրջապատում, հասակակիցների հետ հարբերություններում հաճախ ստիպված է լինում կոնֆորմիստական վարք ցուցաբերել՝ խմբի մյուս անդամներից չտարբերվելու համար: Ահա այստեղ է, որ, ինչպես նշում են Վ. Սլաբոդշիկովը և Ե. Իսաևը, ի հայտ է գալիս «անհատականացման ճգնաժամը» [74]: Այս գաղափարին անդրադարձել է նաև Ե. Սոլդատովան, հեղինակը մասնավորապես նշում է՝ «Պատանեկության շրջանում հաճախ ճգնաժամի առաջացման պատճառ կարող է հանդիսանալ մի կողմից այն, որ անձը ցանկանում է պահպանել իր անհատականությունը, մյուս կողմից՝ ձգտում է իր վարքը համապատասխանեցնել սոցիալական սպասումներին» [75, էջ 48]:

Ինչպես ցույց են տվել Ռ. Բայարդի և Դ. Բայարդի կողմից կատարված ուսումնասիրությունները, եթե մինչ տասնյոթ տարեկանը երեխան հոգատար էր, աշխատասեր, ուսման նկատմամբ մեծ ձգտում ուներ, ապա տասնյոթ տարեկանում արդեն իրավիճակը փոխվում է՝ աղջիկները և տղաները սկսում են առավելապես հետաքրքրվել հակառակ սեռի ներկայացուցիչներով՝ ընդ որում հաճախ իրենցից տարիքով մեծ [12]: Այդ և բազմաթիվ այլ պատճառներով ճգնաժամային փուլում անխուսափելի են դառնում ծնողների հետ կոնֆլիկտները: Պատանին, որը հատկապես այս շրջանում մեծ կարիք ունի ծնողի խորհրդի՝ հազվադեպ է ստանում այն [88]: Արդյունքում հաճախ միայնության զգացողություն է առաջանում «նկատվում է շտապողականություն, պատանին ձգտում է որքան հնարավոր է շուտ դառնալ «մեծ», «հասուն» [67]:

Միայնակության նման զգացողության ի հայտ գալը, ինչպես նշում է Ե. Կադիրովան կարելի է պայմանավորել սեփական անձի յուրօրինակության գիտակցման հանգամանքով [42]:

Ինչպես նշում է Մալկինը –Պիխը պատանեկության շրջանում անձը հաճախ կրում է հասուն անձին բնորոշ վարքային դիմակներ, դրսևորում է մեծերի ցուցադրական վարքի ձևերը [52]:

Կ.Ն. Պոլիվանովան առանձնացնում է 18-20 տարեկանը որպես ծնողներից անկախացման ձգտման շրջան [64]: Պատանու մեջ աստիճանաբար ձևավորվում է ինքն իրեն պատկանելու զգացողություն, որն առավել ամրապնդվում է քսան տարեկան հասակում [88]: Ըստ հեղինակի՝ այս ճգնաժամն ուղղված է գտնելու սեփական տեղն ու դերը կյանքում և հասակակիցների միջավայրում, ինչպես նաև սեռադերային կողմնորոշմանը, աշխարհայացքի և արժեքների ձևավորմանը [88, էջ 32]:

Ե. Կադիրովան բնորոշում է ճգնաժամային իրավիճակը նրանով , որ անձը պարզապես փորձում է դառնալ ինքն իր «ծնողը»՝ հաճախ փորձելով անտեսել սեփական ծնողներին [42]:

Ս. Սմիրնովի պնդմամբ ծնողների հետ հարաբերությունների բնույթը հաճախ կարող է պայմանավորել ճգնաժամի ընթացքը պատանեկության շրջանում: «Պատանեկության ճգնաժամ ապրում է յուրաքանչյուր մարդ» , - նշում է հեղինակը, սակայն խնդիրը այստեղ կայանում է նրանում , որ ոմանց համար այն բավական դժվար ընթացք է ունենում , ինչը հատկապես կապված է ինքնակողմնորոշման դժվարությունների հետ և ավելի ակնհայտ է դառնում այն դեպքերում, երբ ծնողները փորձում են երեխայի փոխարեն որոշումներ ընդունել , հատկապես այնպիսի որոշումներ, որոնց վերջինս դեմ է [73]:

Առանձնահատուկ մոտեցում է ցուցաբերում այս խնդրին Աննա Ֆրոյդը: Հեղինակի խոսքերով հաճախակի կոնֆլիկտները ծնողների հետ պայմանավորված են այն հանգամանքով, որ պատանու մոտ առաջանում է մեկին սիրելու ձգտում, նրա սրտում ծնողի զբաղեցրած տեղը աստիճանաբար

սկսում է զբաղեցնել արդեն այլ մեկը [Ըստ՝ 52]: Ճգնաժամային փուլում ծնող-պատանի հարաբերությունների վատթարացումը որոշ հեղինակներ պայմանավորում են նրանով, որ երեխայի մեծ երևալու ձգտումը, վարքային համապատասխան դրսևորումները ծնողի կողմից բացասական հակազդման են արժանանում [62]: Նման դրսևորումներից հատկապես առանձնացվում են տնային հանձնարարությունների կատարման անտեսումը, հագուստը, խոսելաձևը և այլն:

Ա. Բոլոտովան և Օ. Մուլչանովան անդրադառնում են տնից փախուստներին հատկապես 17-18 տարեկանում, որոնք, ըստ հեղինակների, մեծամասամբ ցուցադրական բնույթ ունեն [16]:

Գերմանացի գիտնական Գ. Թոմեն գտնում է, որ ճգնաժամը տարբեր սերունդների ներկայացուցիչների մեջ տարբեր հանգամանքներով է պայմանավորված և տարբեր շրջաններում է հայտվում [79]: Այսպես 1890–1930–ական թվականներին ծնվածների ճգնաժամը 15-16 տարեկանում է ի հայտ եկել և պայմանավորված է եղել սոցիալական պայմաններով, իսկ 1920–1930–ականներին ծնվածների մեջ ճգնաժամը դրսևորվում է նրանց կյանքի երրորդ տասնամյակում, «...այսինքն այն ժամանակ, երբ կայանում էր Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությունը: Այդ երիտասարդ տղամարդիկ իրենց հայրերի սերնդի ճակատագրական որոշումների զոհերն էին և դեռ չէին հասցրել ավարտել անցյալի իմաստավորումը» [79, էջ 180]:

Բ. Լիվեհուդը գտնում է, որ պատանեկան ճգնաժամի ընթացքում տեղի է ունենում անձնավորության արթնացում: Եթե այդ արթնացումը տեղի չի ունենում, ապա «...Անձնավորությունն իր միջավայրից կախյալ վիճակի մեջ է մնում կամ էլ բողոքողի կեցվածք է ընդունում այն ամենի նկատմամբ, ինչն ընկալվում է որպես հեղինակություն...» [49, էջ 149]: Ես-ի արթնացումն իր հետքերում է այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ «Ո՞րն է իմ տեղը կյանքում», «Իրականում ինչպիսի՞ն է այս աշխարհը. ի՞նչ ուժեր են այստեղ գործում» [49, էջ

154–155]: Այս ճգնաժամի մյուս առանձնահատկությունը կենսաբանական և հոգևոր սեռականությունների միջև ներդաշնակության ստեղծումն է:

Համաձայն Ս. Սենի ընտանեկան կոնֆլիկտների սրման պիկային շրջանը, որը համապատասխանում է ճգնաժամային փուլի հետ 17 տարեկանն է, որից հետո, մինչև 20 տարեկանը, դրանք գրեթե վերանում են, կամ հազվադեպ բնույթ են կրում [131]:

Որոշ հեղինակներ ճգնաժամային են համարում 14- 18 տարեկանը և բնութագրում որպես հուզական լարվածության մի շրջան, ինչի ազդեցության տակ էլ պատանին հաճախ դիմում է դեհանտ վարքի:

Ի. Վ. Դուբրովինայի կողմից մանրամասն նկարագրվում են Ս.Ա. Կուլակովի կատարած փորձերը հենց այս տարիքային փուլում, որոնք ապացույցն են հանդիսանում այն փաստի, որ հատկապես տղաների շրջանում պատանեկության ճգնաժամին հաճախ ուղղորդում են ակոհիոլը, թմրադեղերը և այլն: Եվ հետաքրքիր է այն, որ հարցվողների մեծամասնությունը իրենց նման վարքը պայմանավորում են հուզական լարվածությունից խուսափելու ձգտմամբ: Հեղինակը մասնավորապես նշում է՝ «Նրանցից շատերը նշում են, որ դա թույլ է տալիս իրենց մոռանալ ծնողների հետ վեճերը, առօրյա կյանքի դժվարությունները, նպաստում է տրամադրության բարձրացմանը և այլն» [62, էջ 85]: Հետաքրքիրն այստեղ այն է, որ նրանցից շատերը չեն նշում այն փաստը, որ իրենց նման պահվածքը առավել հաճախ պայմանավորված է ուրիշներին նմանվելու, նրանցից ետ չմնալու և վերջապես «մեծ երևալու» ձգտմամբ, ինչը, ըստ Ա. Կ. Բոլոտովայի, առաջնային գործոն կարելի է համարել նման պահվածքի դրսևորման համար [16]: Ճգնաժամային այս փուլում ադդիկտիվ վարքի մանրամասն ուսումնասիրությամբ է զբաղվել նաև Վ. Երեմենկոն, ով որպես նման վարքի դրսևորման հիմնական պատճառ համարում է անձի հարմարման գործընթացի խաթարումները թե՛ սոցիալական, թե՛ կենսաբանական մակարդակներում [34]: Նման վարքի ընտրությունը, ըստ Վ. Մուխինայի, հատկապես այս ճգնաժամային շրջանում,

հաճախ կարող է ճակատագրական լինել, քանի որ պատանու մեջ այնպիսի կարծիք է ձևավորվում, թե դա միակ ճիշտ ընտրությունն է, և խնդիրների լուծմանն ուղղված այլ ճանապարհ փնտրելու ցանկությունը պարզապես վերանում է [56]:

Այս իրավիճակում, ինչպես նշում են շատ հեղինակներ սուիցիդալ վարքի դրսևորման վտանգ կա: Մալկինա - Պիխը նման ձգտումների առաջացումը պայամանավորում է նրանով, որ «գոյատևման պայմաններին պատանիների չհարմարվելը, հաճախ նրանց մոտ թյուր կարծիք է ստեղծում, թե իրենք չեն համապատասխանում կյանքին» [88]:

Սուիցիդալ վարքի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ինքնասպանության փորձերը հատկապես տարածված բնույթ են կրում կոնկրետ 17 տարեկան հասակում, երբ ներանձնային կոնֆլիկտը հաճախ բարձր մակարդակում է գտնվում [16]: Թեպետ որոշ հեղինակներ փորձում են չկոնկրետացնել այդ թիվը՝ առանձնացնելով 15-17 տարեկանն ընկած ժամանակահատվածը, որպես մի շրջան, երբ սուիցիդները կտրուկ շատանում են [52]: Նշենք նաև, որ ամերիկյան հոգեբանության մեջ սուիցիդի դրսևորման տարիքային շրջանակները ամփոփվում են 13-24 տարիքային շրջանում [118]:

Գեյլ Շիհիի մեկնաբանությամբ դա հաճախ պայամանավորված է նրանով, որ «պատանին միգուցե և «տեխնիկապես» պատրաստ է կյանքին, նրան սովորեցրել են հաղթահարել կյանքի տարբեր դժվարություններ, սակայն նրան չեն սովորեցրել հասկանալ իր ներքինը» [88]:

Ա. Ա. Բականովայի կարծիքով ճգնաժամային այս փուլում կարևորագույն խնդիր է այն, որ պատանին կարողանա ճիշտ ձևով օգտագործել իր ներքին պոտենցիալը՝ դրանով իսկ արդյունավետ կերպով լուծում տալ իր բոլոր խնդիրներին՝ ադրիկտիվ վարքի ճանապարհը ընտրելու փոխարեն [13]:

Պատանեկան ճգնաժամի հաջորդ և հիմնական բնորոշ խնդիրներից կարելի է առանձնացնել անձի կողմից իր ֆիզիկական տվյալներին չափից ավելի ուշադրության արժանացումը, որի արդյունքը լինում են հաճախ

սեփական արտաքինի ոչ ադեկվատ գնահատականները՝ մասնավորապես նրան հաճախ թվում է, որ մարմնի այս կամ այն հատվածը չափից ավելի մեծ է կամ փոքր և այլն:

Հ. Ռեմշմիդտի տվյալների համաձայն թե՛ դեռահասության վերջում, թե՛ պատանեկության շրջանում ճգնաժամի առկայությունը կարելի է պայմանավորել այն հանգամանքով, որ սեռական հասունացման ընթացքում անձի մոտ ի հայտ եկող ֆիզիկական փոփոխությունները հաճախ վերջինիս մտերիմների կողմից ոչ ադեկվատ ձևով են գնահատվում, մինչդեռ պատանին դեռ նոր է սկսում հարմարվել իր նոր կերպարին և նման գնահատականները նրան կարծես կոտրում են: Ինչ վերաբերում է «ինտենսիվ ինքնահետապնդմանը» (ինտենսիվ հետապնդում ասելով՝ հեղինակը մատնանշում է պատանու կողմից սեփական մարմնին չափից ավելի ուշադրության արժանացնելու և հասակակցիների հետ մշտապես համեմատվելու անձի միտումը) այս ճգնաժամային փուլում, ապա ըստ հեղինակի, այն վաղ թե ուշ հանգեցնում է «նարցիսային ճգնաժամի», որի համար նպաստավոր հանգամանք է հանդիսանում այն, որ պատանիները մեծամասամբ գաղտնի են պահում իրենց նման մտորումները՝ ծիծաղելի չթվալու համար [67]: Արդյունքում, ինչպես նշում է Վ. Սլաբոդչիկովը, պատանին համառորեն իր մոտ ինչ- ինչ ֆիզիկական թերություններ է փնտրում, անգամ եթե դրանք իրականում գոյություն չունեն [74]:

Պատանեկան ճգնաժամի ընթացքում անձին բնորոշ բնութագրականներից է նաև էմպատիկ զգացողությունների սրումը: Վ. Մուխինայի տվյալների համաձայն այս շրջանում դիմացինի հուզական վիճակը հեշտությամբ կարող է փոխանցվել պատանուն, ինչը նպաստում է նրան, որ վերջինս ավելի շուտ վիրավորվող, հուզվող, ավելի զգացմունքային լինի [55]: Այս դեպքում հատկապես մեծ վտանգ կա այն առումով, որ նման բուռն զգացմունքները, որոնք տանջում են անձին, վերջինս չի կարողանում արտահայտել, ինչը հանգեցնում է «չարտահայտվածի կուտակմանը» և

հետագայում արդեն պողոթնում է ունենում, սակայն ոչ թե խոսքերի միջոցով, այլ հաճախ ինչ որ երաժշտության, բանաստեղծությունների, որոնք ճգնաժամային այս փուլին հատկապես բնորոշ են [54]: Հաճախակի ի հայտ եկող զգացողություններ են դառնում ագրեսիան, անհանգստությունը, դեպրեսիվ վիճակները , ցածր կամ հակառակը բավական բարձր տրամադրությունը, ախորժակի բացակայությունը կամ շատակերությունը, ցածր ինքնագնահատականը, հետաքրքրությունների ցածր մակարդակը , անօգնականության զգացողությունը և այլն [131]:

Պատանեկան ճգնաժամի առկայությունը շատ հեղինակներ պայմանավորում են նրանով, որ պատանին պիտի ինքնուրույն կատարի իր կյանքի կարևորագույն ընտրություններից մեկը՝ մասնագիտության ընտրությունը և դա նրան դժվարին կացության մեջ է զցում: Քանի որ, ինչպես նշում է նշում է Վ. Շուբկինը՝ «Սխալի գինը այստեղ կլինի ոչ այլ ինչ, քան անիմաստ կորցրած կյանքի տարիներ» [ըստ՝ 62]: Խնդիրը այստեղ այն է, որ բարձր դասարանցիները ոչ բավարար չափով գիտեն սեփական անհատական - հոգեբանական առանձնահատկությունները, այդ է պատճառը, որ թե՛ անձնային, թե՛ մասնագիտական ինքնակողմնորոշումը որոշակի առումով դժվարանում է [77]:

Ռուսական հոգեբանության մեջ որոշ հեղինակներ և մասնավորապես Ն. Տրուսովան ճգնաժամային են համարում այն շրջանը , երբ պատանին մուտք է գործում արդեն մասնագիտական կրթարան: Հեղինակը խոսում է նոր սոցիալական դերի, նոր միջանձնային փոխհարաբերությունների մասին, որոնք անձին հարաբերականորեն ավելի «անկախ, ինքնուրույն են դարձնում, ինչը նպաստում է որոշակի լարվածության առաջացմանը: Այդ է պատճառը, որ Տրուսովայի կողմից անց կացված հետազոտությունների արդյունքում պարզվել է , որ հարցվող պատանիներից միայն 27, 7 տոկոսն է պատրաստ մասնագիտական գիտելիքների ձեռք բերմանը և հետևաբար մասնագիտության յուրացմանը, ինչը ըստ հեղինակի վկայում է ճգնաժամի ոչ

նորմատիվ ընթացքի մասին [80]: Մասնագիտության ընտրությունը հանգեցնում է նրան, որ պատանին սկսում է իրեն արդեն պատասխանատու զգալ սեփական արարքների համար և չի բացառվում, որ նա հաճախ կարող է նաև սխալվել, ինչը երբեմն նպաստում է սեփական հնարավորությունների թերագանահատմանը և նպաստում ճգնաժամի դրսևորմանը [49]: Արդյունքը լինում է այն, որ, ինչպես նշում է Կ. Յունգը, պատանին բախվում է իրական կյանքի պահանջներին (դրանով էլ հեղինակը պայմանավորում է ճգնաժամի դրսևորումը այս տարիքում), հատկապես այն դեպքերում, երբ կան կոնկրետ նպատակներ, սպասումներ, որոնք իրագործելը երբեմն նույնիսկ անհնար է թվում [Ըստ՝ 52]: Պատանեկան ճգնաժամին բնորոշման խնդիրներից խուսափելու կամ ինչպես նշում է ինքը՝ հեղինակը, դրան «նորմատիվ ընթացք տալու» լուծումը կարող է լինել հոգեբանների կողմից տասնվեց-տասնյոթ տարեկան անձանց հոգեբանական աջակցություն ցուցաբերելը, որտեղ հոգեբանական աշխատանքները ուղղված կլինեն նրան, որպեսզի անձը կարողանա ճանաչել ինքն իրեն, ձևավորել արժեքների միմյանց չհակասող համակարգ, բարձրացնել ինքնագնահատականը և այլն է [77]: Հատկապես այն բոլոր դեպքերում, երբ պատանուն չի հաջողվել իրականացնել իր նպատակները կապված ընդհանուր մասնագիտական կրթության ձեռք բերման, կամ կոնկրետ մասնագիտության ձեռք բերման հարցում, ինչը, ինչպես նշում է Ի Կոնը կարող է մեծ հարված լինել պատանու համար ճգնաժամային այս շրջանում: Կոնկրետ պատանեկան ճգնաժամը հեղինակը կապում է դեռևս չգիտակցվող ծնողական պահանջմունքի ակտուալացման, ինչպես նաև ինքնուրույնության կարգավիճակին հասնելու դժվարությունների հետ [44]:

Ս. Խուդոյանը տարբերակում է ճգնաժամերի երկու տեսակ՝ ինքնագիտակցության վերակառուցմամբ և տարիքային անցմամբ պայմանավորված ճգնաժամեր: Պատանեկան ճգնաժամն, ըստ հեղինակի, պայմանավորված է անցումայնությամբ: Անցումային տարիքներին տրվում են

հետևյալ բնութագրերը. «...անցումային շրջանը նախորդ տարիքային փուլի վերջի և հաջորդ տարիքային փուլի սկզբի միջև ընկած ժամանակաշրջան է, յուրահատուկ լատենտ շրջան, որի ընթացքում փոխվում են օրգանիզմի և հոգեկան համակարգի զարգացման ծրագրերը: Որպես լատենտ շրջաններ՝ անցումային տարիքներում դեռևս նոր տարիքային փուլի դրսևորումները բացակայում են, վերակառուցումները տեղի են ունենում խորքային մակարդակում, ասենք՝ տեղաշարժեր են սկսվում էնդոկրին համակարգում կամ, ասենք, անգիտակցական ոլորտում: Այդ վերակառուցումները հաճախ ընկալվում են որպես անորոշ ցանկություններ (ուզում եմ, չգիտեմ, թե ինչ), անորոշ տխրություն, փոխվելու, հասունանալու, մեծանալու յուրահատուկ զգացողություն, անորոշ տագնապներ, աստենիկ զգացողություններ: Այս անորոշությունն ի հայտ է գալիս նաև սոցիալական ոլորտում. մարդը հայտնվում է անորոշ սոցիալական դիրքում՝ ոչ երեխա է, ո՛չ դեռահաս, ո՛չ դեռահաս է, ո՛չ երիտասարդ, ո՛չ երիտասարդ է, ո՛չ տարիքով մարդ:

Անցումը կարելի է բնութագրել նաև որպես տարիքային մի հիմնախնդրի լուծման գործընթացի ավարտման, ամփոփման և հաջորդ տարիքային հիմնախնդրին անցնելու նախապատրաստական շրջան, երբ տեղի է ունենում նախորդ տարիքի ընթացքում կուտակված քանակական փոփոխությունների վերաճում որակականի, ինչն էլ, ըստ մեզ, պայման է և, ինչ-որ տեղ, նաև ազդանշան է հանդիսանում հաջորդ տարիքային փուլին անցնելու համար, այսինքն՝ մարդը պատրաստ է լինում անցնելու հաջորդ տարիքային հիմնախնդրի լուծմանը» [83, էջ 68]:

2.4. Ինքնուրույնության պահանջմունքի առանձնահատկությունները պատանեկան տարիքում և դրա ֆրուստրացիան

Ինչպես նշեցինք նախորդ պարագրաֆում, պատանեկան տարիքում ինքնուրույնության պահանջմունքը մտնում է զարգացման նոր, ամենաբարձր մակարդակը և հանդես է գալիս որպես ինքնավարության ձգտում, պահանջ: Ինքնավարությունը պատանեկան տարիքում որպես հոգեբանական երևույթ ունի մի շարք առանձնահատկություններ. նախ և առաջ այն դրսևորվում է որպես ծնողների խնամքից դուրս գալու, ինքն իրեն հոգ տանելու ձգտում, ցանկություն: Այս ձգտման դրսևորումներից է օրինակ՝ տնտեսական անկախությանն ուղղված պատանիների ձգտումն ու քայլերը. շատերը փորձում են փող վաստակել(ավելի շատ տղաներին է բնորոշ, չնայած վերջին տասնամյակում աղջիկներն էլ բավական ակտիվ են այս հարցում): Պատանիները ձգտում են դուրս գալ ծնողների վերահսկողությունից՝ խիստ վիրավորվում են, եթե ծնողները փորձում են հուշել, թե նրանք ինչ պիտի անեն, ինչ ուտեն, ինչ հագնեն, երբ տուն գան, հատկապես, եթե դա արվում է ընկերների մոտ: Պատանիները միմյանց ձեռք են առնում, եթե խիստ կախված են ծնողներից: Պատանիների և նրանց ծնողների միջև կոնֆլիկտների հիմնական թեմաներից մեկը ծնողների վերահսկմանն ու պատանիների ինքնադեկավարման հիմնախնդրին է վերաբերում: Իզուր չէ, որ հենց այս տարիքում է ամենաբուռն ձևով ի հայտ գալիս այսպես կոչված հայրերի և որդիների պայքարը: Ըստ որում, նկատելի է, որ ծնողների մեջ հակառակ ձգտումն է բավական ակտիվ դրսևորվում՝ նրանք հաճախ ամեն կերպ ձգտում են իրենցից կախման մեջ պահել պատանիներին(սա ավելի շատ մեր մենտալիտետին է բնորոշ, հիշենք հայտնի ասացվացքը, թե երեխան բոլոր տարիքներում էլ ծնողի համար մնում է երեխա):

Երկրորդ՝ ինքնավարության պահանջմունքի արտահայտություն կարելի է համարել հասուն կյանքում կողմնորոշվելուն, աշխարհայացք ձևավորելուն

ուղղված պատանիների ձգտումը: Հենց այս տարիքում են պատանիներն ակտիվորեն փնտրում արժեքներ, ձգտում են կողմնորոշվել հասուն միջանձնային հարաբերությունների սկզբունքների մեջ, մասնագիտությունների համակարգում, ցանկանում են գտնել իրենց տեղը կյանքում, բացահայտել գոյության իմաստը [82], փորձում են կառուցել ուրվագծում իրենց կյանքի ծրագիրը: Առանց այս հարցերի մեջ կողմնորոշվելու, պատանին չի կարող լինել ինքնուրույն:

Երրորդ՝ պատանիները ձգտում են ինքնուրույն ապրել. արևմուտքում հաճախ են այս տարիքում լքում հայրական տունը, նույնիսկ բարեկեցիկ ընտանիքների պատանիները սկսում են աշխատել, շատերը, հաճախ ընտանիքի կամքին հակառակ, ամուսնանում են: Իզուր չէ, որ այս տարիքն արևմուտքում բնութագրվում է որպես բունը լքելու տարիք [130]: Ռ. Գոուլդը, Ջ. Վեյլանտը և Դ. Լևինսոնը պատանեկան տարիքը՝ 16–22 տարեկանը, հետևյալ կերպ են բնութագրում. «Ծնողներից հեռացման, հասունացման շրջան է, ինքնուրույնության, անկախության պահանջ է ի հայտ գալիս...» [25, էջ 135]:

Պետք է ասել, որ տղաների և աղջիկների ինքնուրույնության և՛ պահանջմունքը և՛ դրսևորումները տարբեր են: Տղաների մեջ ինքնուրույնության ձգտումն առավելապես դրսևորվում է ֆինանսական ազատագրման ձգտումով, աշխատանքային առաջընթացի ձևով, ավելի անկախ կյանքով, այն դեպքում, երբ աղջիկներն ինքնուրույնության նման մակարդակ չեն դրսևորում: Նրանց ինքնուրույնությունը ոչ այնքան գումար վաստակելու կամ աշխատանքային կարիերայի մեջ է ի հայտ գալիս, այլ սեփական ընտանիքն ունենալու ձգտմամբ, ինչով նրանք անկախանում են իրենց ընտանիքներից: Սա թերևս ինքնուրույնության պահանջմունքի և ինքնավարության ազգային առանձնահատկություն է:

Ինքնուրույնության պահանջմունքի ֆրուստրացիայի հիմնախնդիրը ընդհանրապես և հատկապես տարիքային տեսանկյունից,

հարաբերականորեն աղոտ է հետազոտված: Ինքնուրույնության տեսության համահեղինակ Ռ. Մ. Ռայանն ուղղակի կապ է տեսնում ինքնուրույնության պահանջմունքի բավարարման և բարեկեցության միջև: Ըստ հեղինակի, եթե այս պահանջմունքը «...սոցիալական առումով բավարարված է, մարդիկ ավելի կենսունակ, մոտիվացված և բարեհարմար են զգում իրենց և հակառակը. եթե դժվարանում կամ ֆրուստրացվում է անձի մոտիվացվածությունն իջնում է, անբարեհարմարություն է առաջանում ...այս պահանջմունքի բավարարման հետ կապված դժվարություններն են ընկած հոգեախտաբանության բազմաթիվ ձևերի առաջացման հիմքում» [125, էջ 1]:

Հ. Փարենսը, խոսելով մանկիկության տարիքի երեխաների հետազոտական վարքի մասին, նշում է, որ «...ինքնուրույնության պահանջմունքի նշանակալի ֆրուստրացիան կարող է էապես նվազեցնել սովորելու, նորն իմանալու ցանկությունը դրանով իսկ ազդել երեխայի զարգացման գործընթացի վրա» [61, էջ 62]:

Մասնագիտական գրականության մեջ, բացի վերոնշյալ ակնարկներից, ինքնուրույնության պահանջմունքի ֆրուստրացիայի և դրա տարիքային դրսևորումների մասին այլ նյութեր մենք չկարողացանք գտնել:

Վաղ մանկական հասակում, ինքնուրույնությունը, ինչպես նշեցինք, ֆիզիկական ազատության ձևով է դրսևորվում, իսկ այդ պահանջմունքի ֆրուստրացիան առաջ է բերում լաց, դիմադրություն(ասենք, բարուրում կապած երեխան լաց է լինում, փորձում է ազատել ձեռքերը):

Ավելի ուշ տարիքում, երբ ինքնուրույնության պահանջմունքը դրսևորվում է որպես ինքնուրույն գործողություններ կատարելու ցանկություն, ֆրուստրացիան բացի լացից, առաջ է բերում նաև ագրեսիվ վարք (ասենք, եթե երեխան փորձում է գդալով ճաշ ուտել, թափում է ճաշը վրան, ինչի համար ծնողը վերցնում է գդալը երեխայի ձեռքից, ապա երեխայի կողմից հնարավոր է բավական բուռն հակազդում՝ ափսեն կամ սեղանի վրայի իրերը շարտել, մորը խփել, վատ բառեր ասել և այլն):

Նախադպրոցական տարիքում ինքնուրույնության պահանջմունքի ֆրուստրացիան, բացի ագրեսիայից առաջ է բերում նաև երեք տարեկանի ճգնաժամին բնորոշ ախտանշաններ՝ ասենք, նեգատիվիզմ, եթե փորձում են ինչ որ բան պարտադրել երեխային կամ արժեզրկում ու բունտ, եթե նրա ցանկությունները չեն կատարում:

Կրտսեր դպրոցական տարիքում ինքնուրույնության պահանջմունքի ֆրուստրացիան առավելապես դրսևորվում է բունտերով, մեծերի հետ կոնֆլիկտների ձևով:

Առավել բուռն դրսևորում ունի ինքնուրույնության պահանջմունքի ֆրուստրացիան դեռահասության տարիքում: Ինչպես և երեք տարեկանի շրջանում, այս դեպքում էլ կարևոր հակազդումներից է նեգատիվիզմը, բունտը, սակայն բունտն ունենում է ամենատարբեր դրսևորումներ՝ տանից փախուստներ, ծնողների հետ չխոսել, նրանց կոպտել, ագրեսիվ վարքի զանազան դրսևորումներ(ընդհուպ մինչև հայիոյանքներ, ֆիզիկական ագրեսիա):

Վերջապես պատանեկան տարիքում ինքնուրույնության պահանջմունքի ֆրուստրացիան, ըստ մեզ, առաջ է բերում այս տարիքի ճգնաժամը, որի հիմնական ախտանշաններն են. «աշխարհայացքի, արժեքների փոփոխությունը, բունտը ծնողների կողմից պարտադրվող արժեքների, աշխարհայացքային ցուցումների նկատմամբ, քմահաճ վարքի դրսևորումը, անօգնականության զգացողությունը, ոչ ադեկվատ վարք դրսևորելու տազնապները, զանազան փիլիսոփայական, աշխարհայացքային հարցերի պատասխանների որոնումները, իդեալների հաճախակի փոփոխությունը, կյանքի անիմաստության զգացողությունը, տազնապայնությունը, աշխատանքի վայրերի, մասնագիտությունների, զուգընկերների և ընկերների հաճախակի փոփոխությունը, թշնամանքը ընտանիքի անդամների նկատմամբ, նմանակման համար օբյեկտների փնտրտուրը» [83, էջ 59]:

Ըստ էության, այս ախտանշանների մեծ մասը վկայում են մի կողմից պատանու ինքնուրույնության պահանջմունքի ակտուալացման, ինքնուրույնության հասնելուն ուղղված ակտիվ գործունեության, երբեմն նույնիսկ պայքարի, ինչպես նաև ինքնուրույնության պահանջմունքի ֆրուստրացիայի մասին: ախտանշանների մի մասը պայմանավորված է պատանու ինքնուրույնության ձգտմամբ պայմանավորված որոնումներով, ինքնուրույն գոյության համար անհրաժեշտ կողմնորոշման հիմքի (Պ. Յա. Գալպերին)՝ ինֆորմացիայի ձևավորման դժվարություններով(նոր աշխարհայացքի, արժեքների ձևավորումը, կյանքի իմաստի որոնումները, փիլիսոփայական հարցերի մեջ խորանալը, իդեալների որոնումները և այլն), ինքնուրույնությունը կաշկանդող իրողությունների դեմ պայքարով, ասենք, ծնողների և ընդհանրապես մեծերի կողմից պարտադրվող արժեքների, փիլիսոփայության, վարքի նորմերի դեմ բունտով(ըստ էության հայրեր և զավակներ պայքարը պատանու պայքարն է ինքնուրույնության համար): Մի շարք ճգնաժամային ախտանշաններ պայմանավորված են ուղղակի պատանու ինքնուրույն գոյությանը պատրաստ չլինելով (դրանցից կարելի է նշել տազնապներն ապագայի նկատմամբ, վախն անկախանալուց, մեծերի աշխարհից), ինքնուրույն գոյության օբյեկտիվ դժվարություններով(մասնագիտությունների, ընկերների, զուգընկերների հաճախակի փոփոխությունները, ոչ ադեկվատ վարք դրսևորելու տազնապները և այլն): Ճգնաժամային ախտանշաններից շատերը պայմանավորված են ինքնուրույնության պահանջմունքի ֆրուստրացիայով՝ օրինակ, սոցիալ-տնտեսական կախյալությամբ(ծնողների հետ կոնֆլիկտները հաճախ հենց այս հողի վրա են տեղի ունենում), ծնողների կողմից պատանուն կախյալության մեջ պահելու ենթագիտակցական ձգտմամբ, կախյալությունից ազատագրվելու ցանկության ու հնարավորությունների, նաև տազնապների ներհոգեկան բախմամբ:

Այսպիսով, ամփոփելով շարադրվածը, փորձենք ձևակերպել մեր հետազոտությունների հիմքում ընկած վարկածը. **պատրանեկան ճգնաժամը պայմանավորված է ինքնուրույնության հասնելու, անկախանալու օբյեկտիվ և սուբյեկտիվ դժվարություններով, ինքնուրույնության պահանջմունքի ֆրուստրացիայով:**

Ճգնաժամը մեղմ է ընթանում այն դեպքերում, երբ ինքնուրույն գոյության անցնելու օբյեկտիվ և սուբյեկտիվ խոչընդոտները տարբեր հանգամանքների բերումով քիչ են կամ հեշտությամբ հաղթահարվում են և հակառակը՝ ճգնաժամը սրվում է, երբ պատանին ի վիճակի չի լինում հասնել հարաբերական անկախության և ինքնավարության:

**ԳԼՈՒԽ 3. ՊԱՏԱՆԵԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ, ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԻՆՔՆՈՒ-
ՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԵՎ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ
ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔԻ ՖՐՈՒՍՏՐԱՑԻԱՆ. ԷՄՊԻՐԻԿ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ**

3.1. Էմպիրիկ հետազոտության ծրագիրը և մեթոդական համակարգը

Էմպիրիկ հիմնախնդրի էությունը մենք տեսնում ենք պատանեկան ճգնաժամի և այս տարիքում ինքնուրույնության հասնելու օբյեկտիվ ու սուբյեկտիվ դժվարությունների, ինքնուրույնության պահանջմունքի ֆրուստրացիայի միջև կապի առկայության փաստական հիմնավորման մեջ:

Էմպիրիկ հետազոտության նպատակն է՝ պարզել, թե պայմանավորված են արդյո՞ք պատանեկան ճգնաժամի առաջացումն ու ընթացքը ինքնուրույնության հասնելու օբյեկտիվ ու սուբյեկտիվ դժվարություններով, ինքնուրույնության պահանջմունքի ֆրուստրացիայով:

Էմպիրիկ հետազոտության խնդիրներն են.

1. Էմպիրիկորեն հետազոտել ինքնուրույնության առանձնահատկությունները պատանեկան տարիքում, պարզել, թե ինչ դժվարությունների են բախվում պատանիները ինքնուրույնության հասնելու ճանապարհին, ինչ առանձնահատկություններ ունի այս պահանջմունքի ֆրուստրացիան:
2. Դասակարգել պատանիներին ըստ ինքնուրույնության պահանջմունքի ֆրուստրացվածության մակարդակի:
3. Էմպիրիկ հետազոտության ենթարկել պատանեկան ճգնաժամի ընթացքի առանձնահատկությունները, հիմնական ախտանշանները:
4. Էմպիրիկական հետազոտության ենթարկել ինքնուրույնության հասնելու դժվարությունների, ինքնուրույնության պահանջմունքի

ֆրուստրացվածության մակարդակի և պատանեկան ճգնաժամի ընթացքի առանձնահատկությունների կապը:

5. Քանակական և որակական վերլուծության ենթարկել հետազոտության արդյունքները:

Հետազոտության մեթոդները. կիրառվել են զրույցի, հարցման(մշակվել են հարցարաններ պատանիների համար) մեթոդները, ինքնուրույնության որոշման, Ջ. Ռոթթերի վերահսկման տեղակայման թեստերը), Ս. Խուդոյանի կողմից մշակված զարգացման ճգնաժամերի ինքնաիդենտիֆիկացիոն մեթոդիկան(հարմարեցված է պատանեկան ճգնաժամի համար):

Էմպիրիկ հետազոտություններն իրականացվել են 2010- 2013 թթ. Գյումրիի Մ.Նալբանդյանի անվ. Պետական մանկավարժական ինստիտուտի, Գյումրիի «Պրոգրես» համալսարանի բակալավրիատի և մագիստրատուրայի հումանիտար և բնագիտական ֆակուլտետների 224 ուսանողների (17-22 տարեկան 121 աղջիկ և 103 տղա) հետ:

Հետազոտության փուլերը

Առաջին փուլում հետազոտություններն ուղղված էին պարզելու ինքնուրույնության առանձնահատկությունները պատանեկան տարիքում, այն դժվարությունները, որոնց բախվում են պատանիները ինքնուրույնության հասնելու ճանապարհին, այս պահանջմունքի ֆրուստրացիայի առանձնահատկությունները: Այս փուլում կիրառվել են ինքնուրույնության որոշման և Ջ. Ռոթթերի վերահսկման տեղակայման թեստերը, Ս. Խուդոյանի կողմից մշակված ինքնուրույնության հետազոտման հարցարանը (պատանիների և ուսանողների համար մշակված), զրույցի մեթոդը: Հետազոտությանը մասնակցել են 224 պատանի:

Երկրորդ փուլը նպատակ էր հետապնդում Էմպիրիկական հետազոտության ենթարկել պատանեկան ճգնաժամի ընթացքի

առանձնահատկությունները և հիմնական ախտանշանները: Այս փուլում կիրառվել են զրույցի և հարցման մեթոդներ:

Երրորդ փուլը նպատակ էր հետապնդում էմպիրիկական հետազոտության ենթարկել ինքնուրույնության հասնելու դժվարությունների, ինքնուրույնության պահանջմունքի ֆրուստրացվածության մակարդակի և պատանեկան ճգնաժամի ընթացքի առանձնահատկությունների կապը, քանակական և որակական վերլուծության ենթարկել հետազոտության արդյունքները:

3.2. Պատանեկան տարիքում ինքնուրույնության և դրան հասնելու դժվարությունների էմպիրիկական հետազոտության ընթացքը

Հետազոտություններն իրականացվել են 2010-2011 թթ. Գյումրիի Մ. Նալբանդյանի անվ. Պետական մանկավարժական ինստիտուտի, Գյումրիի «Պրոգրես» համալսարանի բակալավրիատի և մագիստրատուրայի հումանիտար և բնագիտական ֆակուլտետների 224 ուսանողների հետ (17-22 տարեկան 121 աղջիկ և 103 տղա):

Այս էտապում հետազոտություններ ենք անցկացրել Ջ. Ռոթթերի վերահսկման տեղակայման (локус контроля), ինքնուրույնության մակարդակի որոշման թեստերով և պատանիների ինքնուրույնության աստիճանի որոշման համար Ս. Խուդոյանի կողմից մշակված հարցարանով: Երեք հետազոտությունների արդյունքները համեմատական հետազոտության են ենթարկվել:

Երեք մեթոդիկաների կիրառումը նպատակ էր հետապնդում բարձրացնել հետազոտության հավաստիության մակարդակը (հետազոտության հավաստիության կարևորագույն ցուցանիշ է այն, որ տարբեր մեթոդիկաներով ստացվում են նույն կամ մոտ արդյունքներ):

Ջ. Ռոթթերի վերահսկման տեղակայման թեստի ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ այս մեթոդիկան ուղղակիորեն ցույց է տալիս նաև անձի ինքնուրույնության ու անկախության մակարդակը [86]: Հետազոտությունները վկայում են, որ ինտերնալների մոտ բարձր է ինքնուրույնության մակարդակը, իսկ էքստերնալների մոտ՝ ցածր [66, 85]:

Ըստ Ջ. Ռոթթերի ինտերնալությունն ու էքստերնալությունը անձնային տիպեր չեն, գոյություն ունի կոնտինում, որի մի բևեռում բարձր ինտերնալությունն է, մյուսում՝ էքստերնալությունը: Հետազոտությունները ցույց են տալիս, որ ինտերնալության մակարդակը տարիքի և անձի հասունացման հետ բարձրանում է, իսկ էքստերնալությունը՝ նվազում. օրինակ, դեռահասության տարիքում ինտերնալությունը ցածր է և տարեցտարի բարձրանում է [17]:


Ջ. Ռոթթերի թեստը, ինչպես հայտնի է, ստեղծվել է 1954 թ. այն որոշում է, թե անձն ինչպես է իրադարձությունները բացատրում՝ ներքին, թե՛ արտաքին դետերմինացիայով, այսինքն իր հետ կատարվածի պատասխանատվությունն իր վրա է վերցնում, թե պայմանավորում է իրենից անկախ գործոններով: Առաջինը բնորոշ է ինտերնալներին, իսկ երկրորդը՝ իրադարձություններն արտաքին հանգամանքներով պայմանավորելը՝ էքստերնալներին: Թեստը բաղկացած է 29 զույգ պնդումներից, որոնցից մեկը բնորոշ է ինտերնալներին, մյուսն էքստերնալներին (հավելված 1): Հետազոտվողներին տրվում է հետևյալ հրահանգը. «Կարդացեք զույգ պնդումներից յուրաքանչյուրը և որոշեք, թե դրանցից որն է ավելի հիմնավորված: Պատասխանների թերթիկում նշեք ձեր ընտրած պնդման տառը՝ ա կամ բ» [33, էջ 413]:

Էքստերնալության և ինտերնալության մասին եզրակացությունը կատարվում է ըստ այդ հատկությունները բնութագրող պնդումների քանակային հարաբերակցության(6 պնդում չի գնահատվում, դրանք ֆոնային են, ըստ այդմ յուրաքանչյուր հատկության առավելագույն քանակը 23 է).

որքան ավելի շատ են յուրաքանչյուր հատկությունը բնութագրող պնդումների դրական պատասխանները, այնքան ավելի վառ է դրսևորված տվյալ հատկությունը: Ըստ այդմ կարելի է պայմանականորեն տարբերակել էքստերնալության-ինտերնալության դրսևորման երեք աստիճան. ցածր (մինչև 12 դրական պատասխան), միջին(13-17 դրական պատասխան), բարձր (18-23 դրական պատասխան): Նույն սկզբունքով կարելի է գնահատել նաև ինքնուրույնության- անինքնուրույնության մակարդակները՝ որքան բարձր է ինտերնալությունը և ցածր է էքստերնալությունը, այնքան բարձր է ինքնուրույնությունը և հակառակը:


Ըստ թեստավորման արդյունքների, հետազոտվողների 38%-ը (86 պատանի՝ 37 տղա՝ 16%, 49 աղջիկ 22%) ինտերնալ էր, 62%-ը (138 պատանի՝ 66 տղա 30%, 72 աղջիկ 32%)՝ էքստերնալ:

Հիստոգրամ 1.




Ինտերնալության բարձր մակարդակ ունեին (ինտերնալությունը բնութագրող պնդումներին վերաբերող 18-23 դրական պատասխան ինտերնալների 28%-ը (24 պատանի), միջին մակարդակ 41%-ը (35 պատանի), ցածր մակարդակ 31%-ը (27 պատանի):

Հիստոգրամ 2.



Էքստերնալների մեջ այդ հատկության բարձր մակարդակ ունեին հետազոտվողների 31%-ը (43 պատանի), միջին մակարդակ՝ 39%-ը (54 պատանի), ցածր՝ 30%-ը (41 պատանի):

Հիստոգրամ 3.



Այսպիսով, ինչպես տեսնում ենք պատանիների բացարձակ մեծամասնությանը բնորոշ է էքստերնալությունը, ինչը վկայում է այս


տարիքում ինքնուրույնության ցածր մակարդակի մասին. ըստ որում, տարբերությունը նշանակալի չէր աղջիկների ու տղաների միջև:

Ստացված տվյալները ճշգրտելու, պատանիների ինքնուրույնության մակարդակը որոշելու նպատակով նույն հետազոտվողների հետ անց է կացվել Ա. Կարելինի կողմից ներկայացված ինքնուրույնության մակարդակի որոշման ևս մեկ թեստ, ինչպես նաև հարցում՝ Ս. Խուդոյանի կողմից մշակված հարցարանով:

Ինքնուրույնության որոշման թեստը բաղկացած է 11 հարցից (հավելված 2): Ըստ որում, հարցերի բնույթն այնպիսին է, որ վերաբերում է հենց պատանեկան տարիքին: Թեստով նախատեսված է տարբերակել ինքնուրույնության բարձր, միջին և ցածր մակարդակներ [40]:

Մեր հետազոտության արդյունքում պարզվեց, որ 224 պատանիներից ինքնուրույնության բարձր մակարդակ են դրսևորում 64-ը (29%-ը), միջին մակարդակ՝ 76-ը (34%-ը), ցածր մակարդակ՝ 84-ը (37%-ը):

Հիստոգրամ 4.



Պատանիների ինքնուրույնության առանձնահատկությունների հետազոտման նպատակով իրականացրել ենք նաև հարցում: Հարցման նպատակն էր պարզել, թե հատկապես որ ոլորտներում են պատանիները

զգում իրենց ինքնուրույն և անինքնուրույն: Ըստ մեզ, ինքնուրույնությունը միատարր երևույթ չի՝ մարդը կարող է ինքնուրույն լինել մի ոլորտում, բայց անինքնուրույնություն դրսևորել այլ ոլորտներում: Մեր կողմից պայմանականորեն առանձնացվել են ինքնուրույնության հետևյալ հիմնական ոլորտները. ա/ հոգեբանական, բ/ սոցիալական և գ/ տնտեսական ինքնուրույնություն: Հոգեբանական ինքնուրույնությունն ըստ մեզ ենթադրում է. ա/ որոշումների կայացման ինքնուրույնություն, բ/ տեսակետների արտահայտման ինքնուրույնություն, գ/ մտածողության և աշխարհայացքի ինքնուրույնություն: Սոցիալական ինքնուրույնությունը նշանակում է ինքնուրույնություն ու անկախություն այլ մարդկանցից, մարդկանց խմբերից: Տնտեսական ինքնուրույնությունը նախ և առաջ ֆինանսական անկախությունն է, ինչպես նաև ինքնուրույն տնտեսվարությունը (առանձին ապրել, ինքնուրույն տնտեսություն վարելը):

Այս ոլորտների ուսումնասիրման համար կիրառել ենք Ս. Խուդոյանի կողմից մշակված հարցարանը (Հավելված 3): Այն ուղղված էր հետազոտելու ինչպես ընդհանրապես ինքնուրույնությունը (ներկայացված է ինքնուրույնության վերաբերյալ ընդհանուր պնդումներով. դրանք են՝ 2, 3, 13, 14, 15 պնդումները), այնպես էլ ինքնուրույնությունն առանձին ոլորտներում (ներկայացված է տվյալ ոլորտներում ինքնուրույնության վերաբերյալ մասնավոր պնդումներով. հոգեբանական ինքնուրույնությանը վերաբերող պնդումներն են՝ 4, 5, 16, 17, 20, սոցիալական ինքնուրույնությանը վերաբերող պնդումներն են՝ 6, 9, 11, 12, 18, տնտեսական ինքնուրույնությանը վերաբերող պնդումներն են՝ 1, 8, 7, 10, 19): Յուրաքանչյուր ոլորտի համար ներկայացված է հինգ պնդում, որոնց դրական պատասխանը վկայում է անձի ինքնուրույնության, իսկ բացասականը՝ անինքնուրույնության մասին, այսինքն որքան շատ են յուրաքանչյուր ոլորտում դրական պատասխանները, այնքան մարդը տվյալ ոլորտում ավելի ինքնուրույն կարող է համարվել:

Հետազոտության արդյունքները

Ստորև ներկայացնում ենք հետազոտության արդյունքները՝ աղյուսակով.


Աղյուսակ 1. Պնդումներին դրական պատասխան տված պատանիների քանակը և դրա տոկոսային արտահայտությունը.

Ինքնուրույնության ոլորտը	Պնդումների համարը																			
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20
Ընդհանուր		34 15 %	42 18 %										96 42 %	55 24 %	53 23 %					
Հոգեբանական				65 29 %	48 21 %											88 39 %	84 37 %			62 27 %
Սոցիալական						80 35 %		63 28 %		83 37 %	60 26 %								51 22 %	
Տնտեսական	64 28 %						74 33 %	42 18 %		81 36 %										12 0,5 %

Միջին հաշվով ընդհանուր ինքնուրույնությանը վերաբերող պնդումների դրական պատասխանները հավասար են 56 (25%), այսինքն, ինքնուրույնությունը բնորոշ է (կամ իրենց ինքնուրույն են համարում) հարցված

պատանիների ընդամենը 25%-ը: Հոգեբանական ոլորտի ինքնուրույնությանը վերաբերող պնդումների դրական պատասխանները միջին հաշվով հավասար են 69 (31%), սոցիալական ոլորտինը՝ 67 (30%), տնտեսական ոլորտինը՝ 32 (18%):

Հիստոգրամ 5.



Ամփոփելով այս հետազոտության արդյունքները, կարելի է ասել, որ պատանիների ընդհանուր ի նքնուրույնությունը բավական ցածր մակարդակի վրա է, միևնույն ժամանակ պատանիներն իրենց առավել ինքնուրույն են զգում հոգեբանական առումով, մի փոքր ավելի քիչ սոցիալական և ամենաքիչը տնտեսական առումով: Նման արդյունքները կարծում ենք լիովին համապատասխանում են մի կողմից պատանեկան տարիքի առանձնահատկություններին, մյուս կողմից մեզանում պատանիների ինքնուրույնության հասնելու դիրքորոշումներին ու նրանց նկատմամբ հասարակության վերաբերմունքին:

Պատանիները օբյեկտիվորեն մեր մշակույթում բոլոր ոլորտներում են դրսևորում ինքնուրույնության ցածր մակարդակ՝ իրենք խիստ կախյալ են հատկապես տնտեսական առումով, ինչն ըստ մեզ հետևանք է ծնողների պատանիների նկատմամբ ունեցած դիրքորոշումով, որը հակիրճ կարելի է բնութագրել մեզանում հաճախ օգտագործվող արտահայտությամբ, թե «Երեխան միշտ էլ ծնողի համար երեխա է մնում»: Այս դիրքորոշման հետևանքով շատ ծնողներ ուղղակի չեն նախապատրաստում պատանիներին ինքնուրույն կյանքի, հոգում են նրանց նյութական կարիքները, փորձում են նրանց փոխարեն մտածել ու լուծել նրանց խնդիրները, որոշումներ կայացնել և այլն: Հենց այս հանգամանով են ըստ մեզ պայմանավորված այս տարիքում ծնողների հետ ունեցած կոնֆլիկտները:

Միևնույն ժամանակ հոգեբանական առումով պատանիները հարաբերականորեն ինքնուրույն են, ավելի ճիշտ պատրաստ են ինքնուրույն լինել:

Անշուշտ այսօր մեզանում մասամբ տնտեսական վիճակը, գործազրկությունն է որոշում պատանիների այս ոլորտում ինքնուրույնության ցածր մակարդակը, սակայն այնուամենայնիվ որոշիչը կարծում եմ հենց ծնողների և պատանիների դիրքորոշումներն են:

Պատանիների ինքնուրույնության ֆրուստրացիայի հետազոտություն զրույցի և հարցման մեթոդներով

Հետազոտության նպատակն էր պարզել ինքնուրույնության պահանջմունքի ֆրուստրացվածության մակարդակը պատանիների մեջ և դրա պատճառները:

Հետազոտությունն իրականացվել է նույն ընտրանքի 224 պատանիների հետ, որոնցից 26-ի հետ անց է կացվել զրույց (12 տղա 14 աղջիկ 18-22 տարեկան), իսկ 198-ի հետ հարցում (զրույցն անց էր կացվել հարցումից

առաջ, զրույցի հիման վրա մշակվել էր հարցարանը. նույն երևույթը երկու տարբեր մեթոդներով հետազոտությունը նպատակ էր հետապնդում նաև համեմատել արդյունքները):

Զրույցն անց է կացվել հետևյալ հարցերի շուրջ. համարում եք ձեզ ինքնուրույն մարդ, համարում եք, որ ինքնուրույնության հասնելը դժվար է, դուք դժվարանում եք ինքնուրույն որոշումներ կայացնել, ի՞նչն է ձեզ խանգարում ավելի ինքնուրույն լինել, ի՞նչն է այսօրվա պատանիներին խանգարում ինքնուրույն լինել, դուք ինքնուրույն եք որոշումներ կայացնում. եթե՝ ոչ, ապա ի՞նչն է ձեզ խանգարում ինքնուրույն որոշումներ կայացնել, դուք ուզում եք ինքնուրույն ապրել. ի՞նչն է ձեզ խանգարում ինքնուրույն ապրել, հասարակությունը կաշկանդում է ձեզ ինքնուրույն լինել, ձեր ընտանիքը կաշկանդում է ձեր ինքնուրույնությունը, գտնում եք, որ ձեր դաստիարակությունը նպաստել է ձեր ինքնուրույնությանը, ճի՞շտ է այն պնդումը, թե կյանքի բարդությունն է դժվարացնում պատանիների ինքնուրույնությունը, ճի՞շտ է այն պնդումը, թե այսօրվա պատանիները չեն սիրում ինքնուրույն լինել, ի՞նչ հարցերում է կաշկանդվում պատանիների ինքնուրույնությունը՝ որոշումներ կայացնելու՞, ինքնուրույն գործելու՞, ինքնուրույն տեսակետներ արտահայտելու՞, ի՞նչ եք զգում, երբ կաշկանդում են ձեր ինքնուրույնությունը. զայրու՞յթ, տխրությու՞ն, ոչինչ չեք զգում, ձեր ծնողները սիրում են հուշել ձեզ, թե ինչ պիտի անել, ուտել, հագնել, ում հետ ընկերություն անել, աշխատում եք դուք, օգնում է ձեզ աշխատանքը ավելի անկախ զգալ, մտածել եք երբևէ լքել հայրական տունը և ինքնուրույն ապրել, ճի՞շտ է այն պնդումը, թե պատանիների կոնֆլիկտները մեծերի հետ հիմնականում կապված են այն հանգամանքի հետ, որ մեծերը կաշկանդում են պատանիների ինքնուրույնությունը, ճի՞շտ է այն պնդումը, թե պատանեկան տարիքի հիմնական խնդիրը ինքնուրույնություն ձեռք բերելն է, ճի՞շտ է այն պնդումը, թե ծնողները պատանիներին չեն թույլ տալիս ավելի ինքնուրույն լինել, որովհետև չեն վստահում, չեն հավատում, որ նրանք ի վիճակի են

ինքնուրույն լուծել իրենց խնդիրները, ճի՛շտ է այն պնդումը, թե պատանիները վախենում են ինքնուրույն լինել, դժվա՛ր է որոշումներ կայացնել, Ձեր մեջ ինչն է խանգարում ավելի ինքնուրույն լինելուն, կարո՞ղ եք մի քանի բառով բնութագրել ձեր բնավորությունը և այլն:

Զրույցի արդյունքների վերլուծություն

Զրույցը ցույց տվեց, որ ընդհանուր առմամբ պատանիների ինքնուրույնությունը ֆրուստրացված է, նրանք իրենց անկախ ու ինքնուրույն չեն զգում, կախվածություն են զգում հիմնականում ընտանիքից: Զրույցի մասնակիցների մոտ 80%-ը համոզված էր, որ ինքնուրույնությունը, ինքնուրույն կյանքին անցնելն է պատանեկան տարիքի հիմնական խնդիրը, 93% -ն ընդգծում էր, որ ընտանիքը ճնշում է իրենց ինքնուրույնությունը: Նրանց թույլ չեն տալիս իրենց ուզածով ծրագրել իրենց առօրյան ու ապրել: Հենց այս հողի վրա են պատանիներն ամենաշատը կոնֆլիկտի մեջ մտնում իրենց ծնողների հետ: Տղաներին խիստ նյարդայնացնում է այն, որ ծնողներն անընդհատ իրենց դիտողություններ են անում, ցուցումներ են տալիս, թե ինչ է պետք անել, որ հուշում են, թե պետք է հաց ուտել, մայթը զգույշ անցնել, շուտ տուն գալ, որ այս ընկերը լավը չէ, իսկ մյուսը լավն է: Աղջիկներին նյարդայնացնում էր նրանց նկատմամբ խստությունը, օրինակ՝ հագուստի կապակցությամբ: Զրույցի մասնակիցներից շատերը (մոտ 65%) գտնում էին, որ իրենց դաստիարակությունը չի նպաստում ինքնուրույնության զարգացմանը: Պատանիները գտնում էին նաև, որ հասարակությունն էլ չի նպաստում պատանիների ինքնուրույնության զարգացմանը:

Միևնույն ժամանակ, պատանիները նշում էին, որ իրենք էլ հաճախ հոգեբանորեն պատրաստ չեն ինքնուրույն կյանքին: Նրանք ցանկանում էին ծնողների աջակցությունը որոշ հարցերում. առաջին հերթին ֆինանսական

հարցում: Ըստ որում, այն պատանիները, ովքեր աշխատում էին (8 հետազոտվող), ավելի անկախ էին իրենց զգում, նրանց կոնֆլիկտները ծնողների հետ ավելի քիչ էին, ինքնուրույնության պահանջմունքն ավելի քիչ էր ֆրուստրացված: Զրույցի մասնակիցների բացարձակ մեծամասնությունը (76%-ը) նշում էր, որ մտածել, երազել է ինքնուրույն կյանք սկսել, ասենք մեկնել այլ քաղաք, երկիր: Հետազոտվողների մոտ 70%-ը նշում է, որ դժվարությամբ է կարևոր որոշումներ կայացնում:

Որպես օրինակ ներկայացնենք հետազոտվող Վ. Կ.-ի (19 տ. պատանի, ուսանող) հետ զրույցից մի հատված:

Հետ.- Համարում եք, որ Դուք ապրում եք ինքնուրույն կյանքով:

Վ. Կ. -Ոչ:

Հետ. Ձեր ինքնուրույնությունը ճնշում են, թե ուղղակի Դուք չեք կարողանում ինքնուրույն ապրել:

Վ.Կ. - Ավելի շատ ծնողներն են ճնշում, բայց նաև հասարակությունը պայմաններ չի ստեղծում օգնելու պատանիներին ինքնուրույն դառնալ:

Հետ. Ինքնուրույնության հարցում կոնֆլիկտներ լինում են ծնողների հետ:

Վ. Կ. Հաճախ:

Հետ. Կոնկրետ ի՞նչ հարցերում:

Վ. Կ. Ավելի հաճախ ընկերների հետ կապված, տուն շուտ գալու, ընկերուհուս հետ կապված և այլն:

Հետ. Գտնում եք, որ Դուք հոգեբանորեն պատրաստ եք ինքնուրույն ապրել:

Վ.Կ.Այնքան էլ չէ:

Հետ. Գտնում եք, որ ձեր դաստիարակությունը նպաստել է ինքնուրույնության ձևավորմանը:

Վ.Կ. Կարծում եմ՝ ոչ, ավելի շուտ խանգարել է ինքնուրույնության զարգացմանը:

Հետ. Ձեր մեջ ի՞նչն է խանգարում ավելի ինքնուրույն լինելուն:

Վ.Կ. Ինձ թվում է կյանքը շատ բարդ է, մի տեսակ վախ կա հասուն կյանքից, պատասխանատվությունից:

Հետ. Դուք ցանկություն ունե՞ք ավելի ինքնուրույն, անկախ ապրել:

Վ.Կ. Կարծում եմ՝ այո:

Հետ. Հատկապես ո՞ր ոլորտներում կուզեիք ինքնուրույն լինել՝ ֆինանսական, կուզեի՞ք առանձին ապրել, Ձեր կյանքը լիովին դուք տնօրինեիք, որոշումները միայն Դուք կայացնեիք:

Վ.Կ. Ձեր նշած բոլոր ոլորտներում էլ կուզեի ինքնուրույն ապրել, հատկապես կուզեի ինքս փող աշխատել, ինչը մեր քաղաքում համարյա անհնար է. աշխատատեղ չկա: Հնարավորություն չկա նաև առանձին ապրել, նախ ծնողներս չեն թողնի, բացի այդ՝ տուն էլ չունեմ:

Հետ. Իսկ որոշումները սովորաբար ինքնուրույն եք կայացնում:

Վ. Կ. Նայած հարցում, այն հարցերում, որ չեմ կողմնորոշվում խորհրդակցում եմ: Ընդհանրապես դժվարությամբ եմ որոշումներ կայացնում:

Հետ. Ի՞նչ եք կարծում, ձեր ծնողները Ձեզ վստահում են:

Վ.Կ. Կարծում եմ, որ՝ ոչ, նրանց անընդհատ թվում է, թե ես ինչ-որ սխալներ թույլ կտամ, ինչ-որ բան այնպես չեմ անի:

Հետ. Կարելի՞ է ասել, որ Ձեր տարիքի երիտասարդների համար ինքնուրույնության հասնելը համար մեկ խնդիրն է:


Վ. Կ. Այո. եթե չսովորենք ինքնուրույն լինել, չենք կարողանա այս կյանքում ապրել:

Հետ. Կարո՞ղ եք մի քանի բառով բնութագրել ձեր բնավորությունը (երբեմն հարցերով կողմնորոշում էինք. ասենք. ինձ ուժեղ մարդ եմ համարում, ասում են, որ բարի եմ, ընկերասեր, մարդկանց հասնող, այնքան էլ խելացի չեմ համարում, տագնապային եմ):

Զրույցի արդյունքների հիման վրա կարելի է առանձնացնել ինքնուրույնության ֆրուստրացվածության երեք մակարդակ՝ թույլ

(պատանիների մոտ 18%-ը), միջին (պատանիների մոտ 48%-ը) և ուժեղ (պատանիների մոտ 34%-ը): Նման տարբերակման համար հիմք ենք ընդունել հենց պատանիների կողմից իրենց ինքնուրույնության ֆրուստրացվածության բնութագրերը.

Հիստոգրամ 6.



Թույլ ֆրուստրացվածության դեպքում պատանիները պնդում էին, որ իրենք ինքնուրույն մարդիկ են, որոշումներն ինքնուրույն են կայացնում: Թույլ ֆրուստրացվածությունը պայմանավորված է ոչ միայն ընտանիքի ավելի քիչ ճնշումներով, այլև պատանու անհատական առանձնահատկություններով: Այս պատանիներն ավելի հասուն էին, ճկուն, ինքնավստահ, ինքնուրույնության ձգտումը բարձր է, ծնողները նրանց ավելի էին վստահում, նրանց հետ կոնֆլիկտները հազվադեպ էին, նրանցից շատերը այս կամ այն ճանապարհով գումար էին վաստակում, ունեն ուժեղ, իշխող բնավորություն:

Միջին ֆրուստրացվածություն ունեցող պատանիները նշում էին, որ շատ հարցերում իրենք ինքնուրույն են, ծնողների ճնշումը կա, սակայն ոչ շատ, հարաբերությունները ծնողների հետ հիմնականում նորմալ են, քիչ են կոնֆլիկտները: Այս պատանիներն ավելի անինքնավստահ են, դժվար են որոշումներ կայացնում, ինքնուրույնության ձգտումը ցածր է, բնավորությամբ հանգիստ են, ոչ ագրեսիվ: Լրիվ ծնողների խնամքի տակ էին:

Բարձր ֆրուստրացվածություն ունեցող պատանիներն ունեին կախյալ բնավորություն, նրանց նկատմամբ ծնողների ճնշումը բարձր էր, կոնֆլիկտները ծնողների հետ հաճախ էին, բարձր էր տագնապայնությունը, շատերի մեջ բարձր էր նաև ագրեսիվությունը, նրանցից ոմանք դիմել էին հոգեբանին ծայրահեղ անինքնավստահության պատճառով, ծնողների վստահությունը նրանց նկատմամբ խիստ ցածր էր: Այս պատանիները նշում էին, որ իրենք բացարձակ ինքնուրույն չեն, և պատճառը հիմնականում ծնողներն են, բայց նաև իրենց պատրաստ չէին համարում ինքնուրույն կյանքին:

Պատանիների ինքնուրույնության պահանջմունքի ֆրուստրացիայի հետազոտություն հարցման մեթոդով

Հետազոտությունն իրականացվել է 2012 թվականին: Հարցումն իրականացվել է Ս. Խուդոյանի կողմից մշակված ստորև ներկայացված հարցարանով:

Հարցմանը մասնակցել են 198 պատանի (112 աղջիկ, 86 տղա), Գյումրու Պետական մանկավարժական ինստիտուտի և «Պրոգրես» համալսարանի ուսանողներ՝ 18-22 տարեկան:

**Պատանիների ինքնուրույնության պահանջմունքի ֆրուստրացիայի
հետազոտման հարցարան**

1. Գտնում եք, որ դժվար է ինքնուրույն լինել:
2. Ես շատ կուզեի ավելի ինքնուրույն լինել:
3. Ես աշխատում եմ և իմ ֆինանսական հարցերը հիմնականում ինքս եմ լուծում:
4. Ամենաշատը ես ծնողներիցս կախվածություն եմ զգում ֆինանսական առումով:
5. Գտնում եք, որ ինքնուրույն լինելը դժվար է, քանի որ պատանիները կյանքի փորձ չունեն:
6. Ձեր ծնողները սիրում են հուշել ձեզ, թե ի՞նչ պիտի անել, ուտել, հագնել, ում հետ ընկերություն անել:
7. Գտնում եք, որ ձեր ինքնուրույնությունը կաշկանդում են ձեր ծնողները:
8. Գտնում եք, որ մեծերը դեմ են, որ պատանիներն ինքնուրույն լինեն:
9. Կարելի է ասել, որ դուք վախենում եք ինքնուրույն լինել:
10. Կարելի է ասել, որ դուք բավարար չափով ինքնուրույն չեք, քանի որ ձեր դաստիարակությունը չի նպաստել դրան:
11. Ճի՞շտ է այն պնդումը, որ մեծերը թույլ չեն տալիս պատանիներին ինքնուրույն գործել:
12. Ճի՞շտ է այն պնդումը, որ դպրոցը չի սովորեցնում ինքնուրույն մտածել:
13. Գտնում եք, որ պատանիներն ուղղակի չեն ցանկանում ինքնուրույն լինել:
14. Ճի՞շտ է այն պնդումը, թե մեր հասարակության մեջ պատանիների ինքնուրույնությունը հիմնականում ճնշվում է:
15. Ճի՞շտ է այն պնդումը, թե դուք կարող եք ավելի ինքնուրույն լինել, սակայն ձեր ինքնուրույնությունը ճնշում են:


16. Ճի՞շտ է այն պնդումը, որ պատանեկան տարիքի հիմնական խնդիրը ինքնուրույնության հասնելն է:
17. Ճի՞շտ է այն պնդումը, այսօր դեռ ի վիճակի չեք ինքնուրույն ապրել:
18. Ճի՞շտ է այն պնդումը, որ պատանիների ինքնուրույնությունը կաշկանդվում է գումար չունենալու պատճառով:
19. Ճի՞շտ է այն պնդումը, որ եթե ձեզ հնարավորություն տրվեր դուք կկարողանայիք փող վաստակել և միանգամայն ինքնուրույն ապրել:
20. Ճի՞շտ է այն պնդումը, որ պատանիներն ուղղակի բավարար հասուն չեն ինքնուրույն ապրելու համար:
21. Ճի՞շտ է այն պնդումը, թե կյանքի բարդությունն է դժվարացնում պատանիների ինքնուրույնությունը:
22. Ճի՞շտ է այն պնդումը, թե պատանիների ու մեծերի կոնֆլիկտները հիմնականում կապված են ինքնուրույնության խնդրի հետ:
23. Ես վախենում եմ հասուն կյանքից, քանի որ ստիպված եմ ինքնուրույն, պատասխանատու կյանքով ապրել:
24. Երբ իմ ինքնուրույնությունը կաշկանդվում է, ես բացասական ապրումներ եմ ունենում:
25. Ես ինձ կախված եմ զգում իմ ծնողներից:
 Ինչպես տեսնում ենք, հարցարանը բաղկացած է 25 «այո» կամ «ոչ» պատասխան ենթադրող հարցերից: Ըստ որում «այո» պատասխանը վկայում է ինքնուրույնության սահմանափակության և ֆրուստրացվածության մասին:

Հարցման արդյունքները և դրանց վերլուծությունը

Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ հետազոտվողների ինքնուրույնության սահմանափակությունն ու ֆրուստրացվածությունը կազմում է մոտ 67% , այսինքն հարցման մասնակիցների բացարձակ մեծամասնության

մոտ գերակշռում են «այո» պատասխանները: Միևնույն ժամանակ այստեղ էլ կարելի է հստակ առանձնացնել ինքնուրույնության սահմանափակության և ֆրուստրացվածության երեք մակարդակ՝ թույլ, միջին, ուժեղ (թույլ ենք համարել, երբ «ոչ» պատասխանների քանակը 75 կամ ավել տոկոս են կազմել, միջին՝ 26-74% և ուժեղ, երբ «ոչ» պատասխանների քանակը 25 %-ից պակաս է եղել): Ըստ որում, ինքնուրույնությունը թույլ է սահմանափակված և ֆրուստրացված հարցվածների 24%-ի մոտ, միջին՝ 62%-ի մեջ և ուժեղ՝ 14%-ի մեջ:

Հիստոգրամ 7. Ինքնուրույնության սահմանափակվածությունն ու ֆրուստրացվածությունը՝ ըստ հարցման արդյունքների



Նետաքրքրական է, որ աղջիկների և տղաների ինքնուրույնության սահմանափակվածությունն ու ֆրուստրացվածությունը գրեթե հավասար էր. տղաներինը՝ 61%, աղջիկներինը՝ 63%: Պատանիների բացարձակ մեծամասնությունը (88%) ֆինանսական կախվածություն ունի ծնողներից, ինչն ինքնուրույնությունը ֆրուստրացնող կարևոր հանգամանք է:

Եզրակացություններ

Այսպիսով, ամփոփելով առաջին փուլի հետազոտությունները կարելի է անել հետևյալ եզրակացությունները.

1. Պատանիների բացարձակ մեծամասնությունը էքստերնալ են, ինչը վկայում է ինքնուրույնության ցածր մակարդակի մասին:
2. Պատանեկան տարիքում կարելի է առանձնացնել ինքնուրույնության երեք մակարդակ՝ ցածր, միջին, բարձր:
3. Ինքնուրույնությունը միատարր երևույթ չէ՝ մարդը կարող է ինքնուրույն լինել մի ոլորտում, բայց անինքնուրույնություն դրսևորել այլ ոլորտներում: Կարելի է առանձնացնել ինքնուրույնության հետևյալ հիմնական ոլորտները. ա/ հոգեբանական, բ/ սոցիալական և գ/ տնտեսական ինքնուրույնություն:
4. Պատանիների ընդհանուր ինքնուրույնությունը բավական ցածր մակարդակի վրա է, միևնույն ժամանակ պատանիներն իրենց առավել ինքնուրույն են զգում հոգեբանական առումով, մի փոքր ավելի քիչ՝ սոցիալական և ամենաքիչը տնտեսական առումով:
5. Կարելի է առանձնացնել ինքնուրույնության ֆրուստրացվածության երեք մակարդակ՝ թույլ, միջին, ուժեղ. ըստ մեր հետազոտությունների ֆրուստրացվածությունը թույլ է հարցվածների 24%-ի մոտ, միջին՝ 62%-ի մեջ և ուժեղ՝ 14%-ի մեջ:

3.3. Պատանեկան ճգնաժամի ընթացքի առանձնահատկությունների էմպիրիկական հետազոտություն

Հետազոտության նպատակն էր ճշգրտել պատանեկան ճգնաժամի ախտանշանները և դրանց դրսևորման սրությունը, այսինքն ճգնաժամի ընթացքի սրությունը: Ինչպես նշել ենք, ըստ Ռ. Գոուլդի, Դ. Լևինսոնի, Դ.Վեյլանտի, Գ. Շիհիի պատանեկան ճգնաժամի ախտանշաններն են համարվում «...աշխարհայացքի, արժեքների փոփոխությունը, բունտը ծնողների կողմից պարտադրվող արժեքների, աշխարհայացքային ցուցումների նկատմամբ, քմահաճ վարքի դրսևորումը, անօգնականության զգացողությունը, ոչ ադեկվատ վարք դրսևորելու տագնապները, զանազան փիլիսոփայական, աշխարհայացքային հարցերի պատասխանների որոնումները, իդեալների հաճախակի փոփոխությունը, կյանքի անիմաստության զգացողությունը, տագնապայնությունը, աշխատանքի վայրերի, մասնագիտությունների, զուգընկերների և ընկերների հաճախակի փոփոխությունը, թշնամանքը ընտանիքի անդամների նկատմամբ, նմանակման համար օբյեկտների փնտրտուքը» [83, էջ 58]:

Ե. Սոլդատովան այս ախտանշաններին ավելացնում է մաքսիմալիզմը, նույնականության փնտրտուքները, անելանելիության զգացումը [76, էջ 48-51]: Պետք է ասել, որ այս ճգնաժամի ախտանշաններին նվիրված հատուկ հետազոտությունների մենք չենք հանդիպել, իսկ վերոնշյալ հետազոտություններում ուղղակի դրանք ներկայացվում են որպես պատանեկան տարիքին բնորոշ հատկություններ, առանց կոնկրետ հետազոտությունների, հաճախ պատկերավոր ոճով:

Ախտանշանները ճշգրտելու և ճգնաժամի ընթացքը հասկանալու համար մենք նախ պատանիների հետ անց ենք կացրել զրույց: Զրույցին մասնակցել են պատանեկան ինքնուրույնության առանձնահատկությունների հետազոտմանը մասնակցած 28 պատանի(12 աղջիկ, 16 տղա) 18-22

տարեկան: Զրույցն անց է կացվել 2012 թ. Գյումրու «Պրոգրես» համալսարանի ուսանողների հետ:

Զրույցի ընթացքում ներկայացվել են հետևյալ հարցերը. գտնու՞մ եք, որ պատանեկան տարիքը բարդ շրջան է, որո՞նք եք համարում պատանեկան տարիքի հիմնական խնդիրները(իսկական սեր գտնելը, ինքնուրույնության հասնելը, որակյալ կրթությունը և այլն), ինչն է ամենաշատը հուզում պատանիներին, հաճա՞խ են տեղի ունենում կոնֆլիկտներ ծնողների հետ, ի՞նչ հողի վրա են տեղի ունենում պատանիների կոնֆլիկտները ծնողների հետ, թվու՞մ է ձեզ, թե անիմաստ եք ապրում, կարելի է ասել, որ դուք խիստ փոխված եք զգում ձեր ես-ը, ճի՞շտ է այն պնդումը, թե պատանիները հաճախ են տխրում, դուք ձեզ անօգնական զգու՞մ եք, դուք ձեզ հուսահատված զգու՞մ եք, ճի՞շտ է, որ պատանեկան տարիքը արժեքների որոնումների շրջան է, ճի՞շտ է, որ պատանեկան տարիքը աշխարհայացքի փոփոխությունների շրջան է, ճի՞շտ է, որ պատանեկան տարիքում մարդը փորձում է գտնել իր տեղը կյանքում, ձեզ հաճա՞խ են մեծերն ասում, որ դուք ծայրահեղ եք ձեր գնահատականների, մոտեցումների մեջ, ճի՞շտ է, որ պատանիները փորձում են իրենց համար իդեալներ գտնել, ճի՞շտ է, որ ձեր ինքնավստահությունը ցածր է, ճի՞շտ է որ ինքնուրույնության հասնելը հիմնական խնդիրներից է, որին բախվում են պատանիները, հաճա՞խ է ձեզ տանջում այն հարցը, թե հնարավոր է դուք ձեզ ճիշտ չպահեք մարդկանց շրջապատում, դուք հաճա՞խ եք փոխում ձեր ընկերներին, ճի՞շտ է, որ պատանիներին բնորոշ է տազնապայնությունը, ճի՞շտ է, որ պատանիների հիմնական խնդիրը կյանքում ինքնահաստատվելն է, ճի՞շտ է, որ արտաքինի խնդիրը կարևոր տեղ է գրավում պատանիների կյանքում, ճի՞շտ է, որ պատանիներն ամեն կերպ ձգտում են օրիգինալ երևալ, ճի՞շտ է, որ պատանիները վախենում են հասուն, պատասխանատու կյանքից, ճի՞շտ է, որ պատանիները հաճախ են միայնակության զգացողություն ունենում և այլն: Զրույցի վերջում բոլորին տալիս էինք հետևյալ հարցը. ներկայացված տարիքային երևույթներից որո՞նք

են բնորոշ հենց ձեզ և ինչպես են դրսևորված՝ ուժեղ, միջին ուժգնության, թե՛ թույլ:

Զրույցի արդյունքները և դրանց վերլուծությունը

Զրույցի արդյունքները ցույց տվեցին, որ պատանեկան տարիքը բարդ կամ ճգնաժամային են համարում հետազոտվողների 64%-ը (18 պատանի): Տարիքի հիմնական դժվարությունները, խնդիրները, ճգնաժամի ախտանշանները պատանիները համարում են.

- ա/ կյանքում կողմնորոշվելը (68%),
- բ/ ինքնուրույնության հասնելը (63%),
- գ/ իսկական ընկերներ ու սեր գտնելը (56%),
- դ/ որակյալ կրթությունը (45%),
- ե/ աշխատանք գտնելը (42%):

Ըստ որում, չկար էական տարբերություն տղաների և աղջիկների միջև: Ըճգնաժամի ախտանշաններն ըստ հաճախականության և բնորոշ լինելու հետևյալ կերպ բաշխվեցին.

- ա/ կյանքում ինքնահաստատվելու ձգտումը,
- բ/ անինքնուրույն լինելու զգացողությունը,
- գ/ կոնֆլիկտները ծնողների հետ,
- դ/ անօգնականության և անինքնավստահության զգացողությունը,
- ե/ սեփական կյանքի իմաստի որոնումները,
- զ/ կյանքում կողմնորոշիչների, աշխարհայացքի որոնումները,
- է/ արտաքինի խնդիրը,
- ը/ վախը հասուն, պատասխանատու կյանքից,
- թ/ տխրությունն ու տագնապայնությունը,
- ժ/ օրիգինալության ձգտումը,
- ի/ միայնակության զգացողությունը:

Մեր հետազոտության մեջ պատանիները համաձայն չէին, որ այդ տարիքին բնորոշ է հուսահատությունը, արժեքների փոփոխությունը, ընկերների հաճախակի փոփոխությունը, շրջապատում ոչ ադեկվատ լինելու զգացողությունը, իդեալների և արժեքների որոնումները, ծայրահեղականությունը և մի շարք այլ ախտանշաններ, որ բնորոշ է համարվում այս տարիքի ճգնաժամին (թերևս այդ հետազոտություններում տարիքի բնութագրերն են ներկայացվում որպես ճգնաժամի ախտանշաններ):

Ըստ ճգնաժամի դրսևորման ուժգնության, մենք, հենց իրենց՝ պատանիների ինքնագնահատումների հիման վրա, տարբերակել ենք ուժեղ, միջին և թույլ ընթացքները:

Հետազոտությունը մեզ հնարավորություն տվեց հստակորեն տարբերակել ճգնաժամի ախտանշանները և տարիքի բնութագրերը: Հիմնական տարբերությունն այն է, որ տարիքի բնութագրերը պատանիները չեն դիտում որպես իրենց համար դժվարություն, խնդիր, այլ համարում են սովորական, բնական մի բան:

Պատանեկան ճգնաժամի ախտանշանների և ընթացքի առանձնահատկությունների հետազոտություն հարցման մեթոդով

Զրույցի արդյունքների հիման վրա մենք կազմել ենք ստորև ներկայացվող հարցարանը, որով էլ իրականացրել ենք հետազոտությունը (հարցարանում չեն ընդգրկվել ճգնաժամի ախտանշաններին վերաբերող այն հարցերը, որոնք զրույցի ընթացքում ոչ մի դրական պատասխան չէին ստացել, այսինքն չէին համարվել պատանեկան ճգնաժամին բնորոշ): հարցարանը բաղկացած է 20 «այո» կամ «ոչ» պատասխան ենթադրող հարցերից: Ըստ որում «այո» պատասխանը վկայում է ճգնաժամային ախտանշանի առկայության, իսկ «ոչ»-ը բացակայության մասին:

Հետազոտությանը մասնակցել են պատանեկան ինքնուրույնության առանձնահատկությունների հետազոտմանը մասնակցած 192 ուսանող(107 աղջիկ, 85 տղա) Գյումրու «Պրոգրես» համալսարանից:

Պատանեկան ճգնաժամի հետազոտման հարցարան

Հրահանգ հետազոտվողին «Խնդրում ենք ուշադիր կարդալ հետևյալ հարցերը և պատասխանել «այո» կամ «ոչ»՝ ձեր պատասխանը գրելով հարցի վերջում»:

1. Գտնում եք, որ պատանեկան տարիքը բարդ, ճգնաժամային շրջան է:
2. Պատանեկան տարիքում հաճախ են տեղի ունենում կոնֆլիկտներ ծնողների հետ:
3. Թվում է ձեզ, թե անիմաստ եք ապրում:
4. Ճի՞շտ է, որ պատանեկան տարիքը կյանքում կողմնորոշվելու շրջան է:
5. Դուք զգում եք ձեզ անօգնական:
6. Դուք ձեզ միայնակ զգում եք:
7. Դուք ձեզ հուսահատված զգում եք:
8. Ճի՞շտ է, որ պատանեկան տարիքի ամենամեծ դժվարությունը աշխարհայացք ձևավորելն է:
9. Ճի՞շտ է, որ դուք ձեզ անինքնավստահ եք զգում:
10. Ճի՞շտ է այն պնդումը, թե պատանեկան տարիքին բնորոշ է տխրությունը:
11. Ճի՞շտ է որ ինքնուրույնության հասնելը հիմնական խնդիրներից է:
12. Գտնում եք, որ ձեր տազնապայնությունը բարձրացել է:
13. Ճի՞շտ է, որ պատանիների հիմնական խնդիրներից մեկը կյանքում իր տեղը գտնելն է:

14. Ճի՞շտ է, որ պատանիների հիմնական խնդիրներից մեկը ինքնահաստատվելն է:
15. Ճի՞շտ է որ ինքնուրույնության հասնելը պատանիների հիմնական խնդիրներից է:
16. Ճի՞շտ է, որ արտաքինի խնդիրը կարևոր տեղ է գրավում պատանիների կյանքում:
17. Կա արդյո՞ք ձեր մեջ վախ, որ մարդկանց շրջապատում ձեզ ճիշտ չեք պահի:
18. Ճի՞շտ է, որ պատանիներն ամեն կերպ ձգտում են օրիգինալ երևալ:
19. Ճի՞շտ է, որ պատանիները վախենում են հասուն, պատասխանատու կյանքից:
20. Ճի՞շտ է, որ պատանեկան տարիքին բնորոշ է ծայրահեղականությունը:

Հարցման արդյունքների վերլուծություն

Հարցման արդյունքները ցույց տվեցին, որ պատանեկան տարիքը դժվար կամ ճգնաժամային են համարում հարցվածների 59%-ը (զրույցի մասնակիցների 64%-ն էր պատանեկությունը ճգնաժամային համարում) , ճգնաժամի հիմնական ախտանշաններն են (ներկայացվում են ըստ ախտանշանները ներկայացնող հարցերին դրական պատասխան տվողների քանակի) .

ա/ ինքնուրույնության հասնելը (62%),

բ/ կյանքում սեփական տեղը գտնելը (60%),

զ/ կյանքում կողմնորոշվելը (57%. թերևս այս հարցն իր մեջ ներառում է նաև աշխարհայացքի ձևավորումը, որը նկատելիորեն ավելի քիչ դրական պատասխաններ էր ստացել),

դ/ ինքնահաստատվելը (55%),

ե/ կոնֆլիկտները ծնողների հետ (55%),

զ/ տխրությունը (52%),

է/ կյանքի անիմաստության զգացողությունը (51%),

ը/ վախ հասուն, պատասխանատու կյանքից (49%),

թ/ միայնակության զգացումը(48%),

ժ/ անինքնավստահությունը(45%),

ի/ անօգնականության զգացումը(42%),

լ/ կենտրոնացվածությունն արտաքինի վրա (38%),

խ/ տագնապայնությունը (35%),

ծ/ օրիգինալության ձգտումը (28%),

կ/ շրջապատում ոչ ադեկվատ վարք դրսևորելու վախը (24%),

հ/ տխրությունը (16%)...

Մյուս հարցերին դրական պատասխաններ տվողների քանակն այնքան քիչ էր, որ դրանք կարող էին համարվել ոչ բնորոշ պատանեկան ճգնաժամին (այդ պատճառով էլ դրանք չենք ներկայացնում):

Յուրաքանչյուր հետազոտվողի կողմից տրված բացասական պատասխանների քանակի հիման վրա որոշել ենք պատանեկան ճգնաժամի ընթացքի սրությունը՝ ճգնաժամի ընթացքը մեղմ ենք համարել, երբ «ոչ» պատասխանների քանակը 75 կամ ավել տոկոս են կազմել, միջին՝ 26-74 տոկոս և սուր, երբ «ոչ» պատասխանների քանակը 25 տոկոսից պակաս է եղել: Ըստ այդմ, սուր ընթացք էին արձանագրել հետազոտվողների 18%-ը, ճգնաժամի ընթացքի միջին սրություն արձանագրեցին 63%-ը և մեղմ էր ընթացքը 19%-ի մեջ:

Մենք փորձեցինք ճշտել, թե արդյո՞ք նշված մոտեցումն իսկապես արտացոլում է ճգնաժամի ընթացքի սրությունը և անցկացրեցինք զրույց սուր և մեղմ ընթացք արձանագրած երկուական պատանիների հետ: Զրույցն ուղղված էր մանրամասնելու, մեկնաբանելու, կոնկրետացնելու այն պատասխանները, որ տվել էին պատանիները՝ հասկանալու համար, թե իսկապես նրանք սուր կամ մեղմ են տանում պատանեկան ճգնաժամը: Զրույցի ընթացքում քննարկվող հարցերը նույնն էին ինչ հարցարանինը, միայն թե ուղեկցվում էին լրացուցիչ հարցերով, ասենք «Գտնու՞մ եք, որ պատանեկան տարիքը բարդ, ճգնաժամային շրջան է» հարցն ուղեկցվում էր ճշգրտող մի շարք հարցերով. «Ինչու՞ եք համարում պատանեկությունը դժվար տարիք» կամ «Կոնկրետ ինչու՞մ եք տեսնում պատանեկության դժվարությունները», «Դուք ի՞նչ կոնկրետ դժվարությունների եք բախվում» և այլն: Մենք փորձում էինք նաև պարզել, թե ինչ հանգամանքներով է պայմանավորված ճգնաժամի մեղմ և սուր ընթացքը, բացի, դաստիարակությունից:

Զրույցի արդյունքները ցույց տվեցին, որ հարցման արդյունքներն արտացոլում են իրականությունը, այսինքն մեղմ և սուր ընթացքը երկու հետազոտություններում էլ հաստատվում էր, ըստ որում, այս երկու ծայրահեղ ընթացքները մեծապես պայմանավորված էին անձնային առանձնահատկություններով, մասնավորապես, ճգնաժամը մեղմ ընթացք ուներ ավելի հասուն, ուժեղ անձանց մեջ և հակառակը՝ սուր ընթացքը բնորոշ էր ոչ այնքան հասուն անձանց(հետաքրքրական էր, որ ճգնաժամի մեղմ ընթացք ունեցողները ձգտում էին ընկերություն անել իրենցից մեծերի հետ և հակառակը՝ սուր ընթացք ունեցողները նախապատվություն էին տալիս հասակակիցներին կամ ավելի փոքրերին): Միևնույն ժամանակ վերջիններս ինտելեկտուալ առումով ավելի բարձր էին: Ճգնաժամի առաջացման կարևոր պահ է ծնողական դաստիարակությունը, մասնավորապես, պատանու ինքնուրույնության կաշկանդումը, ինչի հետևանքով լուրջ կոնֆլիկտներ են առաջանում ծնողների հետ:

Որպես օրինակ ներկայացնենք Մ. Վ. -ի (19 տ., աղջիկ) հետ զրույցից մի հատված:

Հետ. Դուք գտնում եք, որ պատանեկան տարիքը բարդ է և ճգնաժամային, կարո՞ղ եք մեկնաբանել, թե ինչու եք այդպես կարծում:

Մ.Վ. – Նախ, մեր տարիքում դժվար է կողմնորոշվել կյանքում՝ ինչն է ճիշտ, ինչն է սխալ: Ես, օրինակ, կարծում եմ, որ սխալ եմ ընտրել իմ մասնագիտությունը: Եթե այս տարիքում սխալվես, ամբողջ կյանքում կարող է չկարողանաս ուղղել այդ սխալը:

Հետ. Էլ ի՞նչ հանգամանքներ են ճգնաժամային դարձնում այս տարիքը:

Մ.Վ. Պրոբլեմ է ինքնուրույնության հասնելը. ծնողների համար պատանին մնում է որպես երեխա, որն իր կամքը չունի և որին ինչ ասես, պիտի հլու հնազանդ անի: Ծնողներին թվում է, թե իրենք պիտի որոշեն, թե ես ում պիտի սիրեմ, ում հետ ամուսնանամ, ուր պիտի գնամ, ում հետ ընկերություն անեմ...

Հետ.- Հաճա՞խ են այդ հողի վրա կոնֆլիկտներ առաջանում ծնողների հետ:

Մ.Վ. Շատ հաճախ, և անելանելի վիճակ է ստեղծվում. ոչ կարող ես թողնել, գնալ ինքնուրույն ապրել, ոչ էլ կարող ես ծնողների ճնշումները տանել:

Հետ. Կան արդյո՞ք այլ պատճառներ, որոնք ծնում են դժվարություններ պատանեկան տարիքում:

Մ.Վ. Կարծում եմ կարևոր պատճառ է այն, որ պատանին թույլ է, պատրաստ չէ կյանքի փորձություններին դիմակայելու, մեր ծնողները մեզ բամբակների մեջ են պահում, չեն թողնում ինքնուրույն որևէ քայլ անենք, չեն վստահում, ինչի հետևանքով մենք վախ ունենք կյանքից:

Հետ. Կոնկրետ ձեր բնավորության կամ այլ հատկությունների հետ կապված խնդիրներ կա՞ն, որ ձեզ խանգարում են այս տարիքում ավելի լավ հարմարվել կյանքին:

Մ.Վ.Կարծում եմ մի քիչ էլ իմ բնավորությունից է. ես տազնապային եմ, ամեն ինչից պրորբլեմ եմ սարքում, անինքնավստահ եմ...

Հետ. Ինչպե՞ս են հակազդում պատանիներն այս տարիքի սթրեսներին:

Մ.Վ. Նայած ով, պատանիներ կան, որ լավ էլ հարմարվում են, պրորբլեմներ չեն լինում, ուրիշներն անընդհատ կոնֆլիկտների մեջ են ծնողների հետ, ինչպես ես, շատերն աշխատում են տանը քիչ լինել, ոմանք գնում են արտասահման:

3.4. Ինքնուրույնության պահանջմունքի ֆրուստրացիան պատանեկան տարիքում և այս տարիքի ճգնաժամի ընթացքը

Հետազոտության նպատակն էր պարզել, թե արդյո՞ք ազդում է պատանիների ինքնուրույնության կաշկանդումը, ինքնուրույնության պահանջմունքի ֆրուստրացիան պատանեկան ճգնաժամի ընթացքի վրա, ավելի կոնկրետ. ճի՞շտ է մեր այն ենթադրությունը, թե որքան ավելի է ճնշված պատանիների ինքնուրույնությունը, այնքան ավելի սուր է ընթանում ճգնաժամը և հակառակը: Նախորդ հետազոտությունների ընթացքում մենք արդեն առանձնացրել էինք ֆրուստրացվածության բարձր, միջին և ցածր մակարդակ ունեցող պատանիներին, ինչպես նաև ճգնաժամի սուր, միջին սրության և մեղմ ընթացք ունեցող պատանիներին, սակայն հետազոտություններն անանուն էին (պատասխանների անկեղծությունն ապահովելու համար) և մենք չէինք կարող համեմատել այդ երկու հետազոտությունների արդյունքները, բացի այդ, ճգնաժամը կարող է սրվել նաև այլ պատճառներով, ասենք, անձի խառնվածքի և բնավորության առանձնահատկությունների, կյանքում տեղի ունեցող սթրեսային իրադարձությունների, լարված ընտանեկան հարաբերությունների հետևանքով, այդ պատճառով մենք ստիպված էինք նոր համեմատական հետազոտություններ անցկացնել: Այդ նպատակով մենք նոր

հարցարան էինք կազմել, որի մեջ միավորել էինք պատանիների ինքնուրույնության պահանջմունքի ֆրուստրացիայի հետազոտման և պատանեկան ճգնաժամի հետազոտման հարցարանները՝ որոշ խմբագրումներով և փոփոխություններով(հանվել են այն հարցերը, որոնք այնքան էլ ինֆորմատիվ չէին ինքնուրույնության ֆրուստրացվածության աստիճանի և ճգնաժամի սրության մակարդակի հետազոտության համար, ինչպես նաև որոշ հարցեր ավելացվել են): Հարցարանի մեջ ճգնաժամի սրությանը և ինքնուրույնության ֆրուստրացվածությանը վերաբերող հարցերը ներկայացվել են խառը: Ստորև ներկայացնում ենք հարցարանը:

**Ինքնուրույնության ֆրուստրացիայի և պատանեկան ճգնաժամի
հետազոտման հարցարան**

1. Գտնում եք, որ դժվար է ինքնուրույն լինել:
2. Ես շատ կուզեի ավելի ինքնուրույն լինել:
3. Գտնում եք, որ պատանեկան տարիքը բարդ, ճգնաժամային շրջան է:
4. Իմ ինքնուրույնությունը կաշկանդված է, քանի որ կյանքի փորձ չունեմ:
5. Ձեր ծնողները սիրում են հուշել ձեզ, թե ինչ պիտի անել:
6. Պատանիների և ծնողների հետ կոնֆլիկտները հիմնականում ինքնուրույնության խնդրի շուրջ են:
7. Ճի՞շտ է, որ Ձեր հիմնական խնդիրներից մեկը շրջապատում ինքնահաստատվելն է:
8. Ես ինձ շատ ավելի երջանիկ կզգայի, եթե ինձ թողնեին ավելի ինքնուրույն լինել:
9. Գտնում եք, որ մեծերը դեմ են, որ պատանիներն ինքնուրույն լինեն:
10. Կարե՞լի է ասել, որ դուք վախենում եք ինքնուրույն լինել:

11. Ճի՞շտ է, որ պատանիները վախենում են հասուն, պատասխանատու կյանքից:
12. Կա արդյո՞ք ձեր մեջ վախ, որ մարդկանց մեջ ձեզ ճիշտ չեք պահի:
13. Ճի՞շտ է, որ պատանիների բացասական ապրումները, դժվարությունները պատանեկան ճգնաժամը մեծապես պայմանավորված է ինքնուրույնության հասնելու խնդրի հետ:
14. Կարելի է ասել, որ դուք բավարար չափով ինքնուրույն չեք, քանի որ ձեր դաստիարակությունը չի նպաստել դրան:
15. Իմ հիմնական դժվարություններից մեկը ճիշտ իդեալներ գտնելն է:
16. Իմ ինքնուրույնությունը հաճախ է ճնշվում և ես դա ծանր եմ տանում:
17. Կա այնպիսի զգացողություն, որ դուք ոչ լիարժեքորեն հասուն եք, ոչ դեռահաս և դա ձեզ տանջում է:
18. Ճի՞շտ է այն պնդումը, որ պատանեկան տարիքի հիմնական խնդիրը ինքնուրույնության հասնելն է:
19. Ճի՞շտ է այն պնդումը, այսօր դեռ ի վիճակի չեք ինքնուրույն ապրել:
20. Ճի՞շտ է այն պնդումը, որ պատանիների ինքնուրույնությունը կաշկանդվում է գումար չունենալու պատճառով:
21. Ճի՞շտ է, որ պատանիների համար դժվար է կյանքում կողմնորոշվել:
22. Ճի՞շտ է, որ դուք ձեզ անինքնավստահ եք զգում:
23. Ճի՞շտ է այն պնդումը, որ եթե ձեզ հնարավորություն տրվեր դուք կկարողանայիք փող վաստակել և միանգամայն ինքնուրույն ապրել:
24. Ճի՞շտ է այն պնդումը, որ պատանիներն ուղղակի բավարար հասուն չեն ինքնուրույն ապրելու համար:
25. Դուք հաճա՞խ եք կոնֆլիկտներ ունենում ծնողների հետ:
26. Թվու՞մ է ձեզ, թե անիմաստ եք ապրում:
27. Ճիշտ է, որ պատանեկան տարիքում դուք ավելի տխուր եք դարձել:
28. Ճի՞շտ է, որ պատանիների համար դժվար է կյանքում սեփական տեղը գտնելը:

29. Ճի՞շտ է այն պնդումը, թե կյանքի բարդությունն է դժվարացնում պատանիների ինքնուրույնությունը:
30. Դուք ձեզ հուսահատված զգու՞մ եք:
31. Դուք ձեզ միայնակ զգու՞մ եք:
32. Ճի՞շտ է այն պնդումը, թե պատանիների ու մեծերի կոնֆլիկտները հիմնականում կապված են ինքնուրույնության խնդրի հետ:
33. Գտնու՞մ եք, որ ձեր տագնապայնությունը բարձրացել է:
34. Դուք զգու՞մ եք ձեզ անօգնական:
35. Ես վախենում եմ հասուն կյանքից, քանի որ ստիպված եմ ինքնուրույն,
պատասխանատու կյանքով ապրել:
36. Երբ իմ ինքնուրույնությունը կաշկանդվում է, ես բացասական ապրումներ եմ ունենում:
37. Ես ինձ կախված եմ զգում իմ ծնողներից:
38. Ես ծանր եմ տանում, երբ մեծերն ինձ չեն հասկանում:
39. Ես անելանելիության զգացում ունեմ:
40. Իմ ամենամեծ խնդիրն այն է, որ գտնեմ իմ իսկական սիրուն ու կյանքի ընկերոջը:

Ինքնուրույնության ֆրուստրացիային են վերաբերում 1, 2, 4, 5, 6, 8, 9, 10, 14, 16, 18, 19, 20, 23, 24, 29, 32, 35, 36, 37:

Պատանեկան ճգնաժամ են բնութագրում 3, 7, 11, 12, 13, 15, 17, 21, 22, 25, 26, 27, 28, 30, 31, 33, 34, 38, 39, 40:


Հետազոտությունն իրականացվել է 2012 թ. Գյումրիի Մ. Նալբանդյանի անվ. Պետական մանկավարժական ինստիտուտի, Գյումրիի «Պրոգրես» համալսարանի բակալավրիատի և մագիստրատուրայի հումանիտար և

բնագիտական ֆակուլտետների 201 ուսանողների հետ (17-22 տարեկան 117 աղջիկ և 86 տղա):

Հետազոտության արդյունքների վերլուծություն

Ինչպես և նախորդ հետազոտություններում առանձնացվել էին ֆրուստրացվածության և ճգնաժամի սրության երեք մակարդակ՝ թույլ (մեղմ ճգնաժամի դեպքում), միջին, ուժեղ (սուր ճգնաժամի դեպքում): Թույլ (մեղմ ճգնաժամի դեպքում) ենք համարել, երբ «ոչ» պատասխանների քանակը 75 կամ ավել տոկոս են կազմել, միջին՝ 26-74 տոկոս և ուժեղ(սուր ճգնաժամի սրության դեպքում), երբ «ոչ» պատասխանների քանակը 25 տոկոսից պակաս է եղել): Հարցման արդյունքները ցույց տվեցին, որ հստակ կորեյացիա գոյություն ունի ինքնուրույնության պահանջմունքի ֆրուստրացվածության մակարդակի և պատանեկան ճգնաժամի սրության միջև. որքան ավելի շատ էին «այո» պատասխանները ինքնուրույնության պահանջմունքի ֆրուստրացիային վերաբերող հարցերում, այնքան ավելի շատ էին նաև «այո» պատասխանները ճգնաժամի ախտանշաններին վերաբերող հարցերում և հակառակը: Քանակային առումով հետևյալ պատկերն էր. 201 ուսանողից ինքնուրույնության ֆրուստրացվածությունը բարձր էր 19 % (38 պատանի) - ի մեջ (15 և բարձր միավորներ): Այս ուսանողներից 16 % -ի (32 ուսանող) մեջ ճգնաժամի սրությունն էլ բարձր էր: Ֆրուստրացվածության միջին մակարդակ ունեին պատանիների 64%-ը (128 պատանի) (5-14 միավոր): Ֆրուստրացվածության ցածր մակարդակ ունեին պատանիների 17%-ը (35 պատանի) (0-4 միավոր), որոնցից 16%-ի(33) մեջ մեղմ էր նաև ճգնաժամի ընթացքը: Ստորև ներկայացնում ենք հետազոտության արդյունքների հիստոգրաման:

Հիստոգրամ 8. Ճգնաժամի սրության և ինքնուրույնության ֆրոստրացվածության մակարդակի կապը



Հետազոտության արդյունքները մենք վերլուծել ենք Պիրսոնի կորելյացիոն վերլուծության մեթոդով, որի արդյունքում ստացել ենք 0.893689 գործակիցը: Հարցման արդյունքների համար նման գործակիցը նշանակում է, որ գոյություն ունի հստակ արտահայտված ուղիղ համեմատական կապ պատանեկան տարիքում ինքնուրույնության ֆրոստրացվածության և պատանեկության ճգնաժամի սրության միջև:

Հարցման արդյունքները ճշգրտելու, ինչպես նաև պատանիների ինքնուրույնության ֆրոստրացվածության և պատանեկան ճգնաժամի սրության միջև կապի բովանդակային կողմը հետազոտելու նպատակով իրականացվել է նաև զրույց:

Զրույցի նպատակն էր պարզել, թե կոնկրետ ինչպես է ինքնուրույնության պահանջմունքի ֆրուստրացվածությունն ազդում պատանեկան ճգնաժամի ընթացքի վրա: Զրույցին մասնակցել են 18-22 տարեկան 27 պատանի(17 աղջիկ, 10 տղա), Գյումրու «Պրոգրես» համալսարանից:

Զրույցն իրականացվել է 2012 թ.

Զրույցը կազմակերպել էինք հետևյալ հարցերի շուրջ. ինչպե՞ս եք գնահատում ձեր ինքնուրույնության մակարդակը՝ բարձր, ցածր, թե միջին, կոնկրետ ի՞նչ եք զգում, երբ ճնշվում է ձեր ինքնուրույնությունը, ինքնուրույնության հարցում հատկապես ի՞նչն է ձեզ ամենաշատը նյարդայնացնում, գտնու՞մ եք, որ եթե ավելի լայն ինքնուրույնություն ունենայիք, ձեր կյանքն ավելի լավ կընթանար, ի՞նչ կապ եք տեսնում պատանեկան տարիքի դժվարությունների և ինքնուրույնության ճնշման միջև, կարող եք նկարագրել ծնողների հետ կոնֆլիկտները, հատկապես նրանք, որոնք կապված են ինքնուրույնության ճնշման հետ, կարելի է ասել, որ եթե պատանիներին լիակատար ազատություն տրվեր, ապա այս տարիքի բոլոր խնդիրները կլուծվեին, միայն ինքնուրույնույն դառնալու դժվարությունների հետ եք կապում այս տարիքի դժվարությունները, թե՞ այլ հանգամանքներ էլ կան, կոնկրետ, որ հարցերում ինքնուրույնության ճնշվածությունն է ամենաշատը դժվարացնում պատանիների կյանքը, ինչպե՞ս եք գնահատում կյանքին հարմարված լինելու ձեր ներկայիս աստիճանը, գտնու՞մ եք, որ ձեր կյանքի այս շրջանը բարդ, դժվարին շրջան է, ի՞նչն է խանգարում ձեզ ավելի ինքնուրույն լինել, ի՞նչ հանգամանքներ են դժվարացնում պատանիների կյանքը, ի՞նչ է անհրաժեշտ, որպեսզի պատանիներն ավելի հաջող հաղթահարեն այս տարիքային շրջանը և այլն:

Հետազոտության արդյունքների վերլուծություն

Զրույցի արդյունքները հաստատեցին հարցման արդյունքները. իսկապես, ինքնուրույնության ֆրուստրացվածության բարձր մակարդակին համապատասխանում է ավելի սուր ճգնաժամը: Հետազոտությանը մասնակցած 27 պատանիներին ըստ ինքնուրույնության պահանջմունքի ֆրուստրացվածության աստիճանի և պատանեկան ճգնաժամի սրության բաժանել ենք երեք խմբի՝ բարձր մակարդակ՝ 7 պատանի, որոնցից պատանեկան ճգնաժամը սուր կարող էր գնահատվել 5-ի մեջ (71%), ցածր մակարդակ՝ 8 պատանի, որոնցից 7-ի մեջ (87%) ճգնաժամը մեղմ էր ընթանում, միջին մակարդակ՝ 12 պատանի, որոնցից 9-ի մեջ (75%) կարելի էր արձանագրել պատանեկան ճգնաժամի միջին ընթացք: Ինքնուրույնության ֆրուստրացիան պայմանավորում է պատանեկան ճգնաժամի մի շարք ախտանշաններ. նախ և առաջ կոնֆլիկտները ծնողների հետ, այսպես կոչված հայրերի և որդիների պայքարը, որոնք հիմնականում պայմանավորված են այն հանգամանքով, որ ծնողները փորձում են ճնշել պատանիների ինքնուրույնությունը՝ պարտադրելով իրենց ճաշակը, արժեքները, կյանքի իմաստի ընկալումը, նրանց փոխարեն որոշումներ կայացնելով, սահմանափակելով նրանց ազատությունը և այլն: Ախտանշանների մեկ այլ խումբ պայմանավորված է ինքնուրույն գոյությանը պատանիների պատրաստ չլինելով, ինքնուրույնության հասնելու, ինքնուրույն որոշումներ կայանացնելու օբյեկտիվ դժվարություններով: Այդ կարգի ճգնաժամային ախտանշաններից կարելի է նշել սեփական գոյության իմաստի շուրջ մտորումները, տագնապները, սեփական տարիքային կարգավիճակից դժգոհությունը, կասկածները սեփական անձի կապակցությամբ: Պատանեկան ինքնահաստատումը շատ դեպքերում հասակակիցների առաջ և սեփական աչքում ավելի ինքնուրույն, անկախ երևալու միջոցով է տեղի ունենում, ասենք, պատանու համար մեծ վիրավորանք է, եթե ծնողը պահանջում է, որ նա շուտ

տուն գա և հպարտություն է, որ ինքը կարող է առանց տան հետ խնդիրներ ունենալու տանը չգիշերել: Զրույցի արդյունքները ցույց տվեցին, որ ինքնուրույնության բարձր մակարդակ ունեցողներն ավելի ինքնավստահ են, ունեն բարձր ինքնագնահատական, ինքնաբավ են, անձնային հասունությունը բարձր է: Ճգնաժամն այս խմբում շատ մեղմ էր(կարելի է ասել բացակայում էր) հատկապես այն պատանիների մեջ, ովքեր աշխատում էին (երեք պատանի), փող էին վաստակում, օգնում էին ընտանիքին: Այս պատանիների դաստիարակության մեջ նկատելի էր երկու միտում՝ բարձրագույնությունը (ծնողներն աշխատում էին և երեխաների վրա ուշադրությունը քիչ էր, ինչի հետևանքով նրանք փոքր հասակից սովոր էին իրենք իրենց հոգ տանել՝ սնվել, հագնվել, դաս սովորել և այլն) և դեմոկրատական ոճը (ծնողներն իրենց երեխաների համար ընկեր էին, խրախուսում էին ինքնուրույն որոշումները, ճնշումներ չեն լինում):

Ինքնուրույնության ցածր մակարդակ ունեցող պատանիներին բնորոշ էր անձնային հասունության ցածր մակարդակը, անինքնավստահությունը, նրանց դաստիարակությունն առավելապես ավտորիտար բնույթ էր կրում: Այս խմբում ճգնաժամը սուր էր ընթանում, սուր են հատկապես կոնֆլիկտները ծնողների հետ:

Ինքնուրույնության և ճգնաժամի միջին մակարդակ ունեցող պատանիների մեծ մասը իրենց տարիքը դժվար չէին համարում, ճգնաժամային ախտանշանները հիմնականում վերաբերում էին կյանքում սեփական տեղը գտնելու որոնումներին, ինքնահաստատվելուն, ինքնուրույն կյանքին նախապատրաստվելուն, հակառակ սեռի հետ հարաբերությունների կառուցման դժվարություններին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ինքնուրույնությունն անձի զարգացումն ապահովող կարևորագույն պահանջմունքներից է, որ սկսում է ի հայտ գալ վաղ մանկությունից: Գոյություն ունի ինքնուրույնության պահանջմունքի հակադիր՝ կախյալության պահանջմունքը:

2. Գոյություն ունեն ինքնուրույնության մակարդակներ, որոնք տարիքային առանձնահատկություններ ունեն, այսինքն անձի զարգացման հետ ինքնուրույնության ավելի ու ավելի բարձր դրսևորումներ ու մակարդակներ են ի հայտ գալիս և ինքնուրույնության պահանջմունքն էլ համապատասխանաբար փոխվում է:

3. Ինքնավարությունը կարելի է դիտել որպես ինքնուրույնության ամենաբարձր և ամբողջական մակարդակ, որին միտված է զարգացման գործընթացը ողջ մանկության շրջանում և որից սկսում է հասունությունը: Ինքնուրույնության պահանջմունքն ինքնավարության ձևով սկսում է ի հայտ գալ 16-17 տարեկանից, իր գագաթնակետին է հասնում 20 տարեկանի շրջանում՝ ապահովելով պատանու անցումը հասունության:

4. Պատանեկան տարիքը ինքնուրույն, առանձին տարիք չէ, այն անցումային, այսինքն միջանկյալ շրջան է, որի ընթացքում անցում է կատարվում դեռահասությունից հասունությանը:

5. Պատանեկան ճգնաժամը ժամանակակից հոգեբանության մեջ ամենաթույլ հետազոտված ճգնաժամերից է, նույնիսկ այս ճգնաժամի ախտանշանները հստակ ուրվագծված չեն: Մասնավորապես հետազոտված չէ ինքնուրույնության պահանջմունքի ֆրուստրացիայի դերը այս ճգնաժամի առաջացման գործում:

6. Պատանեկան ճգնաժամը մեծապես պայմանավորված է այս տարիքում ինքնուրույնության հասնելու օբյեկտիվ և սուբյեկտիվ

դժվարություններով, ինչի հետևանքով ֆրուստրացիայի է ենթարկվում ինքնուրույնության պահանջմունքը:

7. Պատանեկան ճգնաժամը մեղմ է ընթանում այն դեպքերում, երբ ինքնուրույն գոյության անցնելու օբյեկտիվ և սուբյեկտիվ խոչընդոտները տարբեր հանգամանքների բերումով քիչ են կամ հեշտությամբ հաղթահարվում են և հակառակը՝ ճգնաժամը սրվում է, երբ պատանին ի վիճակի չի լինում հասնել հարաբերական անկախության և ինքնավարության:

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ

Մեր հետազոտությունների արդյունքները հնարավորություն են տալիս ծնողներին և պատանեկան տարիքի հիմնախնդիրներով զբաղվող մասնագետներին(հոգեբաններ, մանկավարժներ, հոգեթերապևտներ) մեթոդական որոշ առաջարկներ անել, որոնք կարող են նպաստել պատանեկան ճգնաժամի մեղմմանն ու պատանեկան տարիքի խնդիրների լուծմանը:

1. Եվ ծնողները և համապատասխան մասնագետները պատանեկան տարիքը պետք է ընկալեն որպես ինքնուրույնության հասնելու կարևոր շրջան և ձգտեն կառավարելի դարձնել պատանիների ինքնուրույնության հասնելու գործընթացը: Հակառակ դեպքում և՛ հոգեբանական և՛ սոցիալական ու մանկավարժական առումներով լուրջ խնդիրներ կարող են առաջանալ պատանիների ներհոգեկան ոլորտում և նրանց միջանձնային հարաբերությունների մեջ:

2. Պատանեկան տարիքի այցելուների հետ աշխատելիս մասնագետները պետք է նկատի ունենան այս տարիքի ճգնաժամի հանգամանքը և այն պայմանավորող գործոնները. մասնավորապես՝ ա/ վախը ինքնուրույն, հասուն կյանքից ու հարաբերություններից, բ/ անինքնավստահությունը՝ պայմանավորված տարիքային մարգինալ ստատուսով, գ/ մեծերի, հատկապես ծնողների հետ կոնֆլիկտների պայմանավորվածությունը պատանիների ինքնուրույնության ճնշմամբ:

3. Մանկավարժները, պատանիների հետ աշխատելիս և հարաբերություններ կառուցելիս, պետք է նկատի ունենան պատանու ինքնուրույնության ձգտումը, ինչի ֆրուստրացիան հաճախ է մեծերի հետ պատանիների կոնֆլիկտի պատճառ դառնում: Ըստ էության պատանիների վարքային շատ դրսևորումներ, որոնք սովորաբար դիտվում են որպես

անհարգալից վերաբերմունք մեծերի նկատմամբ կամ բունտ պայմանավորված են նրանց ինքնուրույն, հասուն անձ երևալու ձգտմամբ, և, երբ մեծերը խրախուսում են այդ ձգտումը, ընդունում պատանիներին որպես ինքնուրույն մտածելու, որոշումներ կայացնելու, արժեքներ ունենալու և գործելու իրավունք ունեցող և իրենց հավասար անձիք, ապա վստահելի հարաբերություններ են ստեղծվում, պատանիները հաճույքով են հետևում մեծերի խորհուրդներին:

4. Անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ որքան ավելի է ճնշվում պատանիների ինքնուրույնությունը, այնքան ավելի է սրվում այս տարիքի ճգնաժամը, հետևաբար անհրաժեշտ է հնարավորինս խուսափել պատանիների ինքնուրույնությունը ճնշելուց և առավելագույնս օգնել ու խրախուսել նրանց ինքնուրույնության դրսևորումները:

5. Մեծերի կողմից պատանիների նկատմամբ վստահության ցուցաբերումը մեծապես նպաստում է ինքնուրույնության զարգացմանը և հակառակը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղայան Է. Արդի հայերենի բացատրական բառարան. Ա-Ձ, Եր.1976, 930 էջ.
2. Հակոբյան Ն. Ռ., Մարգինալ անձը և նրա հոգեբանական բնութագիրը // Հոգեբանությունը և կյանքը, 2003, № 3-4: էջ 75-84:
3. Մկրտումյան Մ. Պ., Արտակարգ պայմաններում մարդկանց կենսագործունեություն և հոգեկան առողջության պահպանման առանձնահատկությունները, Երևան, 1999թ., էջ 180:
4. Абульханова-Славская К.А. Деятельность и психология личности. М.: Наука, 1980. - 335 с.
5. Абульханова-славская К. А. Психология и сознание личности. М.: МОДЭК, 1999, 224 с.
6. Абульханова-Славская К.А. Проблема определения субъекта в психологии // Субъект действия, взаимодействия, познания. (Психологические, философские, социокультурные аспекты.– М.: Московский психолого-социальный институт; Воронеж: Изд-во НПО «МОДЭК», 2001.С. 36–52.
7. Ананьев Б.Г. Человек как предмет познания. СПб.: Питер, 2001. — 288 с.
8. Автономия личности // «Энциклопедия «Карьера». Справочник, М., «РТВ»2007.- 288 с.
9. Автономия. <http://ru.wikipedia.org/wiki/%D0%90%D0%B2%D1%82%D0%BE%D0%BD%D0%BE%D0%BC%D0%B8%D1%8F>
10. Агеев В.В., Файзуллина А.К. Психологические особенности развития самостоятельности в онтогенезе. <http://www.ageyev.kz/index.php/2011-06-30-09-16-25/184-2011-07-03-04-46-52>
11. Ахвердова О.А., Гюлушанян К.С., Козлитина О.Н. Психология развития и возрастная психология. Учебное пособие. Часть 1, 2 Ставрополь: Изд-во СГУ, 2003, 206 с.

12. Байярд, Д. Байярд Р. Т. Ваш беспокойный подросток: практическое руководство для отчаявшихся родителей // пер. с англ. Б. А. Орлова. - М.: Академический Проект : Мир, 2003. - 207 с.
13. Баканова А.А. Экзистенциальный аспект преодоления кризисных ситуаций в юношеском возрасте//Безопасность жизнедеятельности - профессия XXI века: проблемы становления и перспективы развития: Сборник трудов Всероссийской научно-практической конференции, Санкт - Петербург, 19-20 ноября 2002 г. - СПб., 2002. С. 82-84.
14. Баранов Е. Г. Формирование самостоятельности личности. // Ежегодник Российского психологического общества: Материалы 3-го Всероссийского съезда психологов. 25-28 июня 2003 года:Т.1. - СПб.: Изд-во С.-Петербур. ун-та, 2003. - С. 289-293.
15. Божович Л. И. Проблемы формирования личности. Избранные психологические труды. - М.-Воронеж, 1997. 351 с.
16. Болотова А.К., Молчанова О.Н. Психология развития. /Под ред. А. К. Болотовой и О. Н. Молчановой. — М: ЧеРо, 2005, 524 с.
17. Быков С.В. Диагностика локуса контроля личности в асоциальных подростковых группах // Психологический журнал. - 2004. - №3. - с.34-43
18. Божович Л.И. Проблемы формирования личности. Избр. Психол. Труды. Воронеж, КАП, 1995, 352 с.
19. Буланова- Топоркова М. В. Педагогика и психология высшей школы: Учебное пособие. - Ростов н/Д: Феникс, 2002. - 544 с.
20. Бюлер Ш. Что такое пубертатный период // Педология юности: Сб. статей: Пер. Г. Аркина; Под ред. проф. И. Арямова. — М; JL: Гос. учеб.-пед. изд-во, 1931. — С. 37—46.
21. Выготский Л.С. Собрание сочинений. т. 4, М. «Педагогика», 1984, 432 с.

22. Воротилкина И.М. Развитие самостоятельности в онтогенезе // Физическая культура: воспитание, образование, тренировка, 2005, №4.- С.16-19.
23. Гоноболин Ф. Н. Психология. М.: Просвещение, 1973, 240 с.
24. Головин С. Самостоятельность. Словарь практического психолога. <http://vocabulary.ru/dictionary/25/word/samostojatelnost>
25. Гаулд Р., Левинсон Д., Вейлант Д., Ступени жизни // Наука и жизнь, 1977, № 2. С. 135–136.
26. Геворкян С. Р. Психологические основы взаимодействий госслужащих в трудных конфликтогенных ситуациях: автореф. дис... д-ра психол. наук: 19.00.03 / Армянский гос. педагогический ун-т им. Х.Абовяна. - Ереван, 2006. - 42 с.
27. Давыдов В.В. Младший школьный возраст как особый период в жизни ребенка. // Психическое развитие младших школьников /Под ред. В. В. Давыдова. М.: Педагогика , 1990,160 с.
28. Дергачёва О. Е. Личностная автономия как предмет психологического исследования. Автореферат дисс. кандидата психологических наук : 19.00.01 М. 2005, 26 с.
29. Двоскин Г. Метод Седоны. Изд.: Попурри, 2006, 412 с.
30. Дмитриев Д.В. (ред.) Самостоятельность. Толковый словарь русского языка : Под. 2003 Астрель, АСТ 1565 с.
31. Донцов Д. А., Донцов А. И., Донцова А. М. Социально-психологическая специфика юношеского (студенческого) возраста. <http://novainfo.ru/socialno-psihologicheskaya-specifika-yunosheskogo-studencheskogo-vozrasta>
32. Джапарова Л. Г. Развитие произвольности и самостоятельности у детей дошкольного возраста посредством использования на занятиях рабочих тетрадей,

http://conf.cpkro.kirov.ru/load/razvitie_lichnosti_uchashhikhsja_i_vospitannikov/razvitie_lichnosti_uchashhikhsja_i_vospitannikov_v_uslovijakh_sovremennogo_obrazovanija/razvitie_proizvolnosti_i_samostojatelности_u_detej_doshkolnogo_v_ozrasta_posredstvom_ispolzovanija_na_zanjatijakh_rabochikh_tetradej/11-1-0-148

33. Елисеев О. П. Практикум по психологии личности. СПб.: Питер, 2001. 560 с.
34. Ерёмченко В. В. Транскультурные особенности самосознания личности с аддиктивным поведением в подростково-юношеском возрасте: дис. ... канд. психол. наук : Москва, 2007, 27 с.
35. Занковский, А. Н. Организационная психология. учеб. пособ. Для вузов. М. :Форум, 2009. 648 с.
36. Зимонина О.В.Организационно- педагогические условия развития самостоятельности у детейподготовительной группы :Дис. ... канд. пед. наук : 13.00.01 : Брянск, 1998, 28 с.
37. Зрибная В.Н. Развитие познавательной сферы личности в раннем возрасте.
http://detsad86.ru/index.php?option=com_content&task=view&id=273&Itemid=61
38. Ильин Е.П. Психология индивидуальных различий. СПб.: Питер, 2004 - 701 с.
39. Калугина Н.Ф. Психологические условия позитивного самоутверждения студентов-будущих журналистов: диссертация... кандидата психологических наук : 19.00.07, Череповец, 2007, 181 с.
40. Карелин А. Большая энциклопедия психологических тестов.- М.: Эксмо, 2007.- 416 с.

41. Карапетян В.С. Экспериментальное изучение самооценки личности с точки зрения концепции Я и психосемантики // Психология 21 столетия Под редакцией Козлова В.В. – Ярославль, МАПН, 2012, с. 208-2011.
42. Кадырова Е.Г. Экзистенциальный кризис юношеского возраста http://www.cmz-alliance.ru/o_centre/publikacii_v_smi/ekzistencialnyj_krizis/
43. Коссаковский А. Психическое развитие личности в онтогенезе. // Психология личности в социалистическом обществе. Активность и развитие личности. – М.: Наука, 1989 – 183 с. – С. 37-67.
44. Кон И. С. Психология ранней юности — М.: Просвещение, 1989. — 256 с
45. Кон И. С. Психология самостоятельности, <http://www.scihealth.ru/zdorovie/53.html>
46. Крайг Г. Психология развития. - СПб.: Питер, 2000. - 992 с.
47. Кулагина И. Ю., Колюцкий В. Н. Возрастная психология: Полный жизненный цикл развития человека. Изд.ТЦ Сфера 2008, 464 стр.
48. Леонтев А. Н. Избранные психологические произведения. Т. 1, М. «Педагогика», 1983, 392с.
49. Ливехуд Б. Ход жизни человека. // Психология возрастных кризисов. Хрестоматия / сост. К. В. Селченков. Минск-Москва: Харвест, 2001, С. 142–194.
50. Мажирина Н., Психологические аспекты детской, самостоятельности, Центр "Азбука для родителей" http://www.roditeli.ua/deti/upbringing_development/child_independence
51. Малкина - Пых И. Г. Возрастные кризисы взрослости. -- М.: Изд-во Эксмо, 2005, 416 с.
52. Малкина - Пых И. Г. Возрастные кризисы. Справочник практического психолога Изд-во: Эксмо, 2005, 896 с.

53. Маркова Ю.А., Мареева Е.Б., Севидова Л.Ю. Социально-психологические и возрастные характеристики периода студенчества // URL: http://www.rmj.ru/articles_7227.htm
54. Моргун В.Ф., Ткачева Н.Ю. Проблема периодизации развития личности в психологии. М., Изд-во Моск. гос. ун-та, 1981. 84 с.
55. Мухина В.С. Детская психология. Учебник для студентов пед. институтов./ Под ред. Л. А. Венгера. - 2-е изд., перераб. и доп. - М.: Просвещение, 1985, 272 с.
56. Мухина В.С. Возрастная психология. Феноменология развития: Изд. Академия, 1997, 496 с.
57. Независимость
<http://magazine.mospsy.ru/dictionary/dictionary.php?term=283>
58. Немов Р. С. Психология образования. 2-е изд. М.: Просвещение: Владос, 1995. 496с.
59. Носко И. В. Психология развития и возрастная психология: учебное пособие. – Владивосток: ТИДОТДВГУ, 2003. – 131 с.
60. Островерх О.С. Учебная самостоятельность и ответственность в младшем школьном возрасте / О.С. Островерх, А.Г. Мокроусова // Материалы 9-й научно-практической конференции «Педагогика развития: ключевые компетентности и их становление». – Красноярск, 2003. – С. 177.
61. Паренс Г. Агрессия наших детей / Пер. с англ. Л.Г. Герцик, А.В. Решетникова. - М.: Форум, 1997. 125с.
62. Практическая психология образования; Учебное пособие 4-е изд. / Под редакцией И. В. Дубровиной - СПб.: Питер, 2004, 592 с.
63. Прыгин Г. С. Психология самостоятельности: Ижевск, Набережные Челны: Изд-во Института управления, 2009. - 408 с.
64. Поливанова К.Н. Психология возрастных кризисов. М.: Академия, 2000, 184 с.

65. Психология человека от рождения до смерти (Психологическая энциклопедия). Под редакцией А. А. Реана, Изд. СПб.: ПРАЙМ-ЕВРОЗНАК , 2002, 656 с.
66. Психология. Учебник. (Под редакцией А. А, Крылова), М.: Проспект, 2000. - 584 с.
67. Ремшмидт Х. Подростковый и юношеский возраст: проблемы становления личности. М., Мир, 1994, 320 с.
68. Самоопределение. <http://letopisi.ru/index.php/%D0%A1%D0%B0%D0%BC%D0%BE%D0%BE%D0%BF%D1%80%D0%B5%D0%B4%D0%B5%D0%BB%D0%B5%D0%BD%D0%B8%D0%B5>
69. Самоопределение. Краткий психологический словарь / Под общей ред. А. В. Петровского и М. Г. Ярошевского; ред. - составитель Л. А. Карпенко.— 2-е изд., расширенное, испр. и доп.— Ростов-на-Дону: «ФЕНИКС», 1998.111 с.
70. Сартан Г.Н. Тренинг самостоятельности у детей М.: ТЦ «Сфера», 2000 128 с.
71. Сафин В.Ф., Ников Г.П. Психологический аспект самоопределения // Психологический журнал, 1984, №4. С. 65–73.
72. Сергеева О.А. Психолого-педагогические условия развития автономии личности в процессе подготовки студентов-психологов: автореф. дис. . канд. псих, наук. Астрах, гос. ун-т.- Астрахань, 2007. 27 с.
73. Смирнов С. Возрастные или экзистенциальные кризисы. <http://smirnov-msk.ru/ekzicrizis/>
74. Слободчиков В. И., Исаев Е. И. Психология человека. Введение в психологию субъективности. Основы психологической антропологии. Учебное пособие для вузов. М.: Школа-Пресс, 1995. С. 384.
75. Солдатова, Е.Л. Психология нормативных кризисов взрослости: Челябинск: Изд-во ЮУрГУ, 2005, 281 с.

76. Солдатова, Е.Л. Структура и динамика нормативного кризиса перехода к взрослости, Челябинск: Изд-во ЮУрГУ, 2007. – 267 с.
77. Смирнягина М.М. Изучение нормативного кризиса перехода к юности // Теоретическая, экспериментальная и практическая психология : сб. науч. тр. – Челябинск : Изд-во ЮУрГУ, 2008. – С. 216
78. Степанов С.С. Популярная психологическая энциклопедия. 2-е изд., испр. и доп. – М.: Эксмо, 2005 - 672 с.
79. Томэ Г. Теоретические и эмпирические основы психологии развития человеческой жизни // Принцип развития в психологии. Под ред. Л. И. Анциферова, М.: Наука, 1978, с. 173–196.
80. Трусова Н.В. Особенности развития первичной профессиональной идентичности в нормативном кризисе перехода к юности. // Вестник Южно-Уральского государственного университета. Серия: Психология, (2010), 27, с. 75-81.
81. Туревская Е.И. Возрастная психология. Тула, 2002, 210 с.
82. Франкл В. Человек в поисках смысла: Сборник / Пер. с англ. И нем. Д. А. Леонтьева, М. П. Папуша, Е. В. Эйсмана. — М.: Прогресс, 1990. 368 с.
83. Худоян С.С. Онтогенетические перестройки самосознания и кризисы развития личности. Ереван, Зангак-97, 2010, 232 с.
84. Цукерман Г.А., Венгер А. Л. Развитие учебной самостоятельности. М.: ОИРО, 2010. 432 с.
85. Циринг, Д. А. Исследование жизнестойкости у беспомощных и самостоятельных подростков // Вестн. Том.гос. ун-та. – 2009. - № 3, С. 336-342.
86. Чиликина И. А. Локус контроля как социально-психологическая детерминанта представлений о лидерских качествах: автореф. дис. ... канд. психол. Наук 19.00.05 / Москва, 2010, 25 с.
87. Шаповаленко И.В. Возрастная психология. М. Изд.: Гардарики: 2007, 352с.

88. Шихи Г. Возрастные кризисы. СПб.: "Ювента", 1999, 436 с.
89. Шпрангер Э. Основные идеальные типы индивидуальности // Психология личности. Тексты / Под ред. Ю. Б. Гиппенрейтер, А. А. Пузырея.— М.: Изд-во Моск. ун-та, 1982. С. 55–59.
90. Штерн В. «Серьезная игра» в юношеском возрасте // Психология подростка: Хрестоматия. - м., 1996. - с. 21 - 22.
91. Эриксон Э. Детство и общество. –СПб.: ЛЕНАТО, АСТ, Фонд "Университетская книга", 1996 – 592 с.,
92. Эльконин Д. Б. Избранные психологические труды. М., 1989, 560 с.
93. Вее Н. Е. The journey of adulthood. N. Y. 1987, 446 p.
94. Bergeson B. Adolescence. <http://www.livestrong.com/article/505614-stages-of-development-in-adolescents/>
95. Bond J., Corner L. Quality of life and older people. Maidenhead : Open University Press, 2004. 131 p.
96. Boeree, C. G. Horney Karen: Personality theories. <http://webpace.ship.edu/cgboer/horney.html>
97. Bowlby J. The growth of independence in the young child. Royal Society of Health Journal, 1956, 76, pp. 587-591.
98. Brezina T. Recognition denial, need for autonomy, and youth violence. New Dir. Youth Dev. 2008, (119), pp. 111-128.
99. Chickering A.W. Education and Identity. San Francisco: Jossey –Bass, 1969, 367p.
100. Chirkov V. Autonomy in Personal and Cultural contexts: (). Culture, personal autonomy and individualism: their relationships and implications for personal growth and well-being. In G. Zheng & K. Leung & J. G. Adair (Eds.), Perspectives and Progress in Contemporary Cross-Cultural Psychology.. Beijing, China Light Industry Press. 2007, pp. 247-263.

101. Cole, L, Hall, I., Psychology of adolescence , 6-th ed, Holt, Rinehart and Winston, New York. 1964, 587 p.
102. Close Families Raise More Independent Adults. ScienceDaily. Retrieved October 22, 2012, from <http://www.sciencedaily.com/releases/2007/12/071205095318.htm>
103. Deci, E.L., Ryan, R.M. Intrinsic Motivation and Self-Determination in Human Behavior. New York: Plenum Press. 1985, 489 p.
104. Deci, E. L. Vansteenkiste M. Self-determination theory and basic need satisfaction: Understanding human development in positive psychology. Ricerche di Psicologia, 2004, 27, pp. 17–34.
105. Frankfurt H. Autonomy, Necessity, and Love // Necessity, Volition, and Love, Cambridge: Cambridge University Press, 1999, pp. 129–141.
106. Hall C. S. Adolescence. Vol.1, 2, 1904, 1905.
107. Hinchman L. Autonomy, Individuality, and Self-Determination // What is Enlightenment? Eighteenth-Century Answers and Twentieth-Century Questions., ed. James Schmidt. Berkeley: University of California Press, 1996, pp. 488-516.
108. Havighurst, R. Developmental Tasks and Education. 3rd ed. New York: David McKay Co Inc; 1972, 175 p.
109. Human Autonomy in Cross-Cultural Context: Perspectives on the Psychology of Agency, Freedom, and Well-Being. Eds.: Chirkov, V. I.; Ryan, R. M. Sheldon K. M. New York, Science + Business Media B.V. 2011, 285 p.
110. Jackson H. H. The awkward age'' <http://www.readbookonline.net/readOnLine/40790/>
111. Kasser V., Ryan R. M. The relation of psychological needs for autonomy and relatedness to vitality, well-being, and mortality in a nursing home // Journal of Applied Social Psychology, 1999, 29, 935–454.

112. Kon, I. S. The psychology of independence.// Soviet Education, 1989, 9. Pp. 57-64.
113. Levinas, E. Totality and Infinity: An Essay on Exteriority. Pittsburgh: Duquesne University Press, 1969, 77 p.
114. Levinson D. The seasons of man 's life. New York: Knopf, 1978, 384 p.
115. Levinson D. The seasons of woman's life. NY: Knopf, 1996, 225 p.
116. Little D. Learner Autonomy : Definitions, Issues, and Problems. Dublin: Authentic, 1991. 175 p.
117. Maslow A.H. Motivation and personality.-N.Y.: Harper, 1954, 411 p.
118. Melrose P. Adolescent suicide // <http://www.paulmelrose.com/adolescent-suicide-a-crisis-of-faith/>
119. Mill J. Stuart. On Liberty, Indianapolis and New York: The Liberal Arts Press, 1956.
120. Murray H.A. Explorations in Personality. Oxford University Press: 1938, 225 p.
121. Lynch, M. Basic needs and well-being: A self-determination theory view. 2010, Retrieved from http://counselingoutfitters.com/vistas/vistas10/Article_70.pdf
122. Neddermeyer D. M., Independence - Creates Self Confidence. <http://ezinearticles.com/?Independence---Creates-Self-Confidence&id=860354>
123. Pejakovic I. Teen Independence: Decrease Rebellion & Increase Self-esteem, & Self-confidenc.<http://www.noomii.com/articles/713-teen-independence-decrease-rebellion-increase-selfesteem-selfconfidence>
124. Pruitt D. Your Adolescent: Emotional, Behavioral, and Cognitive Development from Early Adolescence Through the Teen Years. N.Y. Harper Collins, 2000, 400 p.
125. Ryan, R. M. Self-determination theory and Wellbeing // Wellbeing in Developing Countries (WeD) Research Review 1 – June 2009

http://www.welldev.org.uk/wed-new/network/research-review/Review_1_Ryan.pdf

126. Rotter J.B. Generalized -expectancies for internal versus external control of reinforcement // Psychol. Monographs.–1966.–Vol. 80.–Nº 1.–P. 1–28.
127. Rotter J. B. Hochreich E. J.. Personality. Glenview, IL: Scott, Foresman. 1975, p. 138.
128. Roth, G., Assor, A., Kanat-Maymon, Y., & Kaplan, H. Assessing the experience of autonomy in new cultures and contexts. *Motivation & Emotion*, 2006, 30 (4), 361–372.
129. Rudy, D., Sheldon, K. M., Awong, T., & Tan, H. H. (). Autonomy, culture, and well-being: The benefits of inclusive autonomy. *Journal of Research in Personality*, 2007, 41, 983–1007.
130. Sheehy G. Passages: Predictable crisis of adult life. N. Y., 1976, 462 p.
131. Sen S. Adolescence a period of stress and strain, http://www.psyplexus.com/mhr/adolescence_stress.html
132. Taylor J. Parenting: Raise Independent Children. 2010, The Power of Prime <http://www.psychologytoday.com/blog/the-power-prime/201011/parenting-raise-independent-children>].

ՀԱՎԵԼՎԱԾ

Հավելված 1.

Ջ. Ռոթթերի վերահսկան տեղակայման թեստը

Հրահանգ-«Կարդացեք զույգ պնդումներից յուրաքանչյուրը և որոշեք, թե դրանցից որն է ավելի հիմնավորված: Պատասխանների թերթիկում նշեք ձեր ընտրած պնդման տառը՝ ա կամ բ»:

1. ա/ Երեխաները զանազան պատմությունների մեջ են հայտնվում այն պատճառով, որ ծնողները նրանց հաճախ են պատժում:

բ/ Մեր ժամանակներում երեխաները տիպիկ պատմությունների մեջ են ընկնում հաճախ այն պատճառով, որ ծնողները նրանց շատ մեղմ են դաստիարակում:

2. ա/ Շատ անհաջողություններ ուղղակի բախտը չբերելու հետևանք են:

բ/ Անհաջողությունների պատճառը մարդու, հենց իր կողմից թույլ տված սխալներն են:

3. ա/ Մարդկանց անբարոյական արարքները պայմանավորված են նրանով, որ միջավայրը համակերպվում է դրանց հետ:

բ/ Անբարոյական արարքները եղել են և կլինեն, անկախ այն բանից, թե միջավայրն ինչ ջանքեր է թափում դրանց կանխման ուղղությամբ:

4. ա/ Ի վերջո մարդիկ ստանում են այն ինչի արժանի են:

բ/ Ցավոք, մարդու արժանիքները հաճախ մնում են չգնահատված:

5. ա/ Այն կարծիքը, թե դասախոսները սովորողների նկատմամբ անարդար են՝ ճիշտ չէ:

բ/ Շատ ուսանողներ չեն հասկանում, որ իրենց գնահատականները կարող են պայմանավորված լինել պազմաթիվ պատահական գործոններով:

6. ա/ Ղեկավարի հաջողությունները հիմնականում պայմանավորված են նպաստավոր հանգամանքներով:

բ/ Ընդունակ մարդիկ, ովքեր ղեկավար չեն դարձել, ուղղակի չեն

օգտագործել իրենց հնարավորությունները:

7. ա/ Որքան էլ դուք ջանաք, որոշ մարդիկ ձեր նկատմամբ համակրանք չեն ունենա:

բ/ Նա ով չի կարողացել արժանանալ շրջապատի համակրանքին ուղղակի ուրիշների հետ լեզու գտնելու ընդունակություն չունի:

8. ա/ Մարդու բնավորության և վարքի ձևավորման գործում ժառանգականությունն առաջնային դեր ունի:

բ/ Միայն կյանքի փորձն է որոշում բնավորությունն ու վարքը:

9. ա/ Ես հաճախ եմ համոզվել «Լինելու բանը կլինի» ասույթի ճմարտացիության մեջ:

բ/ Ըստ իս ավելի ճիշտ է որոշում կայացնել ու գործել, քան հույսը դնել ճակատագրի վրա:

10. ա/ Լավ մասնագետի համար նույնիսկ կանխակալ վերաբերմունքով քննությունը խնդիրներ չի հարուցի:

բ/ Նույնիսկ լավ պատրաստված մասնագետը կարող է խնդիրներ ունենալ, եթե քննությունն իրականացվում է կանխակալ վերաբերմունքով:

11. ա/ Հաջողությունը հետևանք է քրտնաջան աշխատանքի և քիչ է պայմանավորված բախտով:

բ/ Հաջողության հասնելու համար կարևոր է պահը բաց չթողնել:

12. ա/ Ցանկացած քաղաքացի կարող է ազդել կարևոր քաղաքական որոշումների վրա:

բ/ Հասարակությունը ղեկավարում են մարդիկ, ովքեր ուղղակի նշանակվել են այս կամ այն պաշտոնին, իսկ հասարակ մարդիկ դժվար թե ինչ-որ բան կարող են փոխել:

13. ա/ Երբ ես ծրագրեր եմ մշակում, համոզված եմ, որ կկարողանամ դրանք իրականացնել:

բ/ Ամեն ինչ չէ, որ իմաստ ունի պլանավորել, քանի որ շատ բան պայմանավորված է հանգամանքներով:

14. ա/ Կան մարդիկ ում մասին վստահորեն կարելի է ասել, որ նրանք լավը չեն:

բ/ Ցանկացած մարդու մեջ կան դրական կողմեր:

15. ա/ Իմ ցանկությունների իրականացումը պատահական հաջողությունների հետևանք չեն:

բ/ Երբ չգիտեն ինչ անել, մետաղադրամ են գցում: Կարծում եմ կյանքում հաճախ կարելի է դիմել այս մեթոդին:

16. ա/ Հաճախ հանգամանքների բերմամբ են մարդիկ պաշտոններ ստանում:

բ/ Ղեկավար դառնալու համար պետք է մարդկանց կառավարել իմանալ, իսկ բախտն այստեղ ոչ մի կապ չունի:

17. ա/ Մարդկանց մեծ մասը չի կարող քիչ թե շատ լուրջ ազդեցություն ունենալ համաշխարհային գործընթացների վրա:

բ/ Հասարակական կյանքին ակտիվորեն մասնակցելով մարդիկ կարող են ազդել համաշխարհային գործընթացների վրա:

18. ա/ Մարդկանց մեծ մասը չի հասկանում, որ իրենց կյանքը մեծապես պայմանավորված է պատահական գործոններով:

բ/ Իրականում այնպիսի երևույթ, ինչպիսին է բախտը գոյություն չունի:

19. ա/ Միշտ պետք է կարողանալ խոստովանել սեփական սխալները:

բ/ Պետք է սկզբունք որդեգրել, չքննարկել սեփական սխալները:

20. ա/ Դժվար է հասկանալ դուր ես գալիս դու դիմացինին, թե՛ ոչ:

բ/ Ձեր ընկերների քանակը պայմանավորված է նրանով, թե որքանով եք կարողանում տրամադրել մարդկանց ձեր նկատմամբ:

21. ա/ Ի վերջո մեր կյանքում տեղի ունեցած բացասական իրադարձությունները հավասարակշռվում են դրական իրադարձություններով:

բ/ Անհաջողությունների մեծ մասը պայմանավորված է համապատասխան ընդունակությունների, գիտելիքների կամ աշխատասիրության բացակայությամբ կամ այդ երեքով միաժամանակ:

22. ա/ Եթե բավարար ջանքեր թափել, ապա կարելի է արմատախիլ անել ձևականությունը և անտարբերությունը:

բ/ Կան երևույթներ, որոնց դեմ դժվար է պայքարել. դրանցից են անտարբերությունն ու ձևավականությունը. դրանք հնարավոր չէ վերացնել:

23. ա/ Երբեմն դժվար է հասկանալ, թե ինչի համար են ղեկավարները խրախուսում այս կամ այն աշխատակցին:

բ/ Աշխատանքային խրախուսանքներն արդյունք են ջանասեր աշխատանքի:

24. ա/ Լավ ղեկավարը սպասում է, որ իր աշխատակիցները որոշեն, թե ինչ են անելու:

բ/ Լավ ղեկավարը հստակ ցուցումներ է տալիս, թե ինչ է պետք անել:

25. ա/ Ես հաճախ զգում եմ, որ քիչ եմ ազդում ինձ հետ կատարվածի վրա:

բ/ Չեմ հավատում, որ պատահական գործոնները և ճակատագիրը կարևոր դեր են խաղում իմ կյանքում:

26. ա/ Մարդիկ միայնակ են այն պատճառով, որ բարեհամբույր չեն իրենց շրջապատի հանդեպ:

բ/ Անիմաստ է խիստ ջանքեր թափել մարդկանց քո հանդեպ տրամադրելու համար, հավանողն առանց դրա էլ կհավանի քեզ:

27. ա/ Մարդու բնավորությունը հիմնականում պայմանավորված է նրա կամքով:

բ/ Մարդու բնավորությունը հիմնականում ձևավորվում է կուլտիտիվում:

28. ա/ Այն ինչ ինձ հետ կատարվում է իմ ձեռքի գործն է:

բ/ Երբեմն ես զգում եմ, որ կյանքն ընթանում մի ուղիով, որն իմ կամքից անկախ է:

29. ա/ Ես հաճախ չեմ կարողանում հասկանալ, թե ինչու են ղեկավարները վարվում այսպես և ոչ թե այնպես:

բ/ Ի վերջո կազմակերպության վատ կառավարման համար

պատասխանատու են հենց իրենք աշխատակիցները:

Հավելված 2.

Հրահանգ հետազոտվողներին. «Ուշադիր կարդացեք հարցերը և ընտրեք պատասխաններից որևէ մեկը՝ առնելով այն(ա/, բ/ կամ գ/) շրջանակիր մեջ»

1. Դպրոցն ավարտելուց հետո ինչպես էիք կատարել աշխատանքի կամ մասնագիտության ընտրությունը:

ա/ Ինքնուրույն եք ընտրել՝ հաշվի առնելով սեփական նախասիրությունները, ընդունակությունները:

բ/ Հետևել եմ ծնողներիս, հարազատներիս խորհուրդներին:

գ/ Հաշվի եմ առել մոտ մարդկանց խորհուրդները:

2. Ում վրա էիք ձեր հույսը դրել, երբ ընդունվում էիք բուհ:

ա/ Միայն սեփական ուժերիս:

բ/ Ընդունելության քննությունների ժամանակ բախտս բերելու:

գ/ Ծանոթություններիս:

3. Ուսման ընթացքում ինչպես էիք դուք պատրաստվում քննություններին, պարապմունքներին:

ա/ Հիմնվում էի իմ աշխատասիրության վրա:

բ/ Երբեմն դիմում էի ընկերներիս կամ դասախոսների օգնությանը:

գ/ Միշտ ապավինել եմ ուրիշի օգնությանը:

4. Ինչպես եք դուք պատրաստվում ընդունվել(կամ ընդունվել եք) աշխատանքի:

ա/ Ուր որ կուղարկի բուհը:

բ/ Կօգտվեմ ծանոթներիս, բարեկամներից խորհուրդներից:

գ/ Ծանոթներիս օգնությամբ կընդունվեմ աշխատանքի:

5. Բարդն իրավիճակներում ինչպես եք որոշումներ կայացնում:

ա/ Միայն սեփական գիտելիքների և կյանքի փորձի վրա եմ հիմնվում:

բ/ Երբեմն խորհրդակցում եմ ընկերներիս հետ:

գ/ Միշտ խորհրդակցում եմ մոտ մարդկանց հետ:

6. Ինչպես կորոշեք(կամ որոշել եք)՝ ամուսնանալ, թե՛ ոչ:

ա/ Վերջնական որոշումը ես կկայացնեմ:

բ/ Հաշվի կառնեմ մոտ մարդկանց կարծիքները:

գ/ Կներկայացնեմ ընտրյալիս իմ հարազատներին, բարեկամներին՝ կխորհրդակցեմ նրանց հետ:

7. Ի վիճակի եք դուք միայնակ այնպիսի կարևոր որոշումներ կայացնել ինչպիսիք են տուն կամ կահույք գնելը, այլ կարևոր որոշումներ կայացնելը:

ա/ Այո:

բ/ Իհարկե կարող եմ, բայց ավելի ճիշտ է խորհրդակցել մեկի հետ:

գ/ Ոչ:

8. Ինչ համառությամբ էիք դուք պաշտպանում ձեր տեսակետները դեռահասության տարիքում:

ա/ Միշտ պաշտպանել եմ իմ տեսակետը և այդ պատճառով կոնֆլիկտներ եմ ունեցել ծնողների հետ:

բ/ Պաշտպանել եմ իմ տեսակետը, բայց հարգել եմ նաև ծնողներիս տեսակետը:

գ/ Չէի կարողանում պաշտպանել իմ տեսակետը:

9. Այսօր դուք ինչ համառությամբ էք պաշտպանում ձեր տեսակետները տանը, աշխատանքի վայրում, ընկերական միջավայրում:

ա/ Անկախ ամեն ինչից ես իմ տեսակետը պաշտպանում եմ:

բ/ Հիմնականում պաշտպանում եմ իմ տեսակետը:

գ/ Հազվադեպ եմ պաշտպանում իմ տեսակետը:

10. Որպես անձ ինչպես եք դուք գործում մտավոր ոլորտում, կարիերայի մեջ, մարդկանց հետ հարաբերությունների մեջ:

ա/ Ես ինձ լրիվ նվիրում եմ աշխատանքիս:

բ/ Ձեր համար շատ կարևոր է ձեր հարազատների տեսակետը:

գ/ Դուք լիովին հիմնվում եք ձեր հարազատների տեսակետի վրա:

11. Եթե դուք տեսնում եք, որ ձեր մոտ մարդիկ սեփական առողջությանը վնասող բաներ են անում, ապա.

ա/ Ստիպում եք այդ մարդուն, որ վերջ տա իր վատ սովորություններին:

բ/ Քաղաքավարի ձևով կզգուշացնեք նրան:

գ/ Դուք ասում եք նրան այդ մասին, բայց դա արդյունավետ չի լինում:

Հավելված 3.

Տարբեր ոլորտներում պատանիների ինքնուրույնության հետազոտման հարցարան(Ս. Խուդոյան)

Հրահանգ հետազոտվողին. «Կարդացեք ստորև ներկայացված պնդումները, եթե համաձայն եք, խաչով(գումարածի նշանով) նշեք տվյալ պնդումը, իսկ եթե համաձայն չեք, գծիկով(հանածի նշանով) նշեք պնդումը»:

1. Ես ճիշտ եմ համարում ծնողներից առանձին ապրելը:
2. Ես ինձ համարում եմ ինքնուրույն, անկախ մարդ:
3. Զանազան հարցեր լուծելիս ես առաջին հերթին իմ ուժերին ու հնարավորություններին եմ ապավինում:
4. Ես սիրում եմ իմ տեսակետն արտահայտել տարբեր հարցերում և պայքարել այդ տեսակետի համար:
5. Աշխարհի, կյանքի մասին իմ պատկերացումները հաճախ տարբերվում են իմ ընկերների ու հարազատների պատկերացումներից:
6. Ես կարող եմ մենակ ապրել նույնիսկ անմարդաբնակ կղզում:
7. Ես կարող եմ գումար վաստակել:
8. Ինձ վերաբերող ամեն ինչ ինքնուրույն եմ ընտրում ու գնում:
9. Մենակությունն ինձ չի վախեցնում:
10. Ես կարող եմ ինքնուրույն տնտեսություն վարել(սնունդ պատրաստել, վճարել տան վարձերը, տանը մաքրություն պահպանել և այլն):
11. Ծնողներիս ցուցումները ես լսում եմ, բայց ինքս եմ որոշում ինչպես վարվել:
12. Ծնողներս ինձ վստահում են:
13. Ինձ դուր է գալիս անկախ ու ինքնուրույն լինել:
14. Իմ անկախությունն ու ինքնուրույնությունը ուրիշները չեն կարող ճնշել:

15. Իմ շրջապատում ինձ ինքնուրույն ու անկախ մարդ են համարում:
16. Ես պատասխանատու մարդ եմ:
17. Ես հեշտ եմ որոշումներ կայացնում:
18. Քիչ մարդիկ կան ումից ես կախվածություն եմ զգում:
19. Ես շատ վաղ եմ աշխատել ու իմ գլուխը ինքնուրույն պահել:
20. Իմ մասնագիտությունն ինքնուրույն եմ ընտրել: